



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

3290 3292

491-99-8

u-70

**H. M. SETIAN**  
PAPETERIE ET ATELIER DE RELIURE  
CONSTANTINOPLÉ  
Tchakmakdjilar Yokouch



Կ-Կ. Կ 60

0.5

7

150

766

392

ՀԲՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ

491.99-8

Ա-70

Կ

Ա Ռ Ա Ջ Ի Ն

# Ը Ն Թ Ե Ր Յ Ա Ր Ա Ն



(ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՀԱՄԱՐ)



ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԴԱՍՏԻՍԱԿՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈԼԻՍ

Հ. ՏԵՐ-ՆԵՐՍԷՍՅԱՆ

1905



Համարագրություն

Տիպեր

11950-44

Printed in Turkey

### ՅԱՐԱՋԱԲԱՆ

Բարիքին պայծառ գաղափարը՝ շղան առնելու է դպրոցին ուսուցման մեջ: Բայց վերացեալ գաղափարը ուղղակի ցտեղե մարդու վարձուցման վրայ, գաղափարը ոյժ մըն է՝ որ զգացման վերջին վերջ միայն կ'ազդէ: Ս.Ն. ասեմն է ինչպէս կ'ըսէ Բաաֆայ, նեմարտուրի կը զիտնանք ո՛չ միայն բանակաւորութեամբ այլ արտով:

#### ԼԷՈՆ ՊՈՒՐԺՈՒՍ.

Ճրանսայի նախնային հանրային կրթութեան նախարարի մը, Պ. Լեոն Պուրժուա ի այս խօսքերը կ'արժէ որ իբր նշանաբան ծառայեն շրոյց դաստիարակութեան ձգտող ամեն զբոյժի ու շահեբերու: Այդ խօսքերը ըսուած են ինը տարի առաջ, կրթական հանդէսի մը միջոցին, եւ ընկերացած են ուրիշ ոչ նուազ իմաստալից խօսքերու՝ զորս քաղուածաբար մեջ կը բերենք հոս. — «Դաստիարակութիւնը պէտք է ձգտի զարգացնելու ո՛չ միայն բարիքն եւ չարիքն գաղափարը, այլ զգացումը: Բարեբար յոյզերու մշակութիւնը նպասակ առնելու է իրեն՝ երբ կ'ուզէ ազդեցիկ եւ բեղմնաւոր ըլլալ: Հանդիման, փորձութեան եւ կրթին պատկերին դէմ հանելու է բարիքն պատկերը, բարիքն յուզումը, կիրքը. «Կիրք մը, ըսած է Սքինոզա, ներհակ է աւելի ուժով կիրքով մը միայն կրնայ յաղթուիլ: Բայց որպէս զի բարիքն այդ կիրքը ամենեւն աւելի զօրաւորը ըլլայ բարոյական ամեն նգնաժամերու մեջ, եր-

معارف عموميہ نظارہ جليلہ سنك في ۱۲ نيسان ۳۲۱ تاريخي  
و ۷۳ نومروني رخصتنامه سيلاه طبع اولتمشدر



114  
39

2010

2002

կարատեւ պատրաստութիւն եւ առօրեայ վարժութիւն պէտք է: Ասով է ո՞ր բարիին ձգտումը մեր մեջ պիտի հաստատուի, եւ բարի գործը ինքնաբերուի կերպով պիտի ծնի»: Պ. Պաւլոսայի նախորդը՝ Պ. Լեկ, իրմէ տարի մը առաջ դարձեալ կրթական հանդեսի մը առթիւ նոյն-իմաստ խօսքերով գնահատած է բարոյական դաստիարակութիւնը. «Կրթութեան գեթագոյն նպատակը միմիայն գրական պերնախօսութիւն, արուեստի դաւանանք, ձեւի հոգածութիւն ըլլալու չէ. դասական ուսումները իրենց նպատակին հասած չպիտի ըլլային, երբ լաւ մտածելու եւ խօսելու հետ միանգամայն լաւ գործել չտրվեցնէին: Ուսումը պէտք է որ բարոյապէս ամուր մտեր ձեւէ եւ մարդիկ պատրաստէ: Բարոյական ուսուցումը հզօր կազդուրիչ մը պիտի ըլլայ, առողջութիւն պիտի տայ պղտոր մտերուն, պիտի երիտասարդացնէ արտերը եւ ոգեւորէ ներքին կեանքը»: Դարձեալ նոյն հանդեսին առթիւ, Լաֆանալ Լիսէին նարտասանութեան ուսուցիչը՝ Պ. Ռոշպլավ հետեւեալ խօսքերով սահմանած է կրթութեան գործին բարեօրոյութիւնը. «Ուսուցումը զուտ գրական սահմանէն ելլելով, անզգալապէս դէպի բարոյականի սահմանը կը մտնէ. եւ իցի՛ւր քէ այն տեղ հաստատուի ամուր կռուաններու վրայ: Չէ՞ մի որ հիմայ ուսուցչին աւագ պատրաստութիւնը ըլլալու է տղոց մեջ գրգռել առաքինի գործերու փառասիրութիւնը, վարձուցիչ իտեալ մը ներշնչել անոնց. մէկ խօսքով՝ ստեղծել ներքին կեանքը որ պիտի ներգործէ արտաքին կեանքին վրայ, եւ զայն իրեն համեմատ պիտի ձեւէ: Այսօր՝ ուսուցչին դերն է իր դասաւանդութեան հիմք բռնել սկզբունք մը, ուսկից բարոյական կեանքը նառագալքէ իբր հնոցէ մը, եւ այդպէս աշխատիլ տնտեսական բարձրացման»:

Բոլոր այս խօսքերը միակ նպատակի մը կը ձգտին, այսինքն՝ տղոց նկարագրին կազմութեան խնդրին: Այդ կազմութիւնը դպրոցէն պէտք է սկսի, նոյն իսկ դպրոցական շրջանին առաջին տարիներէն, երբ տակաւին տղոց միտքը բարձր է եւ ընդունակ իւրացնելու ամեն լաւ քելագրութիւն, ինչպէս նաեւ ամեն գեշ քելագրութիւն: Այդ առաջին օրերէն պէտք է աշխատիլ տղոց մեջ կազմելու ներքին մարդը: «Մարդս, ընկերութեան որ դասակարգին ալ պատկանի, մտաւորական ի՛նչ զարգացում ալ ունենայ, նիւրական ի՛նչ դիրքի կամ կարողութեան տէր ալ ըլլայ, ունի հոգեկան եռութիւն մը, ներքին անձ մը որ իրապէս բուն իսկ իր արժանիքը կը ներկայացնէ: Մարդկութեան համար այնչափ կարեւոր չէ գիտնալ քէ այսինչ անձը ազնուական ծագում ունի՞ քէ ոչ, հարուստ է քէ ոչ. բայց շատ կարեւոր է գիտնալ քէ ի՛նչ է անոր հոգեկան արժանիքը, ներքին մարդը: Այդ ներքինը որ բուն մարդը իր նշանակութեամբ կը ներկայացնէ, կը կոչուի նկարագիր <sup>(1)</sup>»: Ասիկա մեկնակէտ մըն է՝ ուրիշ նամբայ ելլելով կարելի է շատ շօտափելի արդիւնքներ ձեռք բերել տղոց հոգւոյն կազմութեան ու բարձրութեան տեսակետով: «Նրէ աղտաւորութիւնը ժառանգութիւնդ է, բայց է մասնագիր մը, նայէ որ առաքինութիւնը դրամագրուիլդ ըլլայ»: Ամեն մարդ հարուստ չի ծնի, բայց ամեն մարդ կրնայ առաքինի ըլլալ: Եւ առաքինութիւնը յաճախ յաջողութեան շահ աւելի էական միջոց մըն է քան հարստութիւնը: Անզգիտացի ուսուցչապէտ մը՝ Պ. Պիեֆ՝ երիտասարդներու

(1) «Ինքնօգնութեան դասը». — Թարգ. Ա. Կ. Սէքլէմանի (Այս յառաջաբանին կարգ մը մատերուն պատրաստութեան առթիւ մենք շատ օգտուած ենք այդ գրքին «Նկարագիր» հատուածէն:

ուղղուած նառի մը մեջ կ'ըսէ. «Միակ պիտանին ոչ դրամն է, ոչ զօրութիւնը, ոչ հանճարը, ոչ համբաւը, ոչ նոյն իսկ առողջութիւնը, այլ *նկարագիրն է* միայն պիտանին, անբիծ եւ անբասիր նկարագիրը որ կրնայ մեզ մարդ ընել»: Մարդուն արտաքին երեւոյթը, ինչպէս ըսուեցաւ, շատ բան չարժեք. ներքին երեւոյթն է որ զինքը մեծ կամ փոքր, պաշտելի կամ արհամարհելի ցոյց պիտի տայ իր նմաններուն: Հարուստ կրնայ շատ շողոզուուն, շատ պերն ու գեղեցիկ արտաքին երեւոյթ մը ունենալ. բայց երբ իր ներքին երեւոյթով աղքատ է, այսինքն՝ երբ առաքինութիւն, բարոյական յասկութիւններ չունի, իսկոյն արհամարհելի կը դառնայ, կը պզտիկնայ մարդոց աչքին, որովհետեւ իր շողոզուուն, պերն ու գեղեցիկ արտաքին երեւոյթը երբեք չի կրնար մարդոց աչքերէն ծածկել այդ ներքին քերութիւնները: Նմանապէս՝ երբ աղքատ լաւ նկարագիր ունի, իր արտաքին խեղճ ու ուրումելի երեւոյթը արգելք մը չըլլար որ մարդիկ չի տեսնեն իր ներքին արժեքը: Ինչպէս որ պղինձը երեւան կ'ելլէ՝ նոյն իսկ երբ ոսկի ջնարակ մը անցուած ըլլայ իր վրայ, այնպէս ալ լաւ յասկութիւններով սնած սիրտ մը կը յայտնուի՝ նոյն իսկ երբ անհրապոյր ու ողորմելի ցնցոտիներ ծածկեն զայն: Եւ ինչպէս որ մարդիկ կ'արհամարհեն հարուստ՝ երբ անոր փայլուն արտաքին երեւոյթին տակ լաւ նկարագիր մը չեն գտներ, այնպէս ալ կը համակրին ու կ'օգնեն աղքատին, կը պաշտպանեն զայն՝ երբ անոր խեղճ երեւոյթին տակ ազնիւ նկարագիր մը կը տեսնեն:

Այս բարոյական սկզբունքը պէտք է թելադրել շրուն, եւ աշխատիլ որ անոր կեանքին գլխաւոր թելադրիչն եւ ռահմիւրան ըլլայ անիկա, պէտք է անոր ստրկեցնել թէ «Ընտիր նկարագիր ունենալը անհրաժեշտ պարտք մըն է,

որով չի կրնար խոյս տալ մինչեւ իսկ երբ ուզէ: Մարդ անպատեհաւ ստիպուած չէ հարուստ ըլլալ. ուզէ կ'ըլլայ, չուզէ չըլլար. բայց իր աւագ պարտականութիւնն է անբասիր նկարագրի մը տես ըլլալ: Հակառակ պարագային, Աստուծոյ իրաւունքը յափճակած, եւ թէ՛ ինքզինքը թէ՛ մարդկային ընկերութիւնը խաբած կ'ըլլայ: Այս պարտականութիւնը այնչափ գործնական եւ բանաւոր է որ ամենայնեւն աղքատը եւ ամենազէտ անձը կրնայ կատարել զայն: Ամենեւն վաստակող եւ հիւանդկախ մարդը ամենեւն զօրաւորին եւ առողջին չափ, եւ թերեւս ա՛լ աւելի դիւրութիւն ունի ընտիր նկարագիր մը կազմելու<sup>(1)</sup>»: Պէտք է տակաւին անոր ստրկեցնել թէ «սակի դրամագլուխը մինչեւ իսկ առեւտուրի մեջ հանրութեան վաստակները ապահովելու չի բաւեր, եւ թէ իր գլխաւոր դրամագլուխը միշտ իր նկարագիրը պիտի ըլլայ: Դրամական կարողութենէ շատ վեր, շատ արժեքաւոր դրամագլուխ մը պէտք է՝ որ հասարակութիւնը ստիպուած, վարպետողութեան եւ ուրիշ կերպ կերպ խաբեբայութեանց դէմ ապահովէ: Ընտիր նկարագիրն է այդ դրամագլուխը, այդ երաշխաւորութիւնը: Աղէկ անունը մեծ հարսութենէ մը աւելի ընտրելի է<sup>(2)</sup>: Ֆրանսական առածը կ'ըսէ. — «Աղէկ անունը ոսկի գօտիէն աւելի լաւ է:»

\* \* \*

Ներկայ գործին հետապնդած գլխաւոր նպատակը բարոյական դաստիարակութիւնն է, հետեւաբար՝ նաեւ նկարագրի կազմութիւնը: Մեր ջանքը եղած է բարի, պատրաստանայ ու պատուաբեր անհասներու պատրաս-

(1) «Ինքնօգնութեան դասեր»:

(2) Նոյն գործ:

սուրբեան գործին մասնակցիլ որոշ չափով մը, եւ դիտմամբ մեր այս մասնակցութեան իբր միջոց ընտրած ենք ընթերցանութեան դասագրքի ձեւը, որովհետեւ ընթերցանութիւնը տղոց ամենէն սիրելի ու դիւրահաղորդ դասը ըլլալով, առաւելապէս այդ նամբով կատարուած աշխատութիւնը միշտ անվրիպելի կերպով լաւ արդիւնք կուտայ: Տղոց յատուկ ընթերցանութեան գիրքեր հազուագիւտ չեն մեր մեջ, բայց գրքեր ամենքն ալ տարբեր ծրագիրով մը պատրաստուած են, տարբեր մտածման մը արդիւնքն են: Անոնք կա՛մ աւելի իրագիտութիւն, կա՛մ աւելի աշխարհագրութիւն, կամ աւելի պատմութիւն, կա՛մ աւելի գիտական դասագիրք են քան բարոյական դաստիարակութեան նպատակ տար: Բարոյական ուսուցումը՝ ուրիշ կը բոլորի նկարագրի կազմութիւնը, երկրորդական տեղ մը գրաւած է անոնց մեջ, եւ անոր տեղ յատուկ գուրգուրանքով ու խնամով ներկայացուած են ուսուցման ուրիշ առարկաներ, որոնք արդէն մասնաւոր կերպով կ'աւանդուին ամէն վարժարանի մեջ եւ ամէն տարիք տղոց: Այսպէս՝ տղաք առ իբր ունին, գործինակ իրագիտութեան, աշխարհագրութեան, պատմութեան եւ կամ գիտութեան դասեր առնելու: Հետեւաբար՝ անհրաժեշտ պէտք չկայ անոնցմով խնդրելու ընթերցանութեան դասագիրքերը՝ (ի հարկէ միջին դասընթացքի համար) որոնք առաւելապէս բարոյագիտութեան կը պատշաճին, եւ վեճական կերպով մը կրնան դիւրացնել տղոց նկարագրին կազմութեան փափուկ ու դժուարին գործը:

Մենք յաւակնութիւն չունինք քէ կատարեալ գործ մըն է մեր ներկայացուցածը: Այս աշխատասիրութեան բովանդակ արժանիքը իր ձգտումն է միայն, եւ ուրիշ

ամէն բանէ աւելի՛ այդ ձգտումին գեղեցկութիւնը ու օգտակարութիւնն է պատճառը՝ երբ կը համարձակինք զայն հրատարակել: Մենք կը յուսանք որ մեր հետապնդած շինիչ ու բարեար նպատակը նկատի առնելով, ներողամտութեամբ պիտի դիտուին այն բոլոր կարելի եւ ակամայ քերութիւնները, որոնց ենթակայ կը մնայ արդէն ամէն նոր փորձ, մասնաւորաբար մեքի գործունեութեան արահետներուն մեջ: Այս գործը նոր է իր ծրագրով: Անոր կազմութեան առթիւ՝ մենք ոչ հայերէն ոչ ալ եւրոպական ո՛րեւէ լեզուով հրատարակուած դասագիրք ունեցած ենք մեզ առաջնորդ: Եւ անուշտ կը հասկցուի քէ շատ դիւրին գործ մը չէ եղած այդ կազմութիւնը: Մենք, մեր ծրագրին յարմար նիւթեր գտնելու համար, չենք ընկրկած ո՛րեւէ դժուարութեան հանդէպ, երբեք ենք ուրսունական բուականներէն մինչեւ այսօր հրատարակուած հայ քերքերու հաւաքածոները, ինչպէս նաեւ բազմաթիւ օտար հեղինակութիւններ, եւ ինչ որ պակաս է մեզի՛ լրացուցած ենք անհպ հաստատներով. իսկ ոտնաւորներու քերին ալ ամբողջացուցած ենք շնորհիւ Ադեմ. Էֆենի Փանոսեանի (Ալիապլան) որ գնահատելի բարեացակամութեամբ մը յանձն առաւ բազմաթիւ սիրուն ու նպատակայարմար կտրիւներու պատրաստութիւնը:

Մենք մեր կողմէ ջանք չենք ինչպէս նաեւ ուսուցչին գործը դիւրացնելու համար: Կրնանք ըսել քէ նոյն իսկ ուրիշ ամէն դասագիրքէ աւելի դիւրութիւններ կ'ընծայէ այս գործը ուսուցչին: Ինչպէս կը տեսնուի, գրքին առաջին մասը կը բաղկանայ վեց ընդհանուր դասերէ. (1. Կատարեալ մարդը: 2. Կեանքի գործածութիւնը: 3. Խիղճը: 4. Իտեալը: 5. Ժամանակին յարգը:



6. *Ընսանիք*) որոնց մեջ խսուցուած են բարոյական դաս-  
 տարակուրեան հիմնաւոր պայմանները, եւ որոնցմէ  
 մեկուն կամ միւսին հետ անմիջական առնչութիւն ու-  
 նին յաջորդ մասերուն մեջ անփոփոխուած դասերը: Երկ-  
 րորդ մասը նուիրուած է մարդկային ամենամեծածես  
 եւ անխուսափելի պարտաւորութեանց (1. *Ասուած*:  
 2. *Կրօնք* եւ *Եկեղեցի*: 3. *Օրէնք*: 4. *Մենդասիրտք*:  
 5. *Գրաստութիւն*: 6. *Բարեգործութիւն*: 7. *Իրերասիրտ-  
 քիւն*: 8. *Երաստագիտութիւն*: 9. *Անձնուիրտքիւն*: 10.  
*Չոհողութիւն*): Երրորդ մասը հաշիւի մըն է այն գլխա-  
 ւոր առաքինութեանց՝ որոնք պէտք է տղուն ներարկուին  
 նոյն իսկ պզտիկ տարիքէն (1. *Համբերութիւն*: 2. *Աշ-  
 խասութիւն*: 3. *Յարստեւորութիւն*: 4. *Ուսմունք* եւ *Չար-  
 գացում*: 5. *Բարեխաւութիւն*: 6. *Համեստութիւն*: 7.  
*Քաղաքագիտութիւն*: 8. *Մաքրութիւն* եւ *առողջապահու-  
 քիւն*: 9. *Զբօսանք* եւ *հանոյք*): Իսկ չորրորդ եւ վերջին  
 մասին մեջ ներկայացուած են կարգ մը գեշ ունակու-  
 քիւններ որոնց տղան անխուսափելիօրէն պիտի հանդիպի  
 դպրոցական գրասեղաններու վրայէն եւ որոնցմէ զգու-  
 շացնելու համար ամեն ջանք ի գործ դնելու ենք: (1.  
*Ծուրրութիւն*: 2. *Զարութիւն*: 3. *Ստախտութիւն*: 4. *Նա-  
 խանձ*: 5. *Կեղծիք*: 6. *Անձնասիրտքիւն*: 7. *Սնայառու-  
 քիւն*: 8. *Ծաղրանք*: 9. *Շողոմորդութիւն*: 10. *Գեշ ընկե-  
 րակցութիւններ*): Դասերուն այս մեթոտիկ կարգաւորումը  
 մեծ դիւրութիւններ կ'ընծայէ ուսուցչին. գիրքը՝ աշա-  
 կերտին համար ուսուցիչայ մը ըլլալուն չափ ուղեցոյց  
 մը կը դառնայ նաեւ իրեն համար: Այդ կարգաւորման  
 շնորհիւ՝ ուսուցիչը գիտէ թէ ուրկէ՝ պիտի սկսի, ի՞նչ  
 պիտի ընէ, ի՞նչ համբով պիտի հետապնդէ զբնիւն ոգին  
 աշակերտին ներարկելու նպատակը: Իւրաքանչիւր դաս

ունի ոսանաւոր մը եւ երկու արձակ գրուածքներ որոնք,  
 առանց բացառութեան դասին իմաստը կը բացատրեն  
 ու դիւրամբօնելի կը դարձնեն աշակերտին, ընդհանրա-  
 պէս հասնելի, շատ անգամ զբօսուցիչ եւ գրեթէ միշտ  
 հրահանգիչ եղանակով մը: «Բարիին գաղափարը մտքին  
 պայծառ ցոյց տալու համար, հազար ու մէկ օրինակներ  
 տղոց եւ երիտասարդներուն առիթ տալու է զայն  
 վերլուծելու եւ նշելու, ըսած է Պ. Լեոն Պուրժուա իր  
 վերոյիշեալ բանախօսութեան առթիւ: Զգացման մշա-  
 կութիւնն ալ միեւնոյն համբերատար ու հաշտուած  
 դուրսեմբ շարունակուելու է. զգացումները մասադ  
 տարիքէն կ'արթնան. այն ասեմ է որ իրենց բովանդակ  
 բարձրութիւնն ու հիւրը ունին, եւ կրնան ամբողջ եւ-  
 րեան մեջ յառաջ բերել այն խոր ու սեւական շար-  
 ժումները որոնք կ'եմանք մը ուղղութիւնը կուտան: Այս  
 նպատակին հասնելու համար որքան օգտակար են  
 այն բարիի ու չարի տեսարանները՝ որոնք մարդիկը  
 կը շրջապատեն ամեն տեղ»: Մենք այս ոգով ընտրած  
 ենք իւրաքանչիւր դասի յատկացուած կտորները: Աշա-  
 կերտը միշտ օրինակներ պիտի ունենայ այժի առջեւ,  
 իրեն աւանդուելիք առաքինութեանց եւ կամ այն յոռի  
 ունակութեանց մասին՝ որոնցմէ հեռու մնալ պիտի  
 յանձնարարուի իրեն: Ուրեմն ուսուցչին գործը կը դիւ-  
 րանայ նաեւ անով մանաւանդ որ միայն չոր ու ցա-  
 մաք բեղադրութիւններ եւ կամ քաղցներ չպիտի գտնէ  
 այս գրքին մեջ, հետեւաբար՝ չպիտի ստիպուի այդ քե-  
 լադրութիւններն ու քաղցները հասկնալի դարձնելու  
 համար իր կողմէ օրինակներ յղանալու եւ զանոնք տղոց  
 ներկայացնելու: Ոչ նուազ գնահատելի դիւրութիւն մը  
 պիտի ընծայեն նաեւ այն «Գեղեցիկ կտորներ»ը՝ որոնք

գետեղուած են իւրաքանչիւր դասի սկիզբը: Ուսուցիչը՝ ամեն անգամ որ բերնուց բացատրել ուզէ աւանդուելիք դասը՝ յարմար *խնդրասներ* ու քելագրութիւններ պիտի գտնէ այդ խօսքերուն մեջ, այսինքն ամենէն կարելոր եւ յանախ ամենէն հազուագիւտ օժանդակները, որոնցմէ կրնայ ներշնչուիլ նաեւ շարագրութեան դասերու մշակութեան առթիւ:

Եւ սակայն, հակառակ այս ամեն դիւրութեանց, ներկայ աշխատութիւնը կրկին ծանր հարկեր կը դնէ ուսուցիչներուն վրայ: Անհոգ ու մեհեմաբար միայն իր կոչումին փարած ուսուցչի մը ձեռքն անցնելով՝ այս գործը ոչ մէկ արդիւնք կրնայ տալ: Դասագիրքը գործիք մըն է միայն. կարելի է այդ գործիքով շատ գեշ կամ շատ լաւ արդիւնք մը ստանալ զայն գործածող ձեռքին՝ ուսուցչին ձեռքին ընդունակութեան եւ կամ անհարակութեան համեմատ: Որովհետեւ մենք մեր կողմէ շատ քան դիւրացուցած ենք՝ ասիկա չենք պարտք քեզ ընելիք ոչինչ մնացած է ուսուցչին: Մեր ջանքերը՝ ինչ որ ըլլան, գործիքը հաստատուն ու նպաստակարար դարձնելէ զատ ուրիշ ոչ մէկ բանի կը ծառայեն. գործածութիւնը, այսինքն ամենէն դժուարին աշխատութիւնը միշտ ուսուցչին կը մնայ. անոր գործածելու եղանակն է որ կարելի պիտի դարձնէ փափաքուած արդիւնքին յաջողութիւնը: Բացատրենք նաեւ այդ գործածութեան եղանակը, վերջին անգամ մըն ալ դիմելով Պ. Պուռժուայի զմայելի բանաստուութեան՝ որ արդէն այնքան քանկագին քելագրիչ մը եղաւ մեզի: — «Բարոյական դաստիարակութեան խնդիրը կը պարունակէ երեք եզր, որոնք նաեւ առանձնապէս կարելոր են. 1. Բարիին վրայ որոշ գաղափար մը, 2. Զգացման մշակութիւնը, 3. Զգացումը

քննաորութեան փոխել՝ յանախակի կրկնումներով եւ քարի գործելու վարժութեամբ: Բարիին գաղափարը պէտք է ցոյց տրուի տղուն իբր կեանքին նպասակը, գերագոյն վախճանը, որուն դառնալու չենք միայն քանի մը հանդիսական ժամերու մեջ, այլ մեր բոլոր մտածումներն ու գործերը անոր համեմատ կարգադրելու ենք: Պատրաստուելու քիւնները իբր յաջորդական վերացեալ գաղափարներ ներկայացնելու չէ տղուն մտքին, այլ իբր իտեալ մը որուն հակելու են իր ետքեան բոլոր մտայնքը: Պէտք է որ զգացում մը վարէ կեանքը»:


Անկարելի է լաւագոյն կերպով մը պատկերացնել ուսուցչին կատարելիք դերը այս գործին մեջ. հետեւաբար մենք ոչինչ կ'աւելցնենք այդ մասին: Միայն ջերմապէս կը յանձնարարենք բոլոր անոնց որոնք այս գիրքը գործածելու պատիւը պիտի ընեն մեզի՝ ուշադրութեամբ հետեւիլ բարոյական դաստիարակութեան սոյն երեք եզրերուն գործ Պ. Պուռժուայ կը սահմանէ այնքան յսակ ու դիւրահասկնալի կերպով մը: Իրենցմէ ակնկալուած աշխատութեան ջիղն է ասիկա, եւ այդ ջիղին զօրութենէն կախում ունի որչափ իրենց, այնքան ալ մեր յաջողութիւնը:

\* \* \*

Ներկայ աշխատութիւնը գրական հաւաքածոյ մը չէ, այլ պարզ ընթերցանութեան դասագիրք մը: Այս պատճառաւ մէկ քանի գրողներու գործերէն մեջ բերուած կարգ մը կտորներ երբեմն քեքեւ փոփոխութեանց ենթարկուած են, մասնաւորապէս զանոնք մեր ծրագրին պատշաճեցնելու համար: Այս մասին ներողութիւն կը խնդրենք յիշեալ գրողներէն:

Ա. ՄԱՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԵՐ



I. ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴԸ

ԳԵՂԵՅԻՎ ԽՕՍՔԵՐ

Կատարելութեան հասած մարդ մը կենդանի էակներու առաջինն է, բայց երբ առանց օրէնքի կ'ապրի ամէնէն յետինը կը դառնայ: (ԱՐԻՍՏՈՏԵԼ)

— Ս.մեհակատարեալ մարդը ան է որ ամէնէն աւելի օգտակար կ'ըլլայ ուրիշներու: (ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՌԱՄ)

— Ս.յն որ ինք իր ձեռքով կը օտկէ իր կեանքը, որ իր գործերուն նշանակութիւնը կ'ընկալէ է, որ բարի նպատակ մը ունի եւ զայն իրականացնել կ'աշխատի, կրնայ ինքզինքը կատարեալ մարդ մը նկատել: (Բ. ԺԱՆԷ)

ՅՈՐԵՆԻ ՀԱՏԻԿԸ

Խումբ մը մանուկներ իրենց մտքերը կը խաղային երբ հաւու հաւկիթի խոշոր ձկնաձկնաբանը արկայ մը գտան որուն մէջտեղը ակօսման կար և որ զորենը հատիկի մը կը նմանէր:



114  
39

Մարդ մը որ անկէ կ'անցնէր, տղոց քիչ մը զբամ տալով այդ առարկան առաւ անոնց ձեռքէն, և քաղաք տանելով մեծատունի մը ծախեց:

Մեծատունը՝ հասկնալու համար թէ ի՞նչ է այդ առարկան՝ գիտուններ կանչեց. բայց ոչ մէկը կրցաւ անոր ինչ ըլլալը հասկնալ: Ատոր վրայ անձանօթ առարկան պատուհանի մը եղերքը դրին: Քիչ ետքը քանի մը թռչուններ որոնք այդ կողմերը կեր կը փնտռէին, եկան կտուցի հարուածներով ծակ մը բացին անոր վրայ: Այդ ծակին շնորհիւ հասկցուեցաւ որ առարկան ցորենի հատիկ մըն էր:

Մեծատունը շատ զարմացաւ, և հրամայեց գիտուններուն որ հասկնան թէ այդ ցորենի հատիկը ինչո՞ւ այդքան խոշորցած էր, և թէ ինչո՞ւ անոր նման ուրիշ մըն ալ կարելի չէր գտնել:

\* \* \*

Գիտունները դիմեցին իրենց զբքերուն, բայց չկրցին պատասխան մը գտնել:

— Թերեւս գիւղացիները կրնան բացատրել, ըսին և մեծատունին առջին բերին կորաքամակ ձերունի մը, առանց ակռայի, ճերմակ մօրուքով և ցուպերու յենած:

— Երբէք ասանկ բան մը ծախու առած չեմ, ըսաւ ձերունին, իմ գնած ցորենս միշտ շատ փոքր կ'ըլլար: Բայց անգամ մը հայրս կանչեմ, թերեւս ան զիտէ:

Մեծատունը ձերունիին հայրը կանչել տուաւ: Այս վերջինը միայն մէկ ցուպի մը յենած էր. աչքերը տակաւին բաւական աղէկ կը տեսնէին, և մօրուքը բոլորովին չէր ճերմկցած:

— Այս տեսակ ցորեն ոչ գնած եմ, ոչ ալ տեսած եմ ըսաւ, իմ երիտասարդութեանս ատենները զբամ

չէին գործածեր: Այն ատեն մեր հունձքերուն արտադրած հացովը կ'ապրէինք և կուտայինք այդ հացէն անոնց՝ որ չունէին: Պէտք է հօրս հարցնել:

\* \* \*

Գացին բերին ձերունիին հայրը: Աւելի կորովի էր, և շիտակ կը քալէր, առանց ցուպի: Մօրուքին մէջ հազիւ թէ ճերմակ թելեր կային:

Երբ հունտը տեսաւ՝

— Որչափ ժամանակ կայ որ ասանկ հունտ մը չեմ տեսած ըսաւ: Իմ երիտասարդութեանս ատենը ցորենի հունտերը ասոնք էին: Այն ժամանակ հացը չէին ծախեր, ո՛չ ալ ծախու կ'առնէին: Ոչ ոք գիտէր թէ ոսկին ինչ է, բայց ամէն մարդ իր պէտքերուն բաւելու չափ հաց ունէր:

— Ո՛ւր կը գտնուէր քու դաշտդ, հարցուց մեծատունը:

— Իմ դաշտս այն հողն էր զոր Աստուած տուած է ամէնուն: Այն ատեն հողը ոչ մէկուն կը պատկանէր, ամէնուն էր: Ամէն մարդ ապրելու համար իրեն պէտք եղածին չափ կը մշակէր: Մէկը չէր ըսեր «Իմն, քուդ», դրացիինը». մեր աշխատութեան պատուը կը քաղէինք և կը գոհանայինք:

— Ինչո՞ւ ցորենը այն ատեն այսչափ մեծ էր, հարցուց նորէն մեծատունը:

— Որովհետեւ, պատասխանեց ձերունին, այն ատեն ամէն մարդ իր աշխատութեան շնորհիւ կ'ապրէր, և Աստուծոյ օրհնութիւնը անպակաս էր իր ձեռք բերած արդիւնքին վրայէն:

— Հարցում մըն ալ պիտի ընեմ, աւելցուց մեծատունը, ինչո՞ւ դուն քու թոռնէդ ու դաւկէդ աւելի

առոյգ ես, ինչո՞ւ անոնք ցուպով կը քաղեն և դուն  
առանց ցուպի:

— Որովհետեւ ես Աստուծոյ վախնալով, Աստուծոյ  
պատկառելով ապրեցայ, ինքզինքս չմաշեցուցի ուրիշին  
ուռնեցածին վրայ աչք սնկելով, Հնախանձեցայ, ես ու  
նեցայ այն միայն ինչ որ ինծի կը պատկանէր իմ աշխա-  
տութեանս հնորնիւ:

Բառերու նշանակութիւնը. — Կորստանալ՝ կրու-  
նակը ծռած: Կորովի՝ ուժով:

Մ Բ Ջ Ի Ի Ն Ն Ե Բ

Պրզսիկ սեռուկ մրջիւններ,  
Իրենց կըլոր ծակին քով,  
Սըկէ նըկէ փրշուրներ  
Բերեն դիզեն արեւով:

Օրն ամառուան արեւոս  
Կերթան հեռո՞ւն, հեռու տեղ,  
Հասիկ, հունսեր եւ ծղոս  
Առնեն, կըրեն, միասեղ:

Ես կը սիրեմ մրջիւնին  
Երթալ դիտել զնակը.  
Կը սիրեմ մի շօ օրն օրին  
Տեսնել իրենց վասակը:

Մըրջիւն, մըրջիւն սեռուիկ,  
Ես ալ անա քեզի պէս  
Գործ մը կընեմ պրսրսիկ  
Որ մարդ դառնամ իրապէս:

ԹՎԿԱՏԻՆՅԻՆ

Բառերու նշանակութիւնը. — Ծղոս բոյսին այն  
մասը որուն վրայ տերեւներ կը գտնուին:

Խ Ա Ջ Ա Տ Ո Ւ Բ Պ Ա Բ Յ Ի Ջ Պ Ա Ն Ե Ա Ն

Ամէնուն տգիտութեան ատենը, Խաչատուր Պար-  
տիզպանեան ուսմանն նաշակը առած էր և գլուխ կեցած  
էր բարերար մարդոց որոնք ուսման սէրը ամէնուն սրբ-  
տին մէջ ծառայելու, դպրոցներ բանալու, և ճշմարիտ  
դաստիարակութեան բարիքները ամէնուն վայելել տա-  
լու պատճառ եղած են:

Մարդու հասակ ունեցած օրէն մինչեւ վերջին ժա-  
մը, ամէն տեսակ յարձակումներու ենթակայ ըլլալով և  
ամէնքն ալ արհամարհելով երբէք իր շա՛նը չփնտռեց,  
ամէնուն համար աշխատեցաւ՝ իր օրական ապրուստը  
միայն խնդրելով Աստուծոյ, և իր անձնական հոգերը  
հովին տալով: Եւ իրաւ ալ մեծամեծ օգուտներ ունե-  
ցան իր ջանքերը: Ուրիշներու պէս երբէք չփնտռեցաւ,  
Կրբէք կանգ չառաւ ու չըբեց իր բարի գործը:

Սակայն հոս չէին լինար իր առաքիչութիւնները:  
Իր հոգին շատ ընդարձակ էր: Համայնի մը սէրը միայն  
չէր կրնար դայն լեցնել. ան կը սիրէր բոլոր մարդկու-  
թիւնը և ամէն մարդ ատանձինն:

Մենք միշտ աւելի սիրած ենք իր սրտին ձերքերը, իր անկեղծութիւնը, անշահասիրութիւնը և անձնուէր բարեկամութիւնը: Այնչափ է իր անկեղծութիւնն ու անշահասիրութիւնը որ մտածանք շահերու և պատիւներու առջև անգամ իր վեհանձն սիրտը երբէք չխոնարհեցաւ, և մարդ մը կամ կարծիք մը չողոքորթելու չափ չնուաստացաւ:

Աշխարհի վայելքները երբէք չկրցան զինքը փորձել, ոչ ալ ոսկիին փայլը կրցաւ իր աչքը շլացնել կամ սիրտը հրատարակել: Իր ամէնէն նեղ օրերուն անգամ՝ անտարրտունջ իր վիճակին վրայ և մտնալով ինքզինքը՝ բարեկամներու կարօտութիւնը լեցնելու, անոնց ցաւակից ըլլալու, անոնց վիշտերը մեղմացնելու կ'երթար: Կրնայ ըստիլ Պարտիզպանեանի համար թէ իր ճակատը գրուած էր « ամէնուն աղէկութիւնն ուղել և ինք աղէկութեան երես չտեսնել »:

\* \* \*


Անա առաքինի կեանք մը. երբ մարդ մը ասանկ ապրեցաւ այս աշխարհիս վրայ, երբ ամէնուն համար այնչափ մեծ սէր մը ցոյց տուաւ, երբ այնքան ծառայութիւն մատոյց իր համայնքին և բարի օրինակ եղաւ ամէնուն, անիկա՝ մարդկութեան և Աստուծոյ ունեցած պարտքերը լիապէս վճարեց: Պաշտօն մը ունէր աշխարհի վրայ. այն պաշտօնը արժանապէս վարեց: Մարդերու յիշատակութեան և Աստուծոյ վարձատրութեան արժանի է անկէ կտրել:

Մեզի ուրիշ բան չմտար հիմա ընելու՝ բայց եթէ աշխատիլ անոր առաքինութեանց հետեւելու, անոր պէս ընկերատէր, անոր պէս մարդասէր ըլլալու, որովհետեւ ասոնցմով կ'ըլլայ ճշմարիտ Աստուածասիրութիւնը՝ որ միակ արժանիքն է աշխարհիս մէջ:

Վ.Ս.ՀՐԱՄ

Բաներու նշանակութիւնը. — Խաչատուր Պարտիզպանեան՝ Կ. Պօլսոյ ուսողութեան ուսուցիչներուն ամէնէն հինը եղած է, և Գ. Օտեանի դասատուն. ծնած է 1809ին և մեռած 1856ին:

Ճաշակ՝ համ: Արծարծել՝ վառել, գրգռել: Վհասիլ՝ անհրկիլ: Հաւայցիլ՝ ժողովուրդ:



## 2. ԿԵԱՆՔԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Գ Ե Բ

Ամէնէն գեղեցիկ կեանքը սն է որ իբր օրինակ կը ներկայանայ մարդոց:  
(ՄՕՆԹԷՆԸ)

— Առանց նպատակի ապրող մարդ մը ցաւ սխուր կ'ապրի: Պէտք է բարի նպատակ մը ունենալ, և զայն իրականացնելու աշխատիլ:  
(ՏԸ ԺԷՌԱՆՏ)

— Կեանքը պէտք չէ պարապ անցընել. պէտք է բան մը աւելցնել մարդկութեան օգտին համար աղէն իսկ կատարուած գործերու:  
(Է. ԲԷՔՕ)

— Մարդ միշտ պէտք է ջանայ իր նախորդներէն աւելի իմաստուն, աւելի արդարատէր, աւելի բարի, աւելի նշանակաւոր, գրասէր, և աշխատատէր դառնալու:  
(ՆՈՅՆ)

### Կ Ե Ա Ն Ք Ի Ն Պ Ս Տ Ա Կ Ն Ե Բ

Հողին տակ ցորենի հունտ մը կը քնանայ: Եթէ երբէք այդ ցորենի հունտը գիտնար թէ ինք ինչ է, իս-


կոյն պիտի մտածէր թէ ինք արդիւնքն է հողագործին աշխատութեան և Աստուծոյ պարգեւած արեւին . պիտի մտածէր թէ ինք վիճակուած է ծլելու , ծաղկելու , հասուննալու և ալիւրի վերածուելու՝ որպէս զի վաղուան հացը դառնայ : Եւ եթէ կարենար այդպէս մտածել , սիրով պիտի աշխատէր իր ճակատագրին կատարման :

Մարդն ալ՝ եթէ ուզէ հասկնալ թէ ինք ի՞նչ է , ճիշդ այդ ցորենի հատիկին պէս պիտի ընէ : Ինք ալ ստեղծուած է որպէս զի հեազհետէ աւելի լաւանայ , հեազհետէ աւելի մարդ դառնայ : Իր պարտքն է պահել իր կեանքը և ուրիշներուն ալ օգնել որպէս զի իրենց կեանքը պահպանեն : Ցորենի հատիկն ալ այսպէս է . ինք իր կեանքը կը պահէ՝ վերջէն մարդոց կեանքը պահելու համար : Տարբերութիւնը հոն է որ ցորենի հատիկը բնազդուօրով կ'ընէ , մինչդեռ մարդիկ կրնան իրենց բանակամութեամբ ընել :

Իրար սիրելով , իրարու օգնելով ապրող մարդիկն են որ լաւագոյն կեանքը կ'ունենան : Մարդ մը իր երջանկութիւնը ուրիշներու երջանկութեան մէջ պէտք է փնտռէ , և պէտք է սիրէ մարդկութիւնը՝ այնպէս՝ ինչպէս որ կը սիրէ իր ծննդավայրն ու ընտանիքը :

Իրարու օգնել , օգտակար ու պտղաբեր կերպով աշխատիլ , սիրել բարին , մաքառիլ չարութեան դէմ , արդար ըլլալ՝ ահա՛ ասոնք են որ գեղեցիկ կեանք մը կը կազմեն : Ասոնք պէտք է ըլլան մեր ամէնուս կեանքին նպատակները :

Շ. ՎԱԿՆԷՐ



ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱՏԱՍՏԱՆԸ

Կեանքի լուծէն ազատուած,  
Երեք մարդիկ երբ մեռան՝  
Երկինք գացին ուր Աստուած  
Բազմած, կ'ընէր դասասան :

— Ըսէ՛ սեսնեմ ինձ շիսակ,  
Հարցուց մէկուն հայրաբար,  
Ի՞նչ բարի գործ, լաւ վասակ  
Ըրիր, ի՞նչպէս ապրեցար :

— Չարիք չըրի երկրի վրայ,  
Տէր իմ, ըզնեզ չեմ խաբեր,  
Ես շահեցայ, ես կերայ,  
Ուրիշներուն՝ անխաբեր :

— Միայն չարիք չընելով  
Մարդ մը չըլլար մարդ բարի.  
Այս անխաբերն, օ՛ն, շուտով  
Դրժոխք սարէք որ այրի՛ :

Ու դառնալով երկրորդին.  
Ըսէ՛ սեսնեմ, փաշտողջ  
Տարիներուդ մէջ, անդին,  
Ի՞նչպէս անցաւ կեանքդ ամբողջ...:

— Հանոյքներու մէջ զըւարթ  
Երգ ու պարով, անդադար  
Իբր անվընաս, անհոգ մարդ  
Ապրեցայ ես, Տէ՛ր արդար:

— Բիւրս, անձնասէր, որ մարդու  
Գուր ու գորով չես սրած,  
Պէ՛տ է Դրժովք երթաս դու,  
Վհոնեց անոր ալ Ա.սոռած:

Եկաւ երրորդն իր կարգին.

— Ըսէ՛, ի՞նչպէս լապրեցար . . .

— Տէ՛ր իմ, կեանքս էր վճազին,  
Սիրսս հոն խոր-ցաւ ըզգաց յար. . .

Հացէս՝ փոքրիկ մի բաժին.

Տայի անոնց մի՛տ նըւէր.

Կօրհնէի՛ն զիս լալազին

Եւ իմ հոգիս կը հրնուէ՛ր . . . :

— Գրքած, բարի, մա՛րդ ընտիր

Գոչեց Ա.սոռած, լոկ դու կա՛ս.

Դըրախտին մէջ շուտ մըսի՛ր

Որ վարձե՛ր ըլլայ անպակահա՛ս:»

Ա.Վ.ՓԱՍԼԱՆ

Բառերու նշանակութիւնը. — Կեանքի յուժեկ ազա-  
սիլ (փոխարեւարար մեռնիլ): Բազմի՛ղ՝ նստիլ: Յար՝ միշտ,  
չարունակ:

Ն Ի Կ Ո Ղ Ո Ս Պ Ա Լ Ե Ա Ն

Արքունի ճարտարապետ Նիկողոս Պալեանի գործե-  
րուն առաջին աղբիւրը, ինչպէս ընդհանրապէս ամէն  
մարդու, իր ընտանիքին ծոցը եղաւ: Մեծցաւ աստուա-  
ճապաշտութեան ու ջերմեամոլութեան օրինակներու  
մէջ. մնացածը ետքէն առած ուսմունքը և կրթու-  
թիւնը ըրաւ. բարի մարդ մը անոր թարմ սրտին մէջ  
կը դրէր բարոյական սկզբունքները: Գնքոյ՛ ձեռքով  
կը խնամէր այն նորածիլ տունկը որ ստղատու ծառ  
մը պիտի ըլլար, աստե՛նէ մը ետքը. և կ'ուրախանար՝  
տեսնելով իր զաւկին փոխադարձ կաթողին սէրը իր  
վրայ:

Ա՛յ աւելի ուրախալի էր տեսնել այն մատաղ տա-  
րիքին մէջ իր լուրջ ու զգօն կեանքը որ կայծեւ պայ-  
ծառ ու զեղեցիկ օրուան մը արշալոյսն էր: Իր մէկ հա-  
տիկ զուարճութիւնն էր մայրը որուն զգուանքով և  
խնամքով կը զօրանար ու կ'աճէր օր օրի:

Բարիզի մէջ, նախակրթական ուսմունքը ստանկէն  
վերջ, հետեւեցաւ ճարտարապետական արուեստին: Իր  
ազնիւ, բարի ու փութաջան աշխատութիւնը չուտ գրաւե-  
ցին իր վրայ վարպետներու սէրը: Գպրոցին վերատեսուչը  
մինչև և այսօր պարձանքով կը յիշէ իր ամենասիրելի աշա-



Կերպը որ իր բոլոր կեանքին մէջ անկորուստ պահեց իր գառախարակին համար՝ փոխադարձ սէր մը և յարգանք :

\* \* \*

Սիրտ մը որ այսքան ազնիւ զգացումներով լեցուած էր չէր կրնար ցամաք մնալ բարի գործերու :

Քանի՜ արցունքներ չորցուցած է մարդկային աչքերէն՝ իր կարճատեւ կեանքին մէջ, քանի՜ ընտանիքներ ազատած է յուսահատ վիճակէ մը, թշուառութեան գառապարտուած քանի՜ ընտանիքներ իր ձեռքէն ընդունած են իրենց երջանկութիւնը :


Ասոնք կ'ընէր ո՛չ թէ իբր ողորմութիւն . աս՝ նուա՞տացուցիչ պիտի երեւար իր փափուկ սրտին, այլ իբր պարտաւորութիւն զոր իր ընկերոջ կը հատուցանէր : Այս մեծ, գեղեցիկ պարտաւորութիւնը անթերի կատարեց :

Իր գործերով՝ հաւատարիմ թարգմանը եղաւ Քրիստոսի կողմէ մարդկութեան արուած աս միակ պատուէրին . «սիրեցէ՛ք ամէնքդ ալ իրար» :

Այս պատուէրը ինք ազէկ հասկցաւ և ազէ՛կ ալ գործադրեց : Այլ ի՞նչ պէտք է իր յիշատակը անմահացնելու համար :

Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ.

Բառերու նշանակութիւնը . — Նորածիղ՛ նոր ծլած : Կարոզին՛ գուրգուրացող : Անքերի՛ անպակաս :



### 3. Խ Ի Ղ Ճ Ը

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Երբ խիղճը կը խօսի, պէտք է մտիկ ընել անոր : (Ա. ՏԻՒՐԻԻ)

— Արդար մտղը կը խոնարհի իր խղճին առջեւ, որովհետեւ խիղճը տէր չունի եւ ոչ մէկ բանի գերին կրնայ դառնալ : (Շ. ՎԱԿՆԷՐ)

— Մտղ ուր որ ալ երթայ, ինչ ալ ընէ, խիղճը իրմէ չի բաժնուիր : (ՏԻՏՈՒ)

— Իմ խղճիս դասասանը կը նախընտրեմ վրաս խօսուած հազար նառերէ : (ԿԻԿԵՐՕՆ)

#### Ն Ա Ի Ա Վ Ա Ր Ը

Այն օրը կը պտտէի գետին եղերքը : Սաստիկ հով մը կար՝ ու գետը յուզուած էր : Երբոր կամուրջի մը մօտ հասայ, տեսայ նաւակ մը որ ամբողջովին աւազով լեցուած էր, և զոր նաւավարը ի զուր կը փորձէր կամուրջին տակէն անցնել :

Ուշադիր կը դիտէի զաջն . կ'ուզէի հասկնալ թէ իր ջանքերը պիտի պսակուէ՞ին, պիտի կրնա՞ր ջուրերու բարկութեան յաղթել և կամուրջը անցնիլ :

Յանկարծ նաւակը շրջեցաւ, տեսայ նաւավարը որ կը փորձէր լողալ, բայց չէր կրնար, և յուսահատի մը պէս կը մաքառէր ալիքներուն հետ :

— Այս անճարակը հիմայ կը խեղդուի, ըսի ինք-  
նիրենս :

Պահ մը ուղեցի ծովը նետուելը և զայն ազատել,  
բայց խեղճն մտածեցի թէ արդէն իսկ տարիքս առած  
եմ և յօղացաւ ունիմ :

— Զուրը շատ ցուրտ է, կ'ըսէի ես ինձի, եթէ յօ-  
ղացաւերս երեւան կ'ըլնն, անցեալ տարուան պէս շա-  
բաթներով հիւանդ պիտի պառկիմ, թերեւս պիտի մեռ-  
նիմ, ան ատեն ո՞վ պիտի դայ ինձի օգնելու :

Եւ սկսայ արագ քայլերով հեռանալ, նայուածքս  
ուրիշ կողմ դարձուցած :

Բայց այս անգամ տարբեր մտածումներ զիս խու-  
վեցին :

— Գուն վա՛տ մըն ես, կ'ըսէր ներքին ձայն մը  
ինձի, վատ մըն ես, քանի որ կրնաս և չես ուղեր այդ  
մարդը ազատել :

Այս յանդիմանութիւնը խարաղանի հարուածի մը  
պէս ցնցեց զիս, ես վա՛տ մը... վա՛տ մը... Աստուած  
իմ : Եւ խղճիս ձայնն էր որ այդ բառը կը նետէր երեսիս,  
ծանր անարդանքի մը պէս :

Առանց ժամանակ կորսնցնելու սկսայ դէպի կա-  
մուրջ վազել : Խիղճս այս անգամ չէր յանդիմաներ զիս,  
այլ կը խորհոյտէր : Կամուրջին մօտ հասնելուս՝ տեսայ  
որ խեղճ նաւավարը խեղդուելու վրայ է : Իսկոյն դետը  
նետուեցայ և մարդը ազատելով ցամաք հանեցի :

ԱՌՆՆՏԱՆ

Բառերու նշանակութիւնը. — Երջի՛ դառնալ :



Խ Չ Զ Ի Խ Ա Յ Ք

Գիւղին մասրան զանգակասան  
Փամացոյցն հնչէր *սա՛ն, սա՛ն, սա՛ն,*

Կէս գիւեր... :

Ամէն մարդ խոր փուն կը փաշտ :

Լուսինն, երկինքէն անամպ ու պայծառ,

Լքնակին վրայ կը ցոյար վառ վառ... :

Հովիկն ալ, շունչով մ'հեծ ու մեղմագին,  
Թաւ սաղարթն օրէր լուռ անսառակին... :

Արթուն՝ մա՛րդ մը լոյ, մութի սիրանար,

Գեսնախնձորներ գողնալու կ'երթար.

Գրացիին արտէն... : ✕

Ու համբան, սայլակն անաչ քած ասէն,

Անիւն, որ ամէն դարձին, նըռնչէր,

Իր լեզուով, կարծես անոր կը գոչէր.

« Բրոնընի՛ս պիտի, բրոնընի՛ս պիտի... : »

— « Ո՛չ, ո՛չ, մեմնչէր մարդն... : » Անցի, ասի

Զոյջիկներ, պզտիկ հիչերով սո՛ւր սո՛ւր,

Կըսէին « սի՛ն, սի՛ն, սի՛ն, ո՛ւր կ'երթաս, ո՛ւր... : »



— Հասաւ ու լեցուց սալակն, եւ անա՛  
 Ընկուզենույ մը կասարին վրայ,  
 Թառած բու մը ձայն հանեց «*հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ*»  
 «*Տեսա՛յ քեզ, տեսա՛յ, աւագա՛կ մ՛ես դու . . .*»  
 Վախցաւ, ու սկսաւ փախչիլ սրբիկան,  
 Մինչդեռ անիւին նրոխնչը գուծկան,  
 Իր քաւարումին մէջ արագօրէն՝  
 Կը կրկնէր. «*Պիտի կսխտի՛ս, անօրէն . . .*»  
 Անվրտանգ, այլ շատ յուզուած, տուն եկաւ,  
 Եւ երբ գողօնը կը պահէր անձկաւ,  
 Լքսեց կասու մ՛որ կը ձայնէր «*Մըռըմ՛ւ,*  
 «*Չարագործ մ՛ես դու, զա՛՛ս ու անխրա՛ւ . . .*»  
 — Քունն եղաւ խրոտիլ, երազն՝ ուսիկան,  
 Եւ կ'արթննար բունն յոյզով հոգեկան  
 Երբ Ախորն երգեց. «*հո՛ւ, կոկոռիկ, կո՛ւ,*  
 «*Մէկն առնէլու յէ ինչքն ուրիշ մէկու . . .*»  
 — Դուրս վազեց, կասողած. «*Անչա՛ն կենդանի,*  
 Պոռաց, գո՛ղ մ՛եմ ես,



Բայց պիտի լրուէ լեզուդ աննոռնի,  
 Պիտի բրցունեմ գըլուխդ, որ տեսնե՛ս . . . :»  
 Դրացի մը լքսեց այս խօսքն, ու գրնաց  
 Դրացուհույն ականջն ի վար, խիտս կամաց,  
 Կրկնել զայն . . . : Կինն ալ՝ գաղտնեաց պահարան  
 Երկու կիներու պասմեց, կէս բերան . . .  
 Ու բարեկամ մ'ալ, *փութիտ* ու սիրուն,  
 Սուրաց, լուր տըլաւ . . . ուսիկաններուն . . . :  
 Եկան, մեր մարդուկն առին ու սարին  
 Վայրն այն խաւարին  
 Ուր կ'երթան մարդիկ ամէն — ո՛ւր որ կան —  
 Որք դրամ չը տարով պէտքերնին հոգան :

Ահա պատմութիւնս. յուսամ թէ անոր  
 Վերնագիրս յարմար գտնէ ձեր շրջանի :  
 (Նման, Ֆրանս.ի) **Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ**

Բառերու նշանակութիւնը. — Թառ՝ թանձր, խիտ :  
 Դողօն՝ գողցուած առարկայ : Բունն՝ սաստիկ : Անչան՝  
 անպիտան : Փութիտ՝ աճապարող :

### ԿՈՐՄՈՒՄԵ ՊԱՅՈՒՍԱԿԸ

Ա.

Վաճառական մը ետ կը դառնար *սօնախանառե* մը ուր շատ առուտուր ըրած էր: Իր բոլոր վաստակը, շատ մը կարմրուկ ոսկիներ՝ կաշիէ պայուսակի մը մէջ դրած էր:

Քաղաքէ մը անցած ատեն եկեղեցիի մը հանդիպելով ներս մտաւ: Պայուսակը առջին դրաւ և սխաւ աղօթեալ: Երբ իր աղօթքը լինցուց ու դուրս ելաւ, միտքը այնչափ զբաղած էր որ պայուսակը հոն մոռցաւ:

Վաճառականին դուրս ելլելէն քիչ ետքը, քաղքին բնակիչներէն մէկն ալ եկեղեցի գնաց և անոր գտնուած տեղը ծնրադրած ատեն՝ գտաւ պայուսակը որ կը պուրած ու կնքուած էր: Մարդը հասկցաւ որ պայուսակը շատ դրամ կը պարունակէ, առաւ զայն և ուրախ գուարթ տուն դարձաւ:

Բայց խիղճը զինքը հանդիստ չթողուց:

— Գո՛ղ ես, գո՛ղ ես, կը պոռար շարունակ:

Մարդը չուզեց պզտիկ մնալ իր խղճին առջև ու որոշեց պայուսակը ետ տալ: Բայց չէր գիտեր թէ ո՛վ է անոր տէրը:

— Աստուած իմ, ըսաւ, հիմայ ի՛նչ ընեմ ես: Եթէ քաղաքին մէջ ամէնուն գիտցնեմ թէ այս պայուսակը գտայ, իբրեւ տէր պիտի ներկայանան անանկ մարդիկ որոնք բնաւ իրաւունք չունին:

Յանկարծ գաղափար մը ունեցաւ: Պայուսակը պահեց սնտուկի մը մէջ, յետոյ իր դրան վրայ կաւիճով հետեւեալը գրեց խոշոր գիրերով. — «Եթէ մէկը բան մը կորսնցուցած է, թող հոս գայ»:

Բ.

Վաճառականը, իր ճամբան շարունակած միջոցին, յանկարծ ուշաբերելով, սարսափով տեսաւ որ պայուսակը քովը չկայ:

— Աւա՛ղ, աղաղակեց, կորսուեցայ, մեռայ:

Եւ եկեղեցի դարձաւ, յուսալով որ պայուսակը հոն է դեռ: Հոն չէր սակայն: Գնաց գտաւ քահանան և իր դրամներուն նկատմամբ հարցումներ ըրաւ, բայց քահանան ալ տեղեկութիւն չունէր: Եկեղեցիէն դուրս ելաւ խռոված, և սխաւ պտըտիլ քաղաքին մէջ:

Պայուսակը գտնող մարդուն տունին առջևէն անցած ատեն դրան վրայ գրուած խոշոր գիրերը տեսաւ, և մօտեցաւ մարդուն որ սեմին վրայ կեցած էր.

— Ա՛հ, Աստուծոյ սիրուն, ըսէք ինձի թէ ո՛վ գրեց այս գիրերը, հարցուց անոր:

— Բա՛ն մը կորսնցուցած էք, հարցուց մարդը իր կարգին:

— Ոսկիով լեցուն պայուսակ մը կորսնցուցի. պայուսակը կնքուած էր, և կը պանքով մըն ալ կը պուրած:

Մարդը գիւրաւ հասկցաւ որ դիմացինը ճշմարիտ կը խօսէր. զայն իր սննեակը տարաւ, ցուցուց պայուսակը, և հրաւիրեց որ առնէ:

Վաճառականը՝ տեսնելով այս այնքան ուղղամիտ մարդը՝ մէկ քանի վայրկեան անխօս մնաց:

— Բարի՛ Աստուած, ըսաւ ինքնիրեն, ես արժանի չեմ այս գանձին: Այս մարդը ինէ աւելի արժանի է»: Եւ անոր տուաւ պայուսակը:

Ուղղամիտ մարդը այսպէս ամբողջ պայուսակ մը ոսկի շահեցաւ՝ իր խղճին ձայնին անսպառն համար:

Բառերու նշանակութիւնը. — Տօնայականտ՝ առու-  
առուր ընելու տեղ: Անաստ՝ մտիկ ընել:

4. Ի Տ Է Ա Լ

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Փ Ե Բ

Բարի գործել, լաւին բաղձալ, լաւ  
մարդ մը դառնալ, միտ բարձրին ձգտիլ,  
ահա՛ մարդու իտալը: (ՄՕԼԻՆԱՌԻ)

— Մարդիկ բանի՛ իրենց իտալին մօ-  
տենան՝ ա՛յնպիսի անիկա կը խուսափի  
իրենցմէ: Պէտք չէ սակայն յուսահասիլ,  
պէտք է միտ հետապնդել զայն:  
(Վ. ՔՈՒՋԷՆ)

— Մարդ միտ չի կրնար լաւ նպատակի  
մը հասնիլ, իր փառքը՝ դէպի այդ նպա-  
տակը երթալուն, այդ նպատակին երթա-  
լու համար քրտմ ջանքերուն մէջն է:  
(ԿԻՋՕ)

Ա Ն Մ Ո Ռ Ա Ն Ա Լ Ի Գ Ա Ս Մ Բ

Ա.

Օր մը Միսաք՝ «Իտէալ» բառին հանդիպեցաւ զիրքի  
մը մէջ, և որովհետեւ չէր գիտեր անոր նշանակութիւնը,  
գնաց հարցուց դաստիարակին:

Դաստիարակը որ բարի ծերունի մըն էր, շատ դո՛

կը մնար երբ աշակերտներ այսպէս կուգային իրեն բան  
հարցնելու, և մեշտ կը դո՛հայնէր զանոնք:

— Չառակ, բաւ Միսաքի, «Իտէալ»ը այն նպա-  
տակն է զոր դուք ամէնքդ պէտք է ընտրէք ձեր կեան-  
քին դորձածութեան, ձեր դործերուն համար: Ճարտա-  
րապետը՝ չէնք մը շինելէ առաջ՝ յատակագիծ մը կը  
պատրաստէ, առանց այդ յատակագիծը չինած ըլլալու  
չի կրնար տունը շինել:



Եթէ առանց յատակագծի սկսի, չի կրնար շինու-  
թիւնը առաջ տանիլ. պղտիկ սխալ մը, պղտիկ ան-  
զգուշութիւն մը պատճառ չկը դառնան որ չէնքը փլչի:

— Ուրեմն մենք ալ մեր կեանքին համար յատակա-  
գիծ մը պէտք է չինենք:

— Այոյնքն, պէտք է ընտրէք նպատակ մը որ օրի-  
նակիցի և օգտակար ընէ ձեր կեանքը, ահա այդ նպա-  
տակը ձեր «Իտէալ»ը պիտի ըլլայ. անիկա պիտի առաջ-  
նորդէ ձեզ, անոր չնորհիւ սխալ քայլեր չպիտի առնէք,  
և մոլութեանց ձեռքը խաղալիք չպիտի դառնաք:

— Ի՞նչ նպատակ պէտք է ընտրենք մեր կեանքին համար, հարցուց Միսաք՝ որ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր:

— Պէտք է առաքինի ըլլաք, ասո՛ր միայն պիտի աշխատիք. ո՛վ որ առաքինի է, կրնայ շատ կատարեալ մարդ մը ըլլալ. պէտք է սիրէք բարութիւնը, պէտք է արդար և ներող ըլլաք, պէտք է հնազանդիք ձեզի տրուած պատուէրներուն: Յետոյ, պէտք է աշխատիք ստախօտութենէ հեռու մնալ, գէշ ընկերակցութիւններէ զզուշանալ, ու մանաւանդ պէտք է սիրէք ձեր ծնողքը, ձեր



եկեղեցին, ուսմունքը, և գէշ կիրքեր չունենաք: Ահա ասոնց ամէնքը միանալով պիտի կազմեն ձեր կեանքին գործերուն նպատակը, ձեր խոչալը: Ճարտարսպետին յատակադիծն ալ ստանկ է. միայն մէկ գիծ մը չունի, շատ մը գիծեր են՝ որ միանալով շէնքի մը կազմութիւնը կ'ամրոցւայնեն:

— Օ՛հ, ըսաւ Միսաք, միտքս պիտի պահեմ այս դասը և իմ կեանքիս համար ասանկ խոչալ մը պիտի ունենամ:

— Շա՛տ աղէկ կ'ընես, աւելցուց դաստիարակը, ով որ ասոր պէս խոչալով մը ճամբայ կ'ելլէ, միշտ կը յաջողի կեանքի մէջ: Այսչափ առաքինութիւն ունեցող մարդ մը անպատճառ կը թողու անանկ գործ մը որ մնայ նոյն իսկ իր մեռնելէն վերջը և իր անունը շարունակ յարգանքի առարկայ կը դարձնէ:

Միսաք՝ միտքը դրաւ չմոռնալ այս դասը, և շնորհակալութիւն յայտնելով բաժնուեցաւ դաստիարակէն:

Լ Ե Ռ Ն Ե Ր Ը

Լեռներ, սեգ յեռներ, ես կը սիրեմ ձեզ,  
կը սիրեմ բունն ու անգուայ սիրով,  
Հրպարս գագաքնիդ՝ հրսխակեր կարծես՝  
Ինձ կը ներշնչեցես քարմ ոյժ ու կորով:

Հող ամէն մէկ բուն սրբիս կը ժրպի,  
Թախիծն ու երկխոյ կը վանէ մեկդի.  
Հող գովիկ հով մը դէմքս կը փութայ  
Եւ կարծես ազատ շունչ կ'առնէ կուսայ:

Երբ անդրնդախոր ձորիկ յասակէն  
Դէտք կը պոռքկայ խոնար կողերէն  
Սիրքս ալ գէտիկ պէս կը կայտնէ վէտ վէտ,  
Ես ալ փրփրիկ կ'աղղեմ իրեմ հետ:

Լեռներ, սեգ յեռներ, ձեզ երգեչ կ'աղղեմ  
Ոգեւորութեան այս տեղեւորու մեջ.  
Թող ձեր ձակասք՝ միշտ բա՛ց, միշտ վրսեմ  
Դառնայ գործերու իտեպն անշեջ:

Բառերու նշանակութիւնը. — Թախիժ՝ տրամու-  
թիւն : Անդերախոր՝ խոր անդունդով : Անշեջ՝ չմարող :

Շ Ո Ճ Ի Ն

Բոլոր ծառերուն մէջ շոճիին ցեղը ամէնէն աւելի  
տարածուածը և ամէնէն աւելի օգտակարն է : Անոր  
տեսակները բազմաթիւ են ու կը գտնուին այլ և այլ  
կլիմաներու տակ : Կան ծառեր ու բոյսեր որոնք իրենց  
յատուկ կլիման ունին , և միայն իրենց սեփական երկ-  
րին մէջ կ'աճին :

Ասանկ չէ՛ շոճին : Գրեթէ ամէն տեղ կը գտնուի ,  
նոյն իսկ անանկ տեղեր ալ կան ուր շոճիէն տարբեր  
ծառ չի գտնուիր :

Ինչպէս որ արմաւենին տաք երկիրներու խորհրդա-  
նշանն է , շոճին ալ ցուրտ երկիրներու խորհրդանշանն  
է : Արմաւենին աշխարհի ամառուան մէջ կ'ուռնանայ,  
շոճին՝ աշխարհի ձմեռուան մէջ : Արմաւենին կը ներկա-  
յացնէ գեղեցկութիւն և պտղաբերութիւն , շոճին կը  
ներկայացնէ զօրութիւն և համբերատար տոկունութիւն :  
Իրաւ է որ գրեթէ ամէն տեղ կը բնակի , բայց ամէնէն  
աւելի ցուրտ երկիրները կը սիրէ :

Շոճին է որ լեռնային տեսարաններուն մասնաւոր  
չքեղութիւն մը կուտայ ու կը գեղեցկացնէ զանոնք :  
Բնութեան մեծ Արուեստագէտին , այսինքն Աստուծոյ  
երկնած ամէնէն շքեղ պատկերներէն սմանք շոճիին  
չնորհիւ այնքան գեղեցիկ և ուշագրաւ եղած են :

Բայց այս ծառը՝ տեսարանի փառաւորութեան մէջ  
չէ՛ միայն որ իր գերը կը կատարէ : Անոր մէջ կը տես-

նենք ծառերուն ամենաբարձր բարոյական խաչալը : Այդ  
խաչալն է՝ կատարել իրեն սահմանուած գործը ամենա-  
մեծ տոկունութեամբ :

Հարուստ հողի , մեղմիկ զեփուռներու և տաքուկ  
ճառագայթներուն մէջ չէ՛ միայն որ կ'աճի ան , այլ  
ժայռերու լերկ կողերուն վրայ , մութ ամպերու տակ և  
գոռացող կծու հովերու մէջ :

Աղքատ , անօթի և հողմակոծ՝ անիկա կը պահէ իր  
արժանապատուութիւնը , աւելի կը զօրանայ տոկալով ,  
և համբերատար մաքառումով :

ԲՐՕԾ. Յ. Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

Բառերու նշանակութիւնը. — Ուռնանայ՝ ծաղկել ,  
չօրանալ : Ուշագրաւ՝ ուշադրութիւն զբաւող : Լերկ՝  
մերկ : Հողմակոծ՝ հովէն ձեծուած :



### 5. ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԱՐԳԸ

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Տ Ք Ե Ի

Պէ՛տք է ազատ ըլլալ ժամանակին համար, միակ ներելի ազատութիւնն է ասիկա: Մեր կեանքին իւրաքանչիւր վայրկեանը պէ՛տք չէ որ վասնենք՝ առանց անոր փոխարէնը ընդունելու:

— Ամէն օր իր գործը կ'ունենայ, այս պատճառաւ՝ ոչ մէկ գործ պէ՛տք է յաջորդ օրուան բողոյ:

\* \* \*

— Ժամանակը լաւ գործածելու զըլխաւոր պայմանն է առտուն կանուխ ելլելը: Հին առած մը կ'ըսէ, «Կանուխ ելլելը մարդուն քէ՛ առողջութիւն, քէ՛ հարստութիւն եւ քէ՛ իմաստութիւն կը պարգեւէ», այսինքն աշխարհի երեւ ամենաբանկազին բարիքները:

ԼԱՊՈՒԼԷՅ

#### ՅԱԿՈՒԲԻ ՀՈՒՆԶՔԸ

Հողագործ Յակոբ կ'ըսէր ինքնիրեն.

— Վաղը արտս պիտի հերկեմ, պէտք չէ ժամանակ կորսնցնել, որովհետեւ եղանակը կը յառաջանայ, եթէ այսպէս անփոյթ գտնուիմ, չպիտի կրնամ ցորեն հասցնել և անօթի պիտի մնամ:

Յաջորդ առտուն, արշալոյսէն առաջ Յակոբ ոտքի ելաւ, առաւ գործիքները, բայց երբ իր արտը պիտի երթար՝ բարեկամ մը վրայ հասաւ.

— Եկո՛ւր, ըսաւ անոր, ընտանեկան խնճոյք մը ունինք այսօր, շա՛տ կը զուարճանանք:

Յակոբ նախ վարանեցաւ, յետոյ ըսաւ ինքնիրեն.

— Օր մը առաջ, օր մը ետք՝ մարդ միշտ կրնայ աշխատիլ, բայց փախցուած հաճոյք մը կրկին ձեռք չանցնիր: Եւ բարեկամին հետ խնճոյքի գնաց:

Միւս օրը ստիպուեցաւ հանգիստ ընել, որովհետեւ առջի օրը շատ խմած էր և ստամոքսը անհանգիստ կը զգար:

— Վաղը կ'աշխատինք և ամէնուն տեղը կը լեցնենք, մտածեց:

Բայց յաջորդ օրն ալ չկրցաւ դուրս ելլել:

Օր մը վերջը՝ ա՛լ գտած էր ինքզինքը:

— Այսօր կրնամ աշխատիլ, ըսաւ: Ու գնաց ակտո որ ձին քակէ: Բայց իր կարգին ձին ալ հիւանդացած էր:

Միւս օրը տօնի օր էր:

— Այսօր աշխատիլը մեղք է, ըսաւ Յակոբ, իրաւ է որ շարաթ մը պարապ անցուցի, բայց դալ շարթու տեղը կը լեցնեմ:

Ասանկ ըսելով դէպի տօնավաճառ ուղղուեցաւ. հոն քիչ մը ժամանակ անցընելէ վերջ, մօտաւոր աղ-դականի մը հարսնիքին գնաց:

Այսպէս, օր մը հարսնիք, օր մը յուղարկաւ որու թիւն, օր մըն ալ տկարութիւն ըսելով՝ Յակոբ դեռ շատ օրեր պարապ անցուց: Օր մը վերջապէս պիտի աշխատէր՝ բայց սերմնացանի եղանակը անցած էր շատոնց:

Հետևանքը սա եղաւ որ Յակոբ այն տարին հունձք չունեցաւ և անօթի ու թշուառ մնաց:

Եթէ գործ մը ունիք՝ երբէք վաղուան մի թողուք՝ ո՛վ որ իր գործը վաղուան կը թողու՝ չի կրնար աւարտել:

Պ. Ա. ՆՇԱՌ



Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

Կ'անցնի, կ'երբայ, չի սնօքնար,  
Կեցունեղ զիկն է սնկրնար.

Ծովէն ու ջուրէն

Ա՛յ սրագորէն

Թո՛յի, շողուն ու լուսագէտ,

Փայրակի մը պէս:

Կ'անցնի, կ'երբայ, չի սնօքնար.

Լեռ, աս ու ձոր, բարձր ու խոնարհ,

Կը գրդէ, կ'անցնի,

Վագճով սիսանի.

Նըւաղ սկնարկ մ'անգամ շէտի

Զի նեւեր ետի: X

Կ'անցնի, կ'երբայ անկարեկիր.

Ա՛յս իսկ է իր ճակասագիր.

Եւ մարդիկ ամէն

Երբոր կը յամեն՝

Խնդարով ինքն անոնց վրայ՝

Յառա՛ջ կը սուրայ:

Պարգեւներու մեծասարուս

Բաշխող մըն է ան ի վերուս՝

Թանկագին շրնորհ,

Ճիշտ սրժեֆն անոր

Այս աշխարհի վրայ շատեր

Վա՛ն իս որ յեն գիտեր: X

Կ'անցնի կ'երբայ, անդարձ եւ շուս,

Պէ՛տ է քաղեղ անկէ օգուս,

Կառչելով ուժգին

Անոր քրդանցիկն,

Աշխատանքով, եռանդով շուս

Գործել անընդհատ:

Ժամանակին պէ՛տ է փարիֆ,

Ան կուսայ ձեզ ամէն բարիֆ,

Գիրֆ, պատիւ, համբաւ,

Գանձեր ալ ամբաւ

Եւ իրական, հեշտ, քաղցրագին

Վայելիք կեանքի:

Ա. Ա. Փ. Ա. Ա. Ա. Ա.

Բառերու նշանակութիւնք. — Շողուն՝ փայլուն:  
Լուսագէտ՝ լոյսի երկար հեռք ձգողը: Տիսանի՝ հսկայա-  
կան: Նըւաղ՝ մարմող: Անկարեկիր՝ գու՛թ չունեցող:  
Կը յամեն՝ ու՛շ կը մնան: Ի վերուս՝ երկինքէն: Կառչիլ՝  
փակել: Անընդհատ՝ շարունակ: Անդարձ՝ անփոփոխ:

Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր Յ Ր Օ Ս Փ

Տղոց գլխաւոր պակասութիւններէն մէկն ալ ժա-  
մանակին յարգը չգիտնալն է: Ժամանակն ալ ի՛նչ է,

կ'ըսեն, ինչի՞ կը ծառայէ: Բայց ահա ցոյց պիտի տամ իրենց թէ ինչն էր կարելի է ընել այդ արհամարհուած ժամանակին չնորհիւ:

Յրօսթ՝ ամերիկացի կօչկակար մըն էր:

Տասնըօրս տարեկան եղած ասանն էր որ ծնողքը զինքը կօչկակարի մը քով դրած էին, որովհետեւ աղքատ ըլլալով չէին կրնար զայն դպրոց դրկել: Սակայն Յրօսթ՝ որ ուսմունքը կը սիրէր, միտքը դրաւ ամէն օր անպատճառ ժամ մը խնայել՝ ընթերցանութեան և իր կրթութեան յատկացնելու համար:



Յրօսթ՝ պատանեկութեան մէջ ըրած այս որոշումը, մինչեւ կեանքին վերջը շարունակեց հաւատարմաբար, և զիտէ՞ք թէ ինչ եղաւ արդիւնքը:

Սրդիւնքը սա եղաւ որ, երեսունը մէկ տարի ետքը, այսինքն քառասունըկէ տարեկան եղած միջոցին, կօչկակարութեան համետ արհեստը շարունակելով հանդերձ, Յրօսթ՝ պատմութեան, բնագիտութեան, աստղաբաշխու-

թեան, կենդանաբանութեան, բնաբանութեան, ուսողութեան, բնալուծութեան, երկրաբանութեան և ընդհանուր գրականութեան մէջ մեծ հմտութիւն ամբարած էր: Երբ այս գիտութիւններուն վրայ կը խօսէր, իբր վարպետ մը մտիկ կ'ընէին զինքը: Բովանդակ Ամերիկայի մէջ իրեն չափ ուսողութիւն գիտցող չկար:

Օրը միայն մէկ ժամ ուսման նուիրելով է որ կօչկակար Յրօսթ կրցաւ ըլլալ այս մեծ ուսումնականը:

Տղաք լաւ ըմբռնելու են թէ կորսուած վայրկեանները երբէք վերստին չեն ստացուիր: Կորսուած հարասութիւնը մարդ կրնայ նորէն չափիլ՝ անդադար աշխատելով. կորսուած գիտութիւնը նորէն կրնայ ձեռք բերուիլ՝ ուսնելով. կորսուած առողջութիւնը կրնայ վերակազմուիլ մասնաւոր հոգատարութեամբ և բժշկական դարմաններով: Բայց կորսուած ժամանակը երբէք ետ չի դառնար:

Տղա՛ք, խնայեցէք ուրեմն ձեր ժամանակին:

ՌՒՒԼՆԵՄ ԹԷՅԼԵՐ

### 6. ԸՆՏԱՆԻՔ

#### ԳԵՂԵՅԻՎ ԽՕՍՔԵՐ

Ընտանիքի սերը աղբիւրն է ամեն առաքինութեանց:

— Ընտանիքը չսիրող մարդը ոչինչ կրնայ ըլլալ. կարողութիւն, երջանկութիւն, վերապէս ամեն բան ընտանիքէն կը բղխի: Առանց ընտանիքի՝ մարդիկ ո՛ր պիտի սորվին իրար սիրել:

— Մարդկային ընկերութիւնը տեսակ մը սերի ընտանիք է. ով որ իր ընտանիքէն ապակաճուած կ'ելլէ, ապակաճուած կը մտնէ մարդկային ընկերութեան մէջ: (ԼԱՔՈՒՏԵՐ)

#### ԲԱՐԻ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

Ընտանիք մը կը ճանչնամ՝ որուն հայրը, ալեւոր ձերունի մը, դէպի Աստուած, դէպի իր անձը, դէպի

իր նմանները ունեցած բոլոր պարտաւորութիւնները կը կատարէ: Կը մտածէ և կը յաջողի նոր գործեր հնարել, շէնքեր շինել՝ միմիայն աշխատասէր ազքատին գործ և հաց ձարելու համար:

Ընտանիք մը կը ճանչնամ՝ որուն մայրը առաքինի և համեստ կնոջ, ճշմարիտ մօր մը տիպարն է, որ ընտանիքին ամէն հոգը ունենալէ զաս, ամբողջ իր թաղին ազքատ ընտանիքներուն նեցուկը և պաշտպանն է, հիւանդներուն ալ պահապան հրեշտակը:

Ընտանիք մը կը ճանչնամ, որուն անդրսնիկ զաւակը հարուստ ըլլալով հանդերձ՝ ազքատի մը պէս կ'աշխատի օրն ի բուն, զաւակներուն և իր նմաններուն բարի օրինակ ըլլալու համար:

Ընտանիք մը՝ որուն պատկանող օրիորդները թէեւ գեղանի այլ պարզութեան, համեստութեան, պարկեշտութեան մէյմէկ տիպարներ են:

Ընտանիք մը՝ որ դուռը բաց կը պահէ անօթին կշտացնելու, հիւանդը դարմանելու, օգնութեան արժանի ազքատին օգնելու և դժբաղդին արցունքը սրբելու համար:

\* \* \*

Այս պերճութեան և ուրախութեան տունէն քիչ մը անդին յուսահատ կը սպասէ այրի թշուառ կին մը: Իր աչքերէն կաթած արցունքներն իսկ երեսին վրայ սառած են, թէեւ նորէն կը ջանայ տաքցնել գիրկին մէջ առած տկար և անօթի մանուկը որուն մահը կը սպառնայ:

Այլ տանտիրոջ բարի կլինը պահ մը մոռնալով հաճոյքը, կը վազէ կ'երթայ, և այրի կլինը ու պզտիկ տղան առնելով տաքուկ սենեակ մը կը բերէ: Հոն զանոնք կերակրելով, պատսպարելով զգեստ ու քիչ մըն ալ գրամ տալէ վերջ կը ճամբէ, ատոր փոխարէն մարդա-

սիրական ամէնէն ազնիւ պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութիւնը զգալով:

Եւ անա այդ տունն է որ միշտ լեցուն է ազքատին օրհնանքով, տկարին մաղթանքով, սրբին աղօթքով:

Գ. Է. ՈՐԳ. ՊՈՒՊԼԻ

Ի Բ Ի Կ Ո Ւ Ն

Մայրիկն հսկած էր խրեւառոս,  
Օրորոցին վրայ պրզսիկ.  
Իր սիրոյ փառոյ խրեկսահոս  
Կը գոցէր աջն իր հանդարսիկ:

Յոգնած եկաւ հայրիկը տուն,  
Բայց և այնքով մէյ մը զարկին,  
Մէյ մ'ալ երգող հարսին ժպտուն,  
Լոյսով յեցան սիրուն ու հոգին:

Մոռցաւ ամէն-հոգ ու ցաւեր,  
Ծռնիր դրսաւ օրրանիկ քոյ,  
Միակ հաւերոյ մը կը բաւեր  
Անուց ձակտէն՝ սիրագորով:

Մէկն իր բոյնիկն խօսող թրոյուն,  
Միսն ալ ձագուկն անուշաբոյր,  
Արցունքներով աջր յեցուն՝  
Հաւերոյն առաւ, տրաւ հաւերոյ:

Կ. ՈՍԵՆՅՆ

Յ Ո Պ Ո Պ Թ Ռ Զ Ո Ւ Ն Ը

( Հ Ե Ռ Ե Ա Ռ )

Գարնան առաջին օրերէն սկսեալ՝ ամբողջ ամառը, ամէն իրիկուն, արեւը մարը մանկէն ետքը, այգեստաններու հովտին մէջ ողբացող արտում ձայն մը կը սկսի հնչել.

Սահա՛կ... Սահա՛կ... Սահա՛կ...

Կ'ըսեն թէ այդ ձայնը ողբերգն է թուչունի մը որ ժամանակաւ մարդկային էակ մըն էր:

\* \* \*

Ատենօք մայր մը կար որ միակ սիրասուն զաւակ մը ունէր Սահակ անուն, որու վրայ հոգի կուտար: Այնքան սիրով կապուած էր անոր հետ որ կարծես անոր կեանքովը կ'ապրէր և անոր շունչովը կը շնչէր: Մայր և որդի իրարմով երջանիկ էին, շա՛տ երջանիկ:

Այն ժամանակները սովորութիւն կար որ երբ կամուրջ մը կառուցուէր, ջուրերու ոգիները սիրաշահելու համար կը զոհէին այն անձը՝ որ նոր շինուած կամուրջին վրայէն առաջին անգամ կ'անցնէր: Եթէ այդ զոհը չըլլար՝ ջուրերը կը կառդէին, և իրենց ավենի կոհակներով շուտ մը կը փլցնէին կամուրջը:

Սահակ՝ որ այս անգութ սովորութիւնը չէր գիտեր, սեւ օր մը, գիտելու գնաց այն կամուրջը որ գեռ նոր շինուած ըմնցած էր այն տեղերու մօտերը, և զուարթ ու միամիտ անցաւ կամուրջին վրայէն: Աւա՛ղ... սովորութիւնը ներել չէր գիտեր: Սահակ դժբաղդ զոհը եղաւ նորաշէն կամուրջին:

\* \* \*

Մայրը՝ որ տեղեկութիւն չունէր այս անուի դժբաղդութենէն, կը սպասէր որ իր զաւակը գայ, և չէ՛ր ալ գիտեր թէ մ'ըր գացած էր: Բայց ի դո՛ւր. Սահակ ա՛լ չվերադարձաւ: Իր մայրը՝ խենթի պէս չորս կողմ ինկաւ փնտռելու իր սիրական զաւակը:

Դրացիներուն դիմեց, բարեկամներուն դիմեց, ազգականներուն դիմեց, բայց ոչ մէկ տեղ գտաւ զայն: Իրիկունը ճամբու գլուխները սպասեց, և դաշտէն վերադարձող ամէն ճամբորդի հարցուց թէ տեսա՞՞ծ են իր Սահակը: Ափա՛ս, ամէնքն ալ արտագին իրենց գլուխը կ'երերցնէին, և առանց պատասխան տալու կ'անցնէին:

\* \* \*

Այն ատեն հէզ մայրը լալով, ողբալով դաշտերն ու լեռները ինկաւ թափառական, պտտեցաւ ամէն կողմ իր սիրական զաւակը փնտռելով: Թուչուններուն հարցուց, ծառերուն հարցուց, իրերուն հարցուց, ջուրերուն հարցուց թէ արդեօք տեսա՞ն իր սիրելի Սահակը:

Թուչունները անտարբեր կը սուբային, ծառերը արխարազին իրենց կատարները կը տատանէին, ջուրերը անձայն կը հոսէին կ'անցնէին և ասերն ու ձորերը խոր լուսթիւն կը պահէին:

Հէզ մայրը ճարահատ՝ կ'աղաչէր որպէս զի ըսեն թէ ո՛ւր է իր սիրական զաւակը. կուլար կ'ողբար դառնագին, անդադար կանչելով՝ Սահա՛կ... Սահա՛կ... Սահա՛կ...:

Եւ լեռներն ու սարերը, ձորերն ու անտառները, արձագանգ տալով՝ իրեն հետ կը կրկնէին ողբաղին՝ Սահա՛կ... Սահա՛կ... Սահա՛կ...:


Ո՛վ գիտէ որքան ժամանակ պտտեցաւ այս անբաղդ

մայրը լեռներուն և անտառներուն մէջ, փնտուելով իր սիրական զաւակը, և ողբալով անոր կորուստը: Օրին մէկն ալ, չենք գիտեր ի՞նչպէս, թեւեր առաւ և սլացաւ օդին մէջ:

Անկէ ի վեր, գիշերուան մթութեան մէջ ինքզինքը ծածկած՝ կ'ողբայ իր սեւ ճակատագիրը, և տակաւին կը փնտուէ իր սիրական զաւակը, անդադար կանչելով տըխւրագին՝ Սահակ... Սահակ... Սահակ:

**ՅՈՎ. ԳԱԶԱՆՃՅԱՆ**

Բառերու նշանակութիւնը. — Այգևսան՝ այգիներ: Ալեկի՝ չգաղութ: Նորաշէն՝ նոր շինուած: Զոր՝ լեռներու մէջտեղը խոր տեղ: Սար՝ լեռան գլուխ:



**Բ. ՄԱՍ**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

**I. ԱՍՏՈՒԱԾ**

**Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Բ Ե Ր**

— Մարդուն համար գերագոյն պարտք մըն է Աստուծոյ սէրը. չէ՞ մի որ առանց Աստուծոյ շնորհներուն վայրկեան մը անգամ չենք կրնար ապրիլ:

(Ժ. ՍԻՄՕՆ)

— Այնչափ սասիկ է Աստուծոյ համար ունեցած սէրս որ եթէ երկինքը չըլլար, եւ եթէ դժոխքը չըլլար, նորէն զայն պիտի սիրէի: (ՍՐԲՈՒՅԻ ԹԵՐԷԶԱ)

— Բոլոր մարդկային բարիքները կրնան վերջ մը ունենալ. միայն Աստուծոյ բարիքներն են որ միշտ պիտի երջանակեն զմեզ:

**ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՌՔԸ**

Երբոր տուն մը կը տեսնեմ, իսկոյն կը մտածեմ թէ քարէ հիմերու վրայ կանգնած է ան՝ որպէս զի հաստատուն մնայ. կը տեսնեմ անոր պատերը, ինչպէս

նաեւ տանիքը որ անձրեւին ներս մտնելը կ'արգիլէ : Տանը մէջտեղ բաց տեղ մը կը նշմարեմ, բակն է՝ որուն չնորհիւ տունը միշտ օգաւէտ կը մնայ : Կը տեսնեմ տակաւին սանդուխ մը և առանձին սենեակներ՝ բնակիչներուն համար. նաեւ դուռներ, կղզիանքներ, պատուհաններ, վառարան մը և ամէն տեսակ կարասիներ :

Կա՛յ մարդ մը որ ըսէ թէ այդ տունը իր բոլոր մասերով, իր կարասիներով ու բաժանումներով պարզ գիպուածի մը արդիւնքն է. ո՛վ կրնայ ըսել թէ այդ տունը ինքնիրենը շինուած է : Ո՛չ սք, անսնկ չէ :

Մարդկային աշխատութեան մը արդիւնքն է անիկա, ճարտարապետը անոր յատակագիծը շինած է, որմնադիրը՝ պատերը հիւսած է, ատաղձագործը՝ փայտէ մասերը պատրաստած է, կահագործը՝ կարասիները տեղաւորած է, վերջապէս շատ մը արհեստագործներ աշխատած են անոր համար :

\* \* \*

Գառնանք հիմայ և քննենք այս աշխարհը ուր կը բնակինք : Որչա՛ր փ աւելի մեծ զօրութեան մը արդիւնքն է անիկա : Հոս ալ ամէն բան չափուած, ձեւուած, խնամքով և ուշադրութեամբ պատրաստուած է : Ծով, լեռ, լիճ, գետ, վերջապէս ամէն բան իր յարմար տեղը դրուած է, և անսնկ խելացի բաժանումով մը որ այդ տեղին պէտքերը գոհացնէ, այդ տեղի մարդոց բարիք մը դառնայ : Հազար անգամ աւելի արուեստ, աւելի կարգ կանոն և իմաստութիւն պէտք եղած է այս աշխարհին պատրաստութեան համար :

Ուրեմն կրնա՞նք ըսել թէ աշխարհ ինքնիրեն շինուած է, գիպուածի մը արդիւնքն է, յետոյ կրնա՞նք

մտածել թէ այնքան հրոշայիւք և այնքան գեղեցիկութիւն մարդու ձեռքով պատրաստուած են : Ո՛չ անշուշտ :

Մարդիկ այդ աշխատութեան ամէնէն աննշան մէկ մասն իսկ չեն կրնար կատարել : Իրենցմէ վեր, իրենցմէ զօրաւոր ձեռքի մը արդիւնքն է այդ աշխատութիւնը : Աստուծոյ ձեռքն է ատիկա, Աստուծոյ ստեղծիչ ձեռքը որ բան մը չէ մոռցած մեր հանգստութեան ու մեր ապահովութեան համար :

Ս Ս Տ Ո Ւ Ա Մ

— Ո՞վ յուսափայլ արեգիկն,  
ճառագայթներ է սրած,  
Եւ ակնափառնց գիշերիկն  
Լուսիկն, աստղեր քակկազիկն :  
— Մեր արարիչ հայրն Աստուած :

— Անհուն երկնի՛ կայրոյս գոյն  
Եւ խոտիկն ո՞վ է սրած  
Այն կանաւնչն՝ ուր փարփրուն  
Յօդերն հանգչիչ գանկն այգուն :  
— Մեր արարիչ հայրն Աստուած :

— Ո՞վ հոստէս պուրակիկն  
Շոթ, եւ քրոջնոյն է սրած  
Այն փետուրներ փափկազիկն  
Որով սրնայ նա երկիկն :  
— Մեր արարիչ հայրն Աստուած :

— Ո՞վ աշխարհիս միևն յե ցարդ  
Ամէն պիտոյք է սրած,

Մերկ դաշին իսկ իբրեւ զարդ  
Տարով շուշան, յսամիկ, վարդ:

— Մեր արարիչ հայրն Ասումս

— Ո՞վ քեզ գրգռող բարի մօր  
Այն վեհ գորովն է սրած,

Որով վրասդ, ամէն օր  
Կը գուրգուրաց սիրով նոր:

— Մեր արարիչ հայրն Ասումս:

— Ո՞վ քեզ քաղցրահամ գեղունակ  
Քեզ պրտուղներ է սրած,

Եւ այն ճաշն որ շարունակ  
Լեցնէ փոքրիկ քո պրնակ:

— Մեր արարիչ հայրն Ասումս:

**Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ**

Բառերու նշանակութիւնը . — Պորակ՝ պղտիկ ան-  
տաս: Գեղունակ՝ գեղեցիկ:

**ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՇՏՈՒՄԸ**

— Ի՞նչպէս պէտք է պաշտել Հայր Աստուածը, հար-  
ցուցին խումբ մը աշակերտներ իրենց դաստիարակին:

Ահա թէ ի՞նչ պատասխանեց դաստիարակը:

— Քրիստոնեայ եկեղեցիներ կամ ժողովուրդներ  
միշտ իրենց նպատակ ունեցած են աղօթք և օրհնու-  
թիւն բարձրացնել Աստուծոյ, փոխարէն այն անհամար  
բարիքներուն զորս Աստուած կը բաշխէ իրենց: Ասոր  
«Պաշտամունք» կ'ըսուի: Ամէն մարդ կրնայ ուզած կեր-  
պովը կատարել իր պաշտամունքը, բայց որպէս զի իրենց  
այդ նպատակը աւելի ոյժ ստանայ, մարդիկ եկեղեցիին  
մէջ երեք ձեւով կը կատարեն Աստուծոյ պաշտումը:

«Առաջին ձեւը կը կոչենք «Աղօթք» . — Եկեղեցոյ  
գլխաւոր պաշտօնեան ատեան կ'ելլէ ու մինակը՝ ժողո-  
վուրդին խնդրուածքը կը բացատրէ Աստուծոյ. ժողո-  
վուրդը մտիկ կ'ընէ, կը հետեւի իրեն, և վերջն ալ  
«ամէն» գոչելով պաշտօնեային ըսածները կը հաստատէ  
ու կը կրկնէ:

«Երկրորդ ձեւը կը կոչուի «Քարոզ» . — Եկեղեցոյ  
երկրորդական պաշտօնեան կը բացատրէ թէ ինչո՞ւ և  
ի՞նչ բանի համար պէտք է աղօթել: Եւ ժողովուրդը,  
պաշտօնեային հրաւերին հետեւելով, իր հառաչանքը  
կ'արձակէ՝ «Տէր ողորմեա», «յիշեա՛ տէր», «լ՛ժը տէր»  
կամ ասոնց նման համառօտ խօսքերով:

«Երրորդ ձեւը կը կոչուի «Երգ» . — Կարևոր  
աղօթքները, որոշ բառերով ու ձևերով բացատրուած,  
կը սորվեցուն ժողովուրդին՝ որ աղայութենէ կը վար-  
ժուի անոնց, կը սիրէ զանոնք, և եկեղեցիին մէջ միա-  
սին կը կրկնէ: Բայց որպէս զի ամէնքը մէկ կրկնած

ատեննին տարբեր տարբեր ձայներ չհաննեն և պաշտամունքները չխանգարեն, պէտք եղած է հաստատել որոշ «չափ» մը որուն շնորհիւ ամէնքը մէկ կարենան միեւնոյն ձայնով ընել իրենց պաշտամունքը: Այդ չափն ալ բնական կերպով առաջ բերած է «Եղանակ»ը: Եւ չափով ու եղանակով ըստած բաներն են որ «երգ» կը կոչուին»:

ՔՆՆՍԱՍԷՐ

## 2. ԿՐՕՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

### Գ Ե Ղ Ե Ց Ի Կ Խ Օ Ս Բ Ե Ր

— Ի՞նչ մը բան Եստեղու համար մարդիկ երկար նամբորդութիւններ կ'ընեն, բայց քանի՞նք կան, որոնք տեղեկութիւններ անգամ չեն Եստեղու յաւիտեան կեանքի մը Եստեղու համար: (Թ. ԳԵՄԲԱՅԻ)

— Ո՞վ որ Եստ ուժով կը վարի կեանքի հանդիմանումը, կ'ապացուցանէ քէ բան մը չէ զգացած կրօնէն: (ՇԼԱՅՐՄԱՍԷՐ)

— Առանց կրօնի՞ նճարիս գիտութիւն ու նճարիս բարոյական չկայ:

### Գ Ա Գ Ա Ղ Ի Ն Հ Ա Մ Ա Ր

Օր մը հանրակառքով կը ճամբորդէի. մէկ կողմերնիս կար գեղեցիկ պարտէզ մը ուր զուարթ նուազածունք կ'երգէին, և միւս կողմը կային բազմաթիւ սրճարաններ որոնց մարմարէ սեղաններուն շուրջը հա-

րիւրաւոր մարդիկ թուղթ կը խաղային, իրար խորհրով դրամ շահելու համար:

Հանրակառքը կանգ առաւ: Տղու մը յուզարկաւորութեան թափօրը կը յառաջանար վարէն: Քահանան կը հետեւէր վեր բարձրացած խաչին՝ որուն վրայ սեւ շղարջ մը կը ծածանէր:

Կրօնական տխուր երգ մը արցունք կը խլէր յուզարկաւորներու աչքերէն: Մեռնողին անմեղ դէմքը երբէք չէր ցուցներ թէ աշխարհէս բաժնուած անցորդ մըն էր ինքը: Աւելի՛ խաղաղ քունով քնացողի մը կը նմանէր անիկա որ քիչ մը վերջը նորէն պիտի բանար իր աչքերը, փոխանակ մօրը՝ հրեշտակներուն գիրկին մէջ:

Թափօրը մօտեցաւ խունկի անոյշ բուրմունքով, և բողբոլին կերպարանափոխ ըրաւ չորս դին. պարտէզէն երգերը լռեցին, և սրճարանին մէջ՝ դեռ պահ մը առաջ այնքան վայրենիքէն կուռող հայհոյող խաղամուկները ոտքի ելան յանկարծ, գլխարկին ձեռքերնին բռնած, դազազին հանդէպ նուիրական պարտականութիւն մը կատարելու համար:

Այդ զգացումը որ փոխեց ամէնուն սիրան ու դէմքը՝ կրօնքը արթնցուց: Իրենց խորհրդալի զբաղումներուն մէջ, աղուն դազազը յանկարծ յիշեցուց թէ յարգանքի արժանի բան մը կայ, կրօնքը, որուն շատ հակառակ գործ մը կը տեսնեն այդպէս իրար խորհրով, իրարու հայհոյելով: Ամէնքն ալ զգացին թէ խաղերով ու կուխերով, խարդախութիւններով և հայհոյութիւններով անցուած կեանք մը որքան պարապ բան մըն է, երբ մահը կայ, և այդ մահէն վերջ ալ յաւիտեանական կեանք մը որ առաքինի մարդերուն համար միայն անուշութիւններ ունի: Եւ խոյն, ամէնքն ալ ոտքի ելան ու խոնարհեցան:

Ասիկա չէ սակայն Աստուծոյ հաճելի կրօնասիրու-



Թիւնը : Այդ մարդիկը՝ կրօնքը յարգելու և իրենց անվայել զբաղումը դադարեցնելու համար պէտք չէին սպասել որ յուզարկաւորութեան թափօր մը անցնի և իրենց յիշեցնէ թէ շատ գէշ բան մը կ'ընեն : Այդ կրօնասիրութիւնը պէտք էին իրենց մէջ ունենալ ամէն ժամ, ամէն վայրկեան, պէտք էին միշտ յարգել զայն, միշտ խոնարհիլ անոր առջեւ, և զգուշանալ անոր հակառակող գործ մը տեսնելէ :

Այս է ճշմարիտ, և հետեւաբար Աստուծոյ հաճելի կրօնասիրութիւնը : **ՄՈՒՇԵՂ՝ ՎԱՐԴԱՊԵՏ**

**Մ Ո Մ Ը**

Տիրավօր անոյշ ու շրնորհաշի  
Ներոյ նայուածիւ պսակերիւ առջեր,  
Նիկար, անարխաւ մոկր կր հաշի,  
Իր յոյսէ հոգիւ այստի միւն չեր :

Այդ վրսիս մոկի վառոյ յեզուակէն  
Գոհ է Յիսուսի մայրիկն երկնայիկն,  
Ու սեւե'ֆ, սեփ սեւ լաշակիկն սակէն  
Իր մեղր աշուկներն աղաւոր կր նայիկն :

Մոկր կր հաշի ու կր այստի ալ,  
Հո'ն է իր հաճոյքն ու իր արժանիք.  
— Պաշսաւունքի մէջ յոռ ոչրն յանալ  
Հասնումն ալ արբիռ, անոյ տրջանիկ :

**Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Բառերու նշանակութիւնը. — Վշիս՝ նիհար : Լաշակ՝ գլխու ծածկոց : Արբշտ՝ գինով :

**Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն**

Մանկութեան յիշատակներուն դառնալը որքա՞ն կը յուզէ մարդս : Անմեղութեան, միամիտ վստահութեան, անխեթ խղճի, անխառն հաւատքի այդ մատաղ օրերէն զով շունջ մը խնկարոյր կը փչէ մեր քիչ թէ շատ թուամած սրտին վրայ, և անոնց յիշատակը կենդանանալով կարօտ մը կը գոյացնէ հոգւոյն մէջ :

Մանկութեան օրերու այս յիշատակը անվրիպելի ու զօրաւոր կերպով կը գոյանայ եկեղեցւոյ մէջ, և մեր կորսնցուցած սիրելիներուն նկատմամբ :

Այս մասին, իմ կրած սպաւորութիւնս, կը յուսամ թէ ինծի յատուկ բան մը չէ : Եկեղեցւոյ երգերէն խորապէս յուզուած եմ յաճախ : Երբեմն մանուկներու հրեշտակային ձայներն են որ կ'երգեն զանոնք, — որոնց նման իմն ալ ատեն մը կը բարձրանար դէպի տաճարին գմբէթը, — և երբեմն ալ քահանաներու լուրջ ու բամբ ձայները : Երբ այդ մեղեդիները կը լսեմ, ինծի անանկ կուգայ թէ ամբողջ մանկութիւնս է որ կը կենդանանայ, անոյշ ու պաշտելի ձայներու և դէմքերու երան մը որ կարծես ծածկուած բոցնէ մը դուրս կ'իջնայ, թռիչ կ'առնէ, կը քեւածի տաճարին մէջ, խառնուելով սրբազան երգերուն և պատկերներուն :

Այս տեսակ միջավայրի մը մէջ, ժամերով ինքզինքս մոռցած՝ մնացած եմ շղթայուած, կնոջ մը պէս լալով : Յետոյ երբ դուրս ելած եմ եկեղեցիէն, զգացած եմ որ հոգիս աւելի թեթեւցած է ու միշտ կը թեթեւնայ աղնիւ զգացումներու տակ :

Ամէնուն կամ գոնէ շատերուն համար այսպէս չէ՞ արդէն : Այս սպաւորութիւնը չե՞ն ունենար անոնք որ

քիչ կամ շատ բարեպաշտ մանկութիւն մը ունեցած են, որոնք իրենց պատանեկութեան ժամանակ Աստուծոյ ու Յիսուսի անուններուն և Աւետարանի պատուէրնէրուն կրկնուիլը լսած են իրենց հօրն ու մօրը կողմէ:

**Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ**

Բառերու նշանակութիւնը. — Անխեք՝ առանց խայթի: Մեղեղի՝ եկեղեցական երգ: Երա՛ւ՝ խումբ: Թե՛ւ շածեղ՝ թեւերը շարժել:

**3. ՕՐԷՆՔ**

**Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Կ Օ Ս Բ Ե Բ**

— Մարդու մը առաջին պարսկանութիւնն է հպատակիլ իր երկրին օրէնքներուն և յարգել Տալ զանոնք:

(Ա. ՖՐԱՆՔ)

— Օրէնքն է որ մարդս կը յարգուի իր նմաններուն կեանքը, ստացուածքը, հանգստութիւնը, խիղճն ու հաւատքը յարգելու՝ արդարութեան անուանով:

(Շ. ԼԷՎԷՔ)

— Ամէնքս ալ, որպէս զի հանգիստ ապրինք, պէտք է օրէնքներու գիւղը դառնանք:

— Այն որ օրէնքը յարգել չգիտեր, չի կրնար բարի եւ առաքինի մարդ մը ըլլալ:

**Մ Ա Ր Կ Ո Ս Ի Ն Պ Ա Տ Ի Ժ Է**

Երկու եզրայրներ՝ Միհրան և Մարկոս, այն աստիճան չարութեամբ կը վարուէին իրարու հետ որ օր մը հայրերնին ասիպուեցաւ ըսել իրենց.

— Տղաքս, կը տեսնեմ որ բնաւ միտք չունիք հանդարտ կենալու: Մինչև այսօր խրատեցի ձեզ. բայց մտիկ չըրիք: Ձեզի օրէնք պէտք է. ալ ասկէ վերջ ձեզմէ ո՛վ որ չարութիւն ընէ պիտի պատժուի: Ձանացէք հանդարտ կենալ որպէս զի ձեր անուշեղէններէն, ձեր կիրակի օրուան պատգամներէն չզրկուիք: Թող այս պատուէրս օրէնք ըլլայ ձեզի համար:

Սակայն յաջորդ օրը՝

— Օրէնքս ալ ինչ է, ըսաւ Մարկոս, և քանակով այն աստիճան ուժով զարկաւ Միհրանի մատներուն որ սկսաւ արիւն դալ: Միհրանի աղաղակներուն վրայ՝ հայրերնին ներս վազեց, և հասկնալով անցած դարձածը, ըսաւ Մարկոսին.

— Դարձեալ ակամջ չկախեցիր խօսքերուս, անանկ չէ՞, ուրեմն պէտք է օրէնքը գործադրութեան դնել և քեզ պատժել: Այս իրիկուան սեղանին վրայ անուշեղէն չպիտի արուի քեզի:

Իրաւ ալ, իրիկունը, Մարկոս առանց անուշեղէնի մնաց, մինչդեռ Միհրան անյադարար կ'ուտէր իր բաժինը:

Մարկոս յուզուեցաւ և սկսաւ լալ:

— Չաւակս, տեսար թէ որչափ գէշ բան է պատժուիլը. կը յուսամ որ այս դասը բաւական կ'ըլլայ քեզի և ուրիշ անգամ հանդարտ կը կենաս, և զիս չես ասիպեր որ կրկին օրէնքը գործադրեմ:

— Չեմ ըներ, հայր, չեմ ըներ, ըսաւ Մարկոս հեծկլտալով, բայց վերցո՛ւր այդ օրէնքը, շատ գէշ բան է այդ օրէնքը:

— Չէ, զաւակս, չէ՛, յարեց հայրը, օրէնքը գէշ բան մը չէ, և պէտք է միշտ երախտապարտ մնանք առանց որոնք արդար օրէնքներ հաստատած են:

Եթէ օրէնքը չըլլար, դուն այսպէս դիւրաւ կարգի  
 չպիտի դայիր և կրկին պիտի շարունակէիր շարութիւն  
 ընել եղջօրդ: Խելացի մարդիկ ալ մտածած են օրէնք-  
 ներ դնել ամբողջ մարդկութեան համար, և այդ  
 օրէնքներուն շնորհիւ է որ շատ մը գէշութիւններու  
 առաջքը առնուած է. նաեւ անոնցմով է որ չարագործ-  
 ներ իրենց արժանի պատիժը գտած են ու կը գտնեն:  
 Շատեր կուզեն գողութիւն ընել, բայց չեն ըներ, որով-  
 հետեւ գիտեն թէ օրէնք կայ, և թէ այդ օրէնքը կրնայ  
 զիրենք պատժել. մարդասպաններն ալ, խաբէրաներն  
 ալ, վերջապէս բոլոր չարագործները՝ օրէնքէն վախնալ-  
 նուն համար է որ հանդարտ կը նստին. օրէնքը մեծ բա-  
 րիք մըն է, և այն ժողովուրդները որոնք օրէնք չու-  
 նին, ամէնէն դժբաղդ ժողովուրդներն են: Պէտք է  
 սիրենք օրէնքը, պէտք է յարգենք զայն, և միշտ պէտք  
 է այնպէս ապրինք որ օրէնքը երբէք չպատժէ զմեզ:

Մարկոս լացը դադրեցուց. բնաւ չէր կարծեր թէ  
 այն օրէնքը զոր այնքան գէշ բան մը կը նկատէր կրնար  
 այդքան մեծ օգուտներ ունենալ:



Պ Ո Ղ Ե Ր Ը

Երկու գողեր, ժիւ ու անարպիկ,  
 — Մոռիկն ապաստան —  
 Պատերէ վեր, ոսփով բուպիկ  
 Շուրջաւորով իբրեւ կապիկ,  
 Վերնայարկի՝ շրփեղ մի սան՝  
 Պասուսանէն ներս մըսան:

Տընեցիքն էիկն բացակայ:

Գողերն առանձին,

Անկող, անվախ եւ անվրկայ,  
 Ոսկի, գոհար, քանզ առարկայ,  
 Մէջ սրահին, ննջախոցին՝  
 Ի՛նչ որ գրասն՝ հաւաքեցին:

Չնկեղէ ետքն արքուն փոքրով

Ամէն ծակ ու ծուկ,

Սանդուխներէն վար իջնելով  
 Դուրս կ'երթին յուր, անվրդով,  
 Խոհանոցին դռնէն ցածուկ,  
 Երբ միև՝ ձայնով կ'աւազուկ՝

«Ընկեր, ըստ, մեկի այս գիշեր,

«Ինչո՞ւ հոս մըսանիք.

«Այս յրաժնիս հարկաւ գեշ եր...»

«Ոսփերս ծակէն կարծես փոշեր,

«Կը նեղէ զիս իմ խղձմըսանիք...»

«Մեզ կը սպառնայ մե՞ծ վըրսանիք...»

Միսն, սպշահար, յարեց. — «Ընկե՛ր,

«Չընե՛կ շուսախոյ.

«Խիղձ ընեղն, էհ, մե՞զ է ինկեր...»

«Ինչ որ ուրիշն ունի, դո՛ւն կեր:

«Ապրե՛, անխոռով եւ անայրայր.

«Շատեր ոչխար են — մեկի՛ գայր:»

— « Ո՛յ, ո՛յ, պնդեց միայն ևնրէն,

« Դարձի գաւ աշար.

« Գողն՝ արարած մ՛է ւնօրէն,

« Եւ վախճանն ալ՝ հաւանօրէն

« Դասարանին վճռովն հրգօր,

« Բա՛ւն է կաւ՝ ախար : »

— « Բաւն է ախար՝ ըսիր... — Հարկա՛ւ,

« Թերեւս կախարդա՛ն...

« Երբանք պատուով շահիլ սակա... :

— « Օ՛ն, կծկերու ասեմն եկա... : »

Եւ հոն քողով գողօն, քալան,

Դռնէն անձայն դուրս երան :

**Ս. Ա. Փ. Ս. Ա. Ն.**

Բառերու նշանակութիւնը . — Ժիր՝ կարիճ : Թանգ՝ սուղ : Թարան՝ գողօն :

**ԸՆԿՈՒԶԵՆԻՆ ՃԻՆՂԵՐԸ**

Դաւիթի պարտեղին մէջ մեծ ընկուղենի մը կար, զոր իր հայրը հասցուցած էր. ընկուղենիին ճիւղերուն մէկ մասը պատի մը վրայէն դրացի Յովհաննէսին պարտեղը անցած էին և արեւը խափանելով՝ պատճառ կըլլային որ Յովհաննէսի տնկած ծաղիկները մեռնին :

Օր մը, Յովհաննէս ըսաւ Դաւիթին .

— Դրացի՛, քու ընկուղենիդ կը սպաննէ կոր իմ ծաղիկներս . շատ մեծ բարիք մը ըրած պիտի ըլլաս եթէ իմ պարտեղս անցած ճիւղերը կտրես . ասով ծառին վնաս մը չի գար :

Դաւիթ որ այն օրը բարկացած էր արդէն .

— Քեզի ի՞նչ իմ ծառիս ճիւղերը, ըսաւ, եթէ դուն քու ծաղիկներդ կը հոգաս, ես ալ իմ ընկուղենիս հոգ կը տանիմ . չպիտի կտրեմ ճիւղերը :

Յովհաննէս շատ բարի և արդարասէր մարդ մըն էր :

— Մի՛ բարկանար, բարեկամս, ըսաւ, ինչո՞ւ գըժտինք ասանկ բանի մը համար, տակաւին երկար ժամանակ քով քովի պիտի ապրինք :

Ու ելաւ դնաց :


Քանի մը օր վերջ, Յովհաննէս ուրիշ դրացի մը կանչեց, Մարգարը, և ըսաւ անոր .

— Դուն թէ՛ իմ և թէ՛ Դաւիթի բարեկամն ես . կ'երթաս կ'ըսես իրեն որ ես իրաւունք ունիմ իր ծառը արմատէն կտրել տալու : Չե՞ս դիտեր, օրէնք մը կայ՝ որուն համաձայն շատ մեծ բարձրութիւններու համող ծառեր պէտք է որ դրացիի մը ստացուած քէն առնուազն երկու կանգուն հեռու տնկուած ըլլան : Արդ, Դաւիթի ընկուղենին իմ պարտեղիս պատէն մէկ ու կէս կանգուն հեռու միայն կը գտնուի, որով իրաւունք ունիմ դայն արմատէն կտրել տալու : Բայց ես չեմ ուզեր կտրել տալ : Դիտեմ որ այդ ընկուղենին հօրը յիշատակն է, միայն կը խնդրեմ որ իմ պարտեղիս վրայ երկնցած ճիւղերը կտրէ :

Դաւիթ՝ երբ Մարգարէն լսեց այս խօսքերը, շատ յուզուեցաւ Յովհաննէսի վեհանձնութենէն և անմիջապէս կտրեց անոր պարտեղին վրայ երկնցող ճիւղերը :

Երկուքն ալ հիմայ շատ լաւ բարեկամներ դարցած են :

Եթէ օրէնք չըլլար, անշուշտ Դաւիթ չպիտի ուզէր ընկուզենիին ճիւղերը կտրել; և երկուքն ալ մինչև երկնց կեանքին վերջը, իրարու թշնամի պիտի մնային, և պիտի աշխատէին իրարու գէշութիւն ընելու:



#### 4. ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

##### ԳԵՂԵՅԻԿ ԽՕՍՔԵՐ

— Երջանիկ է այն մտղը որ կրնայ փոխարինել մօրմէն ճեաժ գգուանքն ու բարիքը: Աւելի երջանիկ է ան որ կրնայ իր առաջին քայլերը պաշտպանողին ձեռարեան գօրավիզը ըլլալ:

— Ոչ ոք կը նուաստանայ իր ծնողքին հնազանդելով, իր ծնողքին առջև զուխ ծնելով: Ամէնէն նուիրական հնազանդութիւնն է ասիկա:

— Ծնողքը սիրող տղայ մը երբէք չպիտի ընէ անանկ գործ մը որ կարենայ զանոնք շիկնեցնել կամ լացնել:

(Բ.ԺԱՆԷ)

##### Մ Ա Յ Ր Ս

Մինչդեռ մանուկ էի, հայրս մնտաւ, որը մնացի, բայց որրութիւնը չճանչցայ, այնչա՛փ սէր և անձնութիւն ցոյց կուտար մայրս. անիկա իր զաւակներուն համար կ'ապրէր, որովհետեւ ո՛չ հաճոյք և ո՛չ բաղձանք ունէր իր անձին համար: Կեանքս հանդարտօրէն կը սա-

հէր ընտանեկան անդորրաւետ յարկին և մայրենի սիրոյն հովանիին տակ:

— Մայր, կ'ըսէի, սրչափ քաղցր է քեզի պէս եղական ծնողք մը ունենալը:

— Զաւակս, կը պատասխանէր համեստութեամբ, ամէն մայր ինծի պէս է:

Եւ ես անհամբերութեամբ կը յարէի.

— Եթէ տեսածիս ու դատածիս վրայ պիտի հիմնեմ կարծիքս՝ ըսածդ տարակուսելի է: Արդարեւ մայրութիւնը սիրոյ և անձնութեան հանք մըն է, բայց աւելի կամ նուազ ընտիր տեսակէ չի՛ կրնար գոյսնալ այդ հանքը:

Երբեմն ան՝ իր մահուան ակնարկութիւն կ'ընէր. ես սովալով թող չէի տար որ խօսքը առաջ տանի.

— Ի՛նչ, կ'ըսէր զարհուրելով, կ'ուզե՛ս որ ես դատապարտուիմ վրադ լալու, աղջիկս, մտածէ անգամ մը թէ որչափ անգութ է քու բաղձանքդ: Աստուած լաւ կարգադրութիւն մը ըրած է, աշխարհէս դուրս ճամբորդելու առաջնութիւնը ծնողքներուն սահմանելով:

Եւ ես նեղանալով, իր խօսքը կ'ընդհատէի, չուզելով անսալ այդ խորհրդածութեանց, որոնք ծանր հարուած մը կուտային սրտիս:

\* \* \*

Մինչդեռ տարիներու հետքերը կը դիզուէին մօրս սպիտակ գլխուն վրայ, անոնց ծանրութիւնը հոգիս կը ճնշէր և ամէն անգամ որ տարի մըն ալ անցնէր կ'ըսէի ինքնիրենս. « Աստուած այս տարի ալ մայրս ինծի պարգևեց, երանի՛ յաշորդ տարի ալ կարենայի նոյնը ըսել »:

Երբ մարդ կեանքի գազաթին կը մօտենայ, ալ ամէն ճէկ քայլ վտանգաւոր կը գտնուայ, որովհետեւ ան կորսըն-

քուցած է իր անձնական ոյժը, և սխալ կամ ակար-  
քայլ մը դիւրաւ կրնայ զայն կեանքի վիճին մէջ գլորել :  
Վախնալով կը նայէի այդ գաղաթին, ու կը մտա-  
ծէի թէ արդեօք մայրս պիտի կրնայ համարի անոր :

Բայց մինչդեռ մայրս իր ճամբան կը շարունակէր,  
յանկարծ քայլերը դեղեւեցան : Մեծ եղաւ անոր կրած  
ցնցումը, սարսափելի եղաւ հետեւանքը մեղի համար :

Ո՛հ, մօրս կեանքը յստակ և զեղեցիկ լիճ մըն էր  
որուն հանդարտ և շողշողուն ջուրերը կը նսեմանային  
յաճախ մահուան թուխ սլատկերներով :

Հիմայ ի զս՛ւր շուրջս կը նայիմ, մա՛յր, ի զս՛ւր դքեզ  
կը փնտռեմ, և երբ կը մտածեմ թէ ալ չպիտի տեսնեմ  
հոս դքեզ՝ կարծես թէ միտքս կը ցնորի :

Ամիս մը անցաւ այն զարհուրելի օրէն ի վեր ուր  
բերանս մայր անունը հնչելէ դադրեցաւ : Եւ սակայն  
սրբաբի քաղցր կը հնչէ այդ անունը :

ՄԻՐՈՒՆԻ ՏԻՒՍԱՐ

ՄԱՅԻՍԻ ՀԻՆԳԻՆ

Անցան տես աստերեք սարի...

— Ասումս, ինձ համար գերագակց բարի,  
Ուզեց որ ձեր քաղցր իդր կասարի

Մայիսի հինգին :

Եւ անեռքեան ծոցէն կապուսակ  
Կեանք սարմ աշխարհ որկեց զիս շիսակ,  
Որ ժրպիտ, բոյր, երգ, այգ ըրաւ յսակ,  
Պրճնեմ զարունը ձեր սիրոյ կեանքին :

\* \* \*

Մօրկանս անուշիկ ձայնովն օրօրուն,  
Ձեր գիրկին մէջ, ձեր ջերմ գրգռակներուն  
Ներքեւ փրփրեցայ — նրանս վարդերուն

Մայիսի հինգին :

Եւ այսօր հագիւ մասդաշ աղջրեակ,  
Բոյնիկ եզր երսժ բուշնոյ հանգունակ,  
Ես կը վայելեմ հեղճ ու գեղունակ  
Շէնչոյ սակառը ձեր սիրոյ կեանքին :

\* \* \*

Իմ պարսֆն ու պաշտօնս, հա՛նէի, քեքե՛ւ,  
Ո՛հ, շատ շա՛ր գիտեմ ես այսուհետեւ,  
Մոռնալ թէ ծրնունդ եմ եւ կարճատեւ

Մայիսի հինգին :

Բաղդրաքեան, շնորհաց փայլովը կրկին,  
Հրճանակն ու պարծանքն ըրաւ այս յարկին  
Որպէս զի ինձնով, անտակ ժրպսագին  
Սակի Աշունը ձեր սիրոյ կեանքին :

\* \* \*

Ո՛հ, բոյ երկինքէն մեզ Ասումս արդար,  
Ձեր շոքն անպակաս ընէ անդադար,  
Որ երկար ատեն հասնիք, զուարթ յար,

Մայիսի հինգին :

Վիշ ու ցատեք գերժ բոլորովին,  
Ձեր զարակներուն անշէջ գորովին  
Վառ ծաղիկներովն բոյ միշտ զարդարուին  
Ձիւնն ու ձմեռը ձեր սիրոյ կեանքին :

Ս. Ա. Բ. Ս. Փ. Ն. Ս. Ս. Ն.

Բառերու նշանակութիւնը . — Հանգումակ՝ նման :  
Վառ՝ փայլուն :

Կ Ա Ղ Ա Ն Գ Ի Ն Ո Ւ Ի Բ Ը

Ա.

Կանանց ծածկոցով սեղանին առջեւ որուն վրայ պզտիկ լամբար մը կը վառէր, գլուխ զլխի կը նըստէին մայր ու աղայ ամէն գիշեր : Տիկին Աննիկ կարի խոշոր ծրարը քովը՝ ասեղ ծեծելով շարունակ, մինչ Վահրամ յաջորդ օրուան դասերը կը պատրաստէր : Խեղճ կնոջ հաստատ մտածումն էր աւելի, դրամ շահիլ . ինչ փափաքներ ունէր Վահրամին համար, բայց որչափ ալ աշխատէր բան մը չէր կրնար աւելցնել . ինչ ընէր, ինչ ընէր . . . Եթէ կարի մեքենայ մը ունենայի . . . գոչեց բարձր ձայնով : Վահրամ աչքերը վեր առաւ, մօրը նայեցաւ, յետոյ նորէն գլուխը կախեց անխօսուկ : Եթէ մեքենայ մը ունենար, անշուշտ այդքան չէր յոգնէր, աչքերը այդքան չէին տկարանար, և մասները չէին ծակծկեր : Ինչ ընէր մօրը մեքենայ մը գնելու համար :

Բ.

Երկար ատենէ ի վեր բոլորովին փոխուած էր Վահրամ . առտունները լուսցածին պէս փողոց կ'իջնար և իրիկունները մութը կոխելէն առաջ դռնէն ներս չէր մըտնէր : Ամառը փոշիներուն մէջ թաթխուած, յոգնած, քրտնած, ձմեռը մինչև կէս մէջքը ցեխերու մէջ, ձեռքերը ոտքերը ցուրտէն սառած, կոշիկներուն մէջ ջուր

չեցուած տուն կուգար : Ալ գիշերը կանանց սեղանին առջեւ չէր նստեր իրեն հետ ու կերակուրին տակ քունը աչքերէն կը վազէր, շատ անգամ եկածին պէս անկողին կ'իջնար առանց բերանը պատառ մը բան դնելու : Խեղճ մօրը սիրաբ փորը կը հասնէր . ո՞ւր կ'երթար այսչափ կանուխ և ինչո՞ւ ուշ կը դառնար : Ի դուր կը ջանար աղան հարցութիւր ձեռք . միշտ անորոշ պատասխաններ կը ստանար :

Գ.

Սակայն եթէ օր մը Տիկին Աննիկ անոր ետեւէն երթար, պիտի տեսնէր որ փոխանակ Օրթագիւղի շոգեհաւը մտնելու, ցամաքի ճամբան կը բռնէր Վահրամ, և ոտքով կ'երթար մինչև Ղալաթիա, երբեմն երբեմն կենալով ճամբուն եզերքը շունչ առնելու համար : Ու նորէն կը շարունակէր իր տաժանելի ուղեւորութիւնը, այդ աւելորդ ծախքը խնայելու համար : Չիւնին, բուքին մէջ կը քալէր ու կը քալէր, սառուցի կտորուանքներէն սահելով իջնալով շատ անգամ երբ իր ոտքերը ալ չէին բռնէր : Երբեմն բուքը այնքան թանձր ու սաստիկ կ'ըլլար որ կոխած տեղը չէր տեսնէր : Այն պահուն կը փորձուէր անկէ անցնող թրամուէլի մը մէջ նետուիլ . բայց հզօր զգացում մը այդ տկար աղան կը կեցնէր . ինչ էր այդ գաղանիքը, մարդ չը գիտէր :

Դ.

Կաղանդին առտուն կանուխ երբ Տիկին Աննիկ անկողնէն ելաւ, Վահրամ կը քնանար տակաւին, սուտ քուն եղած էր : Գորովալից մայրը ոտքին մասններուն վրայ կոխելով կամաց կամաց քովի սննեակը անցաւ իր սովորական ժողուըտուքները ընելու . կանանց ծածկոցով

սեղանին վրայ կը կենային առջի իրիկուընէ մնացած պատուի աւելցուքները սղտիկ պնակներու մէջ :

Յանկարծ բան մը զարկաւ աչքին : Սեղանին մէջ-տեղը դրուած կարի մեքենայ մըն էր , նորնոր փայլուն ընկուզենիէ կափարիչով մը , որուն վրան ալ թուղթ մը փակցուցած էին : Մօտէն նայեցաւ . իր սղուն գիրն էր ու կարգաց « Նուէր Կաղանդի՝ մամայիս համար » :

— Մի՛ սրբողիր, մամա , գոչեց Վահրամ մօրը փաթ-թուելով , շողենաւի համար տուած դրամովդ առի , անոր համար իրիկունները ուշ կը մնայի :

Ու համբոյրներով կը ծածկէր մայրը , սրբելով անոր արցունքները , որոնք այսերէն վար կը վազէին :

**ՍԻՊԻՒ**



**5. ԳԹԱՍՐՏՈՒԹԻՒՆ**

**Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Ե Օ Ս Գ Ե Բ**

— Մի՛ց գրաստութեան առիք մը փըն-սըւեցէք, հոգ չէ թէ նեղուիք այդ պատ-հառաւ :

— Երբ ձեռքը չի կրնար գրալ, սիւսը պէտք է գրայ :

— Ողորմութիւն մը տուած ասեմնիդ ջա-նացէք աղփաք մխիթարել գոհունակու-րեան արսայայտութիւններով : Աղփաք այնպէս պէտք է կարծէ թէ դուք հանոյք կը գգաք իրեն ողորմելով :

(Ս. Յ. ՈՍԿԵԲԵՐԱՆ)

— Աղփաքին անմիջական պէտքերը գո-հացնելով հանդերձ պէտք է աշխատիլ գայն բուսառութենէ փրկելու եւ արգի-լելու որ նորէն բուսառ չի դառնայ :

(Ժ. ՊԱՌՆԻ)

**Հ Ի Ւ Ա Ն Դ Մ ՈՒ Ժ Ի Բ Ը**

Ահաւասիկ ինչ որ տեսայ շրջագայութիւններէս մէ-կուն միջոցին :

Մոռժիխներ կը դառնային քաղաքէն ուր կ'աշխատէին իբր օգնական որմնաղիր . իրենցմէ մէկը հիւանդացաւ եւ իր ընկերներէն ետ մնաց ու շատ մը մուժիքներ ան-ցան առանց դայն նշմարելու :



Կէս օրուան մօտ մուժիք մը անցաւ իր սայլով, տե-  
տաւ գեանին վրայ սրտակողը և զայն իրեն հետ գիւղ  
տարաւ :

— Ո՞վ է այս մարդը, հարցուցին գիւղացիները .  
մուժիքը սրտամեց թէ ճամբուն վրայ գտած էր այդ հի-  
ւանդ, վախ մարդը որ երկու օրէ ի վեր բան մը կե-  
րած չէր, պէտք էր գլխով անոր վրայ : Իսկոյն գեղջկուհի  
մը գեանախնձորներ բերաւ, ուրիշ մը կաթ, երբորդ մը  
հաց : Եւ այդ նոյն երկուստարդը որուն առջեւէն այն-  
չափ մուժիքներ կ'անցնէին առանց երեսը նայելու, սկսաւ  
համակրութիւն վայելել ամէնէն, որովհետեւ միակ մարդ  
մը գլխացած էր իր վրայ :

\* \* \*

Գլխասրտութիւնը անոր համար գեղեցիկ բան մըն է  
որովհետեւ փոխանցիկ է . մարդ մը եթէ տեսնէ թէ  
քնչպէս ուրիշ մը իր վերջին հացի կտորը բաժնած է  
անօթի մնացողի մը հետ, ինքն ալ իսկոյն միեւնոյն բանը  
պիտի ընէ :

Ինչպէս որ մոմ մը ուրիշ մոմ մը կը վառէ և մոմ  
մը հազարներով մոմ կրնայ վառել, այսպէս սիրտ մը  
ուրիշ սիրտ մը կը վառէ և հազարներով սիրտ կրնայ  
վառել :

Բառերու նշանակութիւնը . — Մուժիք՝ սուս զիւ-  
ղացի : Փոխանցիկ՝ մէկէն միւսը անցնող :

Մ Ն Ա Ի Ն Գ Ի Վ Ա Ր Գ Ը

Մեզին մեջեն դեկտեմբերին  
Տրտմալ վարդեր աչ կը փրքրին,  
Նման աչքին արցունքով չի  
Չոր չի վառեր իղձ մը կեանքի :

Արեւն անոնց բորում չիսար  
Ո՛յ աչ գոյներ ոսկեակար .  
Բայց արտերուն մեր վշաքեկ  
Դալուկնին ցաւ չազդեր երբէի :


Եւ ֆանի որ մասդաշ գարուն  
Նորարողորոց հոգիներուն  
Կը սահմանէ գեղն իր փայլուն,

Տառապողին համար, ո՞վ սեր,  
Թող որ փրքրին միշտ այն վարդեր,  
Այդ ծնունդի ժգոյն վարդեր :

Թարգմ. Ն. ԱՍԱՏՈՒՐ

Ա. Բ. Ն. Օ

Բառերու նշանակութիւնը . — Դալուկ՝ դեղնու-  
թիւն : Գեղ՝ գեղեցկութիւն :



Ա Յ Գ Ե Գ Ո Ր Ծ Ն Ե Ր Ը

Կէս օր է . օգոստոսի սաստիկ սաքուն , քարոտ և քամաք դաշտին վրայ խոււմը մը այգեգործներ մօտակայ այգեկոտքէն առաջ վերջին անգամ մըն ալ այգին կը խնամեն . կանանչ տերեւները կը փայլին ու դեղին ուղկոյզներուն մանիշակագոյն հատիկները սիրուն ձեւերով կախուած են : Այգեգործները զառիվայրին վրայ ծուած են , ատեն ատեն անոնց բրիչներուն քարերուն զարնուելով հանած ձայնը կը լսուի : Վարէն ճամբորդները կ'անցնէին .— վաճառական մը կը հաշուէր թէ այս այգին ի՞նչ կը բերէ և հունձքը ի՞նչ կ'արժէ : Արուեստագէտ մը կը տեսնէ ըլուրին շրջագլիծերը և այն շարժուն , փայլուն բիծերը զորս այգեգործ կլիներուն ձերմակ գտակները կ'արձակին տերեւներուն վրայ : Գիտնական մը կը մտածէ անոր հողին բաղադրութեանը , այն այգիին մասնաւոր որթատունկերուն վրայ : Զուարճասէրները գինիին ազնուութիւնը կ'երգեն :

Որքան քիչեր կան որոնք մտքերնին կը բերեն չարաչար աշխատութիւնը , լուին արժանիքը այն աշխատողներուն զորս արեւը կ'այրէ , և որոնք ատեն ատեն յողնութեան շարժումով մը վտիտ կռնակնին վեր կ'առնեն և արեւէն այրած թեւերնին կը պրկեն :

Եւ սակայն ինչպէս ամեն տեղ , հո՛տ ալ ամէնէն առաջ մարդոց միտքը այդ իրաւոյնէ մարդասիրական գաղափարին պէտք էր դար :

Պէտք է վարժուինք այդ մարդասիրական մտածումը ունենալու ամէն տեղ , ամէն տեսարանի առջեւ , պէտք է յիշենք աշխատող , վշտակրող մարդիկը , և անոնց նկատմամբ մեր ունեցած եղբայրական պարտականութիւնը : Պէտք է միշտ արթննայ մեր մէջ բարիքին

գաղափարը , բարիքին յուղումը և բարիք ընելու կամեցողութիւնը : ԼԷՈՆ ԳՈՒՐԺՈՒԱ

Բառերու նշանակութիւնը .— Այգեկոտք ընել՝ խաղողը քաղել : Կառեցողութիւն կամք :

6. Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ ՈՒ Թ Ի Ի Ն

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

— Ռջափ ալ էիչ ունենաք , միօս բան մը կրեաք Տալ անոնց որոնք ձեզմէ էիչ ունին : (ԼԱՔՕՈՒՏԷՐ)

— Բարեգործութիւնը մեծ պատք է : Բնաւ անձնական օտ մի փնտէր : (ԿՈՆՓՈՒԿԻՈՍ)

— Ճգնարիս բարեգործը ան է որ ինքզինքը գրկելով կուտայ , եւ իրիկուան կարօտութիւն մը կը դարձանէ :

— Արեւը չի սպասեր որ իր բաշխած լոյսն ու ջերմութիւնը խնդրեն իրմէ մտադիկ ալ պէտք չէ որ բարիք ընելու համար խնդրանքի սպասեն : (ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՌԱՍ)

Գ Ե Ղ Զ Ե Ր

Տօնավաճառէ մը դարձին գիւղացի մը կանչեց իր սղաքը . — Նայեցէ՛ք , սղաքս , ըսաւ անոնց , նայեցէ՛ք հօրեղբայրնիդ ի՞նչ նուէր զրկեր է ձեզի :

Տղաքը վաղեցին դային, և հայրերնին պղտիկ ծրար մը բացաւ. «Ա՛հ, ի՛նչ աղուոր խնձորներ, ազազակեց ամէնէն պղտիկը որ վեց տարու էր, նայէ, մայրիկ, որչափ կարմիր են»:

— Չեմ կարծեր որ խնձոր ըլլան, աւելցուց անպրանիկը, նայէ իրենց մաշկը աղուաւնագով ծածկուած է:

— Ասոնք դեղձեր են ըսաւ, հայրիկնին, դուք բնաւ առանկ պտուղ չէք տեսած:

Յետոյ դեղձերէն մէկը առնելով. — Ասիկայ քեզի համար է, կի՛ն, յարեց և այս չորսն ալ մեր տղոցն են:

\* \* \*

Իրիկունը, դիւղացին նորէն կանչեց սղաքը և հարցուց.

— Ի՞նչպէս գտաք դեղձերը:

— Այնքան համով էին որ, պատասխանեց անդրանիկը, կուտը պահեցի թաղարի մը մէջ անկելու համար, թերեւս ծառ մը բունի:

— Դուն լաւ պարտիզպան մը կրնաս ըլլալ, ըսաւ հայրը, քանի որ հիմակուքնէ կը մտածես ծառ հասցնել:

— Ես ալ, ըսաւ ամէնէն պղտիկը, պտուղը այնչափ աղուոր գտայ որ մօրմէս ուղեցի և առի իր բաժինին կէսը, բայց կուտը նետեցի:

— Դուն ալ տակաւին շատ պղտիկ ես, յարեց հայրը բարութեամբ:

— Եղբօրս նետած կուտը առի, ըսաւ տղոց երկրորդը և միջուկը կերայ, շատ լեզի էր, իսկ իմ դեղձս ծախեցի:

— Կերեւայ դուն ալ վաճառական ըլլալու միտք ունիս, ըսաւ հայրը:

Յետոյ իր երրորդ տղուն դառնալով հարցուց.

— Դուն ինչո՞ւ անկին մը քաշուած ձայնդ չես հաներ, ի՛նչպէս էր քու դեղձդ, համով չէ՞ր:

— Չեմ գիտեր, պատասխանեց սղան:

— Ինչո՞ւ չես գիտեր, չի կերա՞ր:

— Ես իմ դեղձս մեր դրացիին հիւանդ տղուն տարի և ըսի թէ որչափ գոված էիր այս պտուղը, և թէ որչափ ակորժահամ պէտք էր ըլլար: Տղան աչուրները մեծ մեծ բացած դեղձին կը նայէր. ուղեցի իրեն տալ, բայց մերժեց, ես ալ պտուղը քովը ձգեցի ու փախայ»:

Այն ատեն հայրը գորովով շոյեց իր դաւակին գլուխը և ըսաւ. «Աստուած պիտի հատուցանէ քեզ»:

Բաւերու նշանակութիւնը. — Աղուաւնագ՝ բարակ մաղ:

ԿՈՅՐ ՄԵՐՈՒՆԻՆ

Եկեղեցույն խորանն է վառ,  
Թընդան աղօթք, շարժի բուրվառ,  
Այլ դրբան մօտ ալ մէկ թրուառ,

Վարանամիտ

Կոյր ծերունի՛

Թեւասարած եւ անսքրունց

Միտ կ'աղօթէ հոգեմըմունց,

Մինչ իր ֆով լուռ այլ սիրաթունց՝

Եւ քարմ իբրեւ մէկ ծաղկեայ փունց

Մէկ փոքր աղջիկ

Կենայ հեզիկ:

\* \* \*

*Հարկաւոր 74*

Տարվ խաչին  
Համբոյր վերջին,

Երբ ժողովուրդն իբրեւ բանակ՝  
Գուրս կը յորդէ, այդ աղջնակ՝  
Արսասոււագին այլ գեղունակ  
Չեոքր առած մէկ սեւ պընակ,  
Չայնով բոթով՝  
Այլ անվրդով,

Կը պաղաժի եւ կը մուրայ....  
— «Ո՛հ, գըբացէ՛ք, տեա՛րք, մեր վըրայ  
Տըւէք, տըւէք մեզ հինգ փաւայ...»

\* \* \*

Ուր ուր տեսնէք  
Թըբուառ եւ հէգ

Կոյր մ'ալեւոր, որք մ'անխընամ,  
Ո՛վ հայ մանկունք մասաղերամ,  
Փուրացէք միտ յօժարակամ  
Անոնց նուիրել հաց ու դըրամ:  
Ինչպէս Ասուած  
Չեզ է տըւած՝

Տըւէք որքին եւ ծերուկին,  
Մանկունք, քանգի փոխան մէկին  
Չեզ հազարներ կուտայ երկին:

Ա.Ղ.Ե.ԲՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Տ Ղ Ո Յ Տ Օ Ն Ե Ր Ը

Ա.

Հիմայ, այս պահուս, ձեր վրայ կը մտածեմ, պղտիկ  
տիրելիներս, մինի մինի հրեշտակներս: Տղոց տօները կը  
մօտիկնան, կազանդը ձերն է. հասպա Մ'նունդը, ս'հ, անի-  
կա որչափ կը վսեմացնէ տղաքը, երբ գիտնան որ Յի-  
սուս ազէ մըն ալ պղտիկ պէպէք մը եղաւ ու խանձա-  
բուրի մէջ փաթթուելով օրրանին մէջ դըրուեցաւ:

Եղբայր, քոյր չունէր Յիսուս պէպէքը որ զինքը  
օրրէին. մինակ մայրը կար քոյրը, Սուրբ Աստուածածի-  
նը որ զուակին օրրանին քով նստած՝ ոռքով զայն կ'օր-  
բէր, ու ձեռքովն ալ կար կը կարէր ապրելու համար:

Եկեղեցին այս տօներուն յիշատակներն է որ պիտի  
կատարէ մօտ ատենէն, ջահերը ամբողջութեամբ պիտի  
վաթին, քահանաները պիտի դընստաւորուին, դպիր  
տղաքը ոսկեթել բանուած շապիկներ պիտի հագնին,  
հայրիկները, մայրիկները եկեղեցի պիտի երթան, նոր  
լաթ, նոր կօշիկ պիտի հագնիք, պտուղներով լեցուն  
կազանդի սեղաններուն չորս կողմը պիտի դառնաք,  
պիտի ուտէք, պիտի խմէք, պիտի ցատկատէք ու ձեր  
ծնողքին ձեռքերը պիտի համբուրէք:

Իրաւ որ շատ անուշ օրեր են կազանդն ու Մ'նունդը:  
Աղբարիկը՝ պղտիկ ձի մը պիտի գնէ ձեզի, քեռայրը՝  
գլխարկով մարդ մը որ շարունակ կը դառնայ, հայրիկը՝  
չողեկառք մը, և դեռ ինչեր, ինչեր... այնպէս որ  
հայրիկները անգամ պէպէք ըլլալ կ'ուզեն այդ օրերուն:

Բ.

Բայց, պղտիկ բարեկամներս, կը կարծէք որ ամէն  
տղայ ալ ձեզի չափ երջանիկ ըլլայ, իրեն նուէր բերող,

պտուղ ծախու առնող, անուշեղէն եփող աղբարիկ մը, հայրիկ և մայրիկ ունենայ:


Գուք արդէն գիտէք որ ձեր զբայիներուն մէջ պզտիկներ կան որոնք զրկուած են այդ ամէնէն: Եւ երբ դուք ձեր նոր հագուստներով, խաղալիքներով ու պտուղներով՝ կաղանդի առտուն՝ մութնուլուսուն դպրոց կ'երթաք ձեր ուսուցիչին ձեռքը պագնելու և նուէր մըն ալ անկէ առնելու, անոնք իրենց վիզը ծռած՝ «ախ» պիտի քաշեն ձեզի պէս ըլլալու համար:

Եթէ զիտնայիք որ անոնց համար որչափ մեծ արժէք մը ունին հայր մը, մայր մը, կամ իր վրայ գուրգուրացող աղջական մը, այն ատեն աւելի սիրով պիտի պլլուէիք ձեր ծնողքին: Անառակութիւն չպիտի ընէիք, սիրա չպիտի հասցնէիք, փողոցները չպիտի խաղայիք: Եւ առտու իրիկուն, աւելի պիտի աղօթէիք Աստուծոյ՝ երկայն կեանք և գործի յաջողութիւն խնդրելով ձեր բարերարներուն համար:

Գիտե՛մ որ բարի տղաք էք դուք, և երբ այնչափ խաղալիքներով, պտուղներով ու բարիքներով ուրախանաք, չէք կրնար զիմանալ որ ձեր տարիքը եղողներէն շատեր անդին սրտերնին կոտրած տրտում տխուր մտմտան:

Ձե՛զ ատենե՛մ պզտիկ բարեկամներս, մի մոռնաք չունեցողները, և ձեր ունեցածէն քիչ մը բան տուէք անոնց:

**ՔԱՍԻՄ**



**7. ԻՐԵՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**

**ԳԵՂԵՅԻԿ ԽՕՍԳԵՐ**

— Մարդկային պարսականութեանց գերագոյնն է իրերասիրութիւնը, որովհետեւ ցաս առաքինութիւններ իրմէ կը ծնին: (Ա. ՖՈՒՅԵԷ)

— Մարդ այն ատեն միայն լաւ ապրած կ'ըլլայ, երբ ուրիշ ցասերու համար ալ գոհոգութիւն կ'ընէ: (ԿԻՒՅԵՕ)

— Մարդիկ պէ՛տք չէ որ իրարու հետ անձնասիրութեամբ և հպարտութեամբ վարուին, ընդհակառակը, պէ՛տք է միշտ իրարու բարիք ընեն և իրարու համոյ՛ք պատճառեն: \* \* \*

— Միշտ բարութեան և համակրութեան սերմը ցանկնմ մեր համբուն վրայ: Իրաւ է որ անոնցմէ ցատե՛ր պիտի կորսուին, բայց եթէ նոյն իսկ հաս մըն ալ ծլի, միեակը պիտի բաւէ մեր համբուն խնկելու: (ՏԻԿԻՆ ՍՎԷՉԻՆ)

**ՄՈՒՐԱՅԻԿԸ**

Փողոցէ մը կ'անցնէի, ձեր ու զառամեալ մութայիկ մը զիս կեցուց:

Բոցալստ և արսատուարոր աչքեր, կապտադոյն չըրթունքներ, զազիր ցնցաթիներ, ազատա վէրքեր միայն

կը տեսնէի վրան . . . Ո՛հ, աղքատութեան կնիքը ո՛րչափ սոսկալի կերպով դրոշմուած էր այս թշուառ արարածին վրայ :

Իր ուռած, կարմիր, աղտոտ ձեռքը ինծի կը կարկառեւ, հեծեծելով օգնութիւն կը խնդրէր ինձմէ :

Բոլոր դրպաններս խուզարկեցի, ոչ քսակ, ոչ ժամացոյց և ոչ թաշկինակ մը կար. վրաս բան մը տուած չէի :

Մութացիկը կը սպասէր և իր դողդոջ ձեռքը, երկընցուցած, կը շարժէր ակարութեամբ :

Բոլորովին չփոթած, ինչ ընելս չգիտնալով, ուժգնութեամբ մը այն աղտոտ և դողդոջուն ձեռքը սեղմեցի .

— Բան մի ուզեր ինձմէ, եղբայր, ըսի իրեն, վրաս բան մը չգտայ :

Մութացիկը ինծի յառեց իր ցաւոտ կարմիր աչքերը. իր կապտագոյն չրթունքները ժպտեցան, և ինքն ալ իմ ցուրտ մատներս սեղմեց .

— Ե՛կ ուրեմն, եղբայր, ըսաւ, ասոր համար ալ չնորհակալ եմ, այս ալ ողորմութիւն մըն է :

Եւ ան ատեն հասկցայ որ ան ալ եղբայր մըն էր ինծի համար, և հակառակ իր թշուառութեան, բարութիւնս կը փոխարինէր :

**Ե. ԹՈՒՐԿՆԵՒՅ**

Բառերու նշանակութիւնը. — Արսասուարտ՝ արցունք վազցնող : Զազիր՝ գարշելի : Կառկառե՛յ՝ երկնցնել :

**Ա Ի Ա Պ Ո Ւ Ր Ք Ա Ք**

Գամուած, սրկուած իր խաչին վրայ,  
Սուր սուր փուռերով գլուխն արիւնլուայ,  
Ամէն չարչարանք, կսկիծներ անհուն  
Յիսուս անհրսունջ կրեց ու լացաւ :

Բայց երբ հոգին մարմինէն կը փառուէ՝  
« Հայր, աղաղակեց, ընդէ՛ր զիս բողեր : »  
Եւ յանկարծ արեւը ծածկեց խաւար,  
Կայծակն որոսաց անեղ ու երկար,  
Զի Աստուածորդին աւանդէր հոգին :

Մինչ առակերտներն վախնալով փախան,  
Գրթասէր կիներ, իւղ ու քաշասան  
Բերին օծեցին Յիսուսի մարմին,  
Եւ ամփոփեցին զայն գոգը շիրմին :

Բայց շիրմին խորէն նոր լոյս, նոր հաւաս,  
Օրէնքներ սիրոյ բոլսեցան առաս,  
Եւ երկրիս վրայ սուրբ խաղաղութեան  
Շունչը սրփռեցաւ յուրքի անսահման :

**Մ. ԱՃԷՄԵԱՆ**

Բառերու նշանակութիւնը. — Կիզի՛ջ՝ այրող : Ընդէ՛ր զիս բողեր՝ ինչո՞ւ զիս ձգեցիր : Բաշասան՝ տեսակ մը դեղ : Յուրքի՛ առատ :

### Հ Ա Յ Ի Կ Տ Ո Ր Ը

Բարի ձերուկ մը իրիկուն մը տուն կը վերադառնար : Վերջալոյսին ժամանակն էր երբ քաղքին մօտեցաւ :

Յանկարծ տեսաւ երկու մանուկներ որոնք վրանի մը տակ նստած կը խօսէին : 'Մերունին' առանց տեսնուելու անոնց մօտ գնաց և սկսաւ մտիկ ընել :

Մանուկներէն մէկը — սղախիկ աղջիկ մը, — կուլար և հաց կ'ուղէր, անօթի էր : Միւսը — իր քրոջմէն քիչ մը աւելի մեծ տղայ մը — կը մխիթարէր զայն ըսելով թէ հիմայ մայրիկը կուգայ և հաց կը բերէ :

Իրաւ ալ քիչ մը ետքը մայրիկը եկաւ յոգնած ու տոբոյն : զալուն պէս, զամբիւղէն հաց մը հանեց և դրաւ մանուկներուն առջև :

Աղջիկը իսկոյն հացին վրայ նետուեցաւ ազահու թեամբ . իսկ տղան՝ իր բաժինը երկու կտոր ըրաւ, մէկ կտորը գաղտուկ պահեց անկիւն մը, և միւս կտորն ալ ուղեց բաժնել մօրը հետ : Եւ որովհետեւ մայրը մերժեց ընդունիլ, ինք կերաւ այդ կտորը :

Տղուն վարմունքը այնչափ հետաքրքրեց ձերունին որ միտքը դրաւ յաջորդ օրն ալ երթալ և տեսնել թէ տղան նորէն աղջիկէն նուազ անօթի էր :

Միւս օրը, կէս օրէն ետքը, քաղաքէն ելլելով զէպի վրանը գնաց, և առանց աղմուկ հանելու, տղոց մօտեցաւ :

Միեւնոյն բանը տեսաւ, փոքրիկ աղջիկը կուլար և հաց կը խնդրէր, իսկ տղան կ'աշխատէր զայն մխիթարել :

Վերջապէս, երբ տղան տեսաւ որ քոյրը ձայնը չի կարեր, հանեց առջի օրը պահած հացը և իր քրոջը տուաւ :

Վ. Փ.

### 8. Ե Ր Ա Խ Տ Ա Գ Ի Տ Ո Ի Յ Ի Ի Ն

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Գ Ե Բ

— Երախսագէտ չեղող մարդիկը բարութեան իրաւունք չունին : (ՊԷՐՍՍ)

— Երախսագիտութիւն յայտնելու համար, պէտք չէ բողոք ու եղած բարիք հեռանայ : (ՇԱՍԱՆ)

— Երախսագէտ պէտք է ըլլալ ոչ թէ միայն անոնց՝ որոնք ձեզի բարիք կ'ընեն, այլ նաեւ անոնց որոնք ձեր բարիք կ'ուզեն : (ՍԷՆԹ ԷՎՐԵՍՏՆ)

#### Մ Ա Ն Ի Շ Ա Կ Ի Փ Ա Ղ Ա Ր Ը

Ամբողջ Վիեննա ձիւնին տակ թաղուած էր այն օրը : Փողոցներուն սառն ու ձիւնը սալայատակին վրայէն վերցնելու համար հաւաքուած զօրծաւորներուն խումբը կ'աշխատէր միայն :

Տխուր էր տեսարանը : Այր և կին, ամէնն ալ աղքատութենէ մղուած, փառացած ձեռքերով բրիչնին անընդհատ կարծր դեմնին վրայ կը զարնէին, և սառը փրցնելով ահագին կոյտեր կը շինէին :

Հետզհետէ մութը կը կոխէր :

Յանկարծ դրան զանգակը զարնուեցաւ : Զանգակին ձայնը առնելով ոտքի ելայ : Ո՞վ կրնար ըլլալ հիւրը, ո՞վ կրնար այդ օղին դունէն դուրս ելլել :

Կիսաբաց դրան առջեւը պղտիկ տղայ մը տեսայ , որ կեցած երեսս կը նայէր :

— Այս տղան ի՞նչ կ'ուզէ , հարցուցի սպասուհիին որ արդէն տղուն ձեռքէն բռնած խոհանոցէն ներս կը տանէր :

Պղտիկին դեղին մազերը ձակափն փակած էին , և ամբողջ ազքատիկ զգեստները ձիւնին մէջ թաթխուած , ամքած ձեւ մը ունէին : Եուտ մը և ախորժով , կարմիր ձեռքերը վառարանին մօտեցուցած՝ սկսաւ տաքնալ : Զիւնը կաթիլ կաթիլ կը հալէր , մինչդեռ ինքը՝ իր կապոյտ աչուքներով հետաքրքրութեամբ միշտ կը նայէր : Սպասուհին քաղցրութեամբ հարցումներ կ'ուզզէր անոր , ս՛րկէ կուգար : Ի՞նչ կ'ուզէր :

Երբոր լաւ մը տաքցաւ .

— Մայրս , կմկմաց ամօնալով , այս առտու սառ կոտրած ատենը սահեցաւ և սրունքը կոտրեցաւ :

Յետոյ , մատովը վառարանին վրայ եռացող կերակուրները ցուցնելով .

— Ես դպրոցն էի , շարունակեց , և այսօր դեռ բերանս բան մը չեմ դրած :

Այս որ լսեցի , խոհանոցէն դուրս ելայ , ու նշան ըրի սպասուհիին որ պէտք եղածը հողայ և ամէն օր դայն կերակրէ :

Շատ օրեր անցան , բայց պղտիկը մէյ մըն ալ չեբեցաւ :

Զմեռը անցաւ , և մենք ա՛լ անոր վրայ չէինք խորհեր : Բայց Զատիկին առաջին կիրակին էր , երբ առտուն կանուխ տուն եկաւ : Մազերը սանտրուած էին և լայն , սպիտակ օձիքին տակ , խոշոր կապոյտ փողկապը փռուած կը ծփար :

Չեռքը թաղար մը բռնած էր ուր մանիչակի տունէ մը կար : Թնողարը խնձի ներկայացուց , և , աչքերը դեռ ակն խոնարհած .

— Ասիկա մայրս ձեզի դրկեց , բսաւ , իրրեւ նշան իր երախտագիտութեանը որ այս ձմեռ անգամ մը խնձի կերակուր չնորհեցիք :

Ես դարմացած անոր կը նայէի :

— Գարնան առաջին մանիչակն է , Տիկին , կրկնեց անիկայ , մայրս ձեզի համար քաղեց :

Ու յետոյ , իրրեւ թէ հպարտութիւնը վիրաւորուած ըլլար , արտասուալից ձայնով մը .

— Ուրիշ կերպով իր երախտագիտութիւնը չէր կըրնար ցոյց տալ , չ՛նչեց :

Ծռեցայ , ու սիրուն տղուն ձակատը համբուրելով առի նուէրը : Եւ երբոր անկէ դատուեցայ , սիրտս խանդաղատանքով լեցուած էր :

Տիկին Մ. ՍՎԱՃԵԱՆ

ԵՏԱԽՏԱԳԷՏ ԱՂՋԻԿԸ

Հազիւ ծագած *նրշոյջ* այգուն՝  
Թողում ընդոս իմ անոյժ փուն ,  
Քաղեմ խնամով մայիսի վարդ ,  
Կապեմ փունջ կուրծքերու զարդ ,  
Իմ ծաղիկներս եղեմաբոյր  
Թիթեռներու կարծես են փոյր :

Ազնի՛ւ անցորդ , ծաղիկ աղուոր  
Ծախե՛ աղջիկն ի՛նչ չբաւոր :



Վարդեր ունիմ որ կը ժպտին,  
 Եւ շահոքում՝ շուք գեղեցկին,  
 Յամբիկ ալ կայ, ձիւնէն ներմակ,  
 Կողովս անոյ՛ց բուրէ համակ:  
 Դուն ալ գնէ, կուսի՛կ զըւարթ,  
 Ո՞վ չի սիրէր ծաղկեայ մէկ զարդ:  
 Ազնի՛ւ անցորդ, ծաղիկ աղուոր  
 Ծախէ աղջիկն հէ՛գ չըքաւոր:

Ահա գասեմ նարեկիս, շուքան,  
 Ինձ հաւսիսի, բարի կուսան.  
 Թէ շրնորհէք երկու լումայ,  
 Հէգս ալ, Տիկին, ձեզ անուշակ  
 Ընտրէ յակիւնք ու մանիշակ:  
 Ազնի՛ւ անցորդ, ծաղիկ աղուոր  
 Ծախէ աղջիկն հէ՛գ չըքաւոր:

Երբ այս գիշեր նստինք սեղան,  
 Մեր ջերմ մաղթանք պիտի սեղան,  
 Օրհնեա՛լ ըլլաք, ազնիւ մարդիկ,  
 Պիտի ըսենք, բիւրապատիկ  
 Ասուած սայ ձեզ որ կերակրէք  
 Երկու որք քոյր ու մայր մը հէգ:  
 Ազնի՛ւ անցորդ, ծաղիկ աղուոր  
 Ծախէ աղջիկն հէ՛գ չըքաւոր:

ԵԻՏԵՐՊԷ:

Բառերու նշանակութիւնք. — 'Նշոյլ' լոյս: Հարեա-  
 սի՛ հասակակից:

Մ Ե Ր Ա Յ Ա Մ Ձ Ի Ն

Քաղաքիոյ դուքսը, Կարողոս, ամէն օր Նաբոլիի  
 մէջ արդարութիւն կը բաշխէր՝ շրջապատուած իր նա-  
 խարարներէն և խորհրդականներէն որոնք իրեն հետ ա-  
 սպարանքին մէջ կը դուժարուէին:

Կարողոս՝ մտածելով թէ իր ծառաները կրնան ազ-  
 քասներուն մուտքը արդիւլել, զանգակ մը դնել տուած  
 էր ասպարանքին շրջափակէն դուրս, որպէս զի ամէն  
 ներկայացող հնչեցնէ զայն և հասկցնէ իրեն թէ արդարու-  
 թիւն խնդրող մարդ մը ներկայացած է:

Անգամ մը, տէրջմէն լքուած ծեր ձի մը ասպա-  
 րանքին կողմերը եկաւ, և գլուխը քերելու համար  
 սպտին քսած ատեն՝ անանկ եղաւ որ զանգակին դպչե-  
 լով հնչեցուց:

Դուքսը՝ զանգակին ձայնը աւնելով ըսաւ.

— Ներս բերէք, ո՞վ որ ալ ըլլայ:

Գացին դուռը բացին, և ի՛նչ տեսնեն, աղնուականօ

Բարէլի ծերուկ ձին:

Խորհրդականները երբոր լսեցին սկսան խնդալ:

Բայց Կարողոս յանդիմանեց զանոնք և ըսաւ.

— Ինչո՞ւ կը խնդաք, ճշմարիտ արդարասիրութիւնը  
 իր խնամքը պէտք է անասուններուն վրայ ալ տարածէ:  
 Յետոյ հրամայեց.

— Շուտ մը կանչեցէք Բարէլը:

Եւ երբ այս վերջինը եկաւ.

— Ի՞նչ է սա, ըսաւ, ինչո՞ւ կը թողուս որ այս ձին անտէր թախառի:

— Տէ՛ր, պատասխանեց Բարէլ, ատեն մը շատ լաւ ձի մըն էր, ինծի հետ քսան կռուի մասնակցած է, բայց այսօր բանի մը չի ծառայեր, ինչո՞ւ զուր տեղը կեր տամ անոր:

— Բայց կարծեմ հայրս քեզ շատ լաւ վարձատրեց քու ծառայութիւններուդ համար:

— Այո՛, Տէ՛ր, նոյն խակ իմ արժանիքէս ալ սուելի:

— Ուրեմն հայրս երախտագիտութեամբ վարուեր է քեզի հետ, դուն ինչո՞ւ չես ուղեր կերակրել այս վեհանձն կենդանին որ այնչափ մեծ բաժին մը ունեցած է քու ծառայութիւններուդ կատարման մէջ, և հետեւաբար քեզ երախտապարտ թողած է:

Բարէլ շուարած էր և չէր կրնար պատասխան մը տալ:

— Գնա՛, ըսաւ դուքսը, անոր լաւ տեղ մը տուր քու ախոռիդ մէջ, և զայն խնամէ ա՛յնպէս՝ ինչպէս կը խնամես միւս ընտանի անասուններդ: Եթէ հրամանս չը գործադրես, ա՛լ քեզ վեհանձն աղնուական մը չպիտի նկատեմ և ետ պիտի ստանեմ իմ բոլոր շնորհներս: Պէտք է երախտագիտութեամբ վարուիլ նոյնիսկ կենդանիներուն հետ: Ան որ բարիք կը տեսնէ, պէտք է ս՛ և է կերպով հատուցանէ անոր փոխարէնը:

Լ. Պ. ՊԷՌՍՆՈՒՆ



9. ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

— Մարդու մը աչքին՝ ամէնէն բանկազին բանը իր անձն է, ուրեմն՝ երբ իր անձն է որ կը նուիրէ, գերագոյն բարօրիւնը բրտմ կ'ըլլայ: (ՅՈՒՍԵՓ)

— Իրենց անձէն հրաժարող մարդիկը կրնան ըսել թէ երկինքի արժանութեան արժանացած են, որովհետեւ չկայ ուրիշ բան մը որ անձնուրիշութենէն աւելի հանելի ըլլայ Աստուծոյ Աչքին: (Ս.ՕԳՈՍՏԻՆՈՍ)

Ք Ա Ձ Ա Ս Ի Ր Տ Ե Ղ Ք Ա Յ Ի Ը

Այն տարին՝ անանկ ստտիկ ձիւն մը եկած էր որ գիւղին բոլոր ճամբաները գոցուած էին: Տուները կիսովին ծածկուած էին ձիւնով, և սնասիկ ցուրտ մը կը տիրէր չորս կողմը:

Առտու մը, լուր ելաւ թէ գայլեր իջած են գիւղին մօտերը, բայց որովհետեւ ոչ ոք տեսած էր զանոնք, շուտ մոռցուեցաւ այդ լուրը:

Երբոր ճամբաները քիչ մը բացուեցան, փայտահար Սարգիս և իր կինը տունը թողուցին իրենց երկու զաւակները և անտառ գացին փայտ բերելու: Տղոյմէն մեծը՝ Մինաս, հազիւ տասերկու տարեկան կար, ու պղտիկն ալ, Ազնիւ, տակաւին օրօրոցին մէջ կը գտնուէր:

Մինաս, բաղմոցին անկիւնը նստած գիրք մը կը թղթատէր, երբ յանկարծ աղմուկ մը լսելով ասգին գարծաւ և սոսկալի աղաղակ մը արձակեց:

Տնակին կիսաբաց դռնէն գայլ մը ներս մտած էր, և կը պատրաստուէր յարձակիլ օրօրոցին մէջ քնացող Ազնիւին վրայ:

Մինաս գիտէր թէ գայլերը երբ անօթի ըլլան, մարդաբնակ տեղեր կ'իջնեն և պղտիկ տղաք, ոչխարներ, ինչպէս նաեւ ուրիշ ընտանի կենդանիներ յախշտակելով կը յօշոտեն:

Մինաս կրնար փախչիլ, բայց չփախաւ. քաջասիրտ տղայ մըն էր և կը սիրէր Ազնիւր: Չպիտի թողուր որ գայլը գայն տանի, նոյն իսկ եթէ այդ պատճառով ինք վիրաւորուէր:

Գաջասիրտ տղան այսպէս մտածեց, և առանց ժամանակ ձգելու որ Ազնիւին մօտենար, գայլին վրայ յարձակեցաւ:

Կատաղի գաղանը որ կարծես այդ յարձակման կը սպասէր, իսկոյն բերանը բացաւ Մինասը խածնելու համար: Բայց Մինաս կռուփը սեղմեց և ամբողջ թեւը գայլին կոկորդը մխեց:

Գայլը սկսաւ խղճուկ հոնդիւններ արձակել: Չէր կրնար շունչ առնել, պիտի խեղդուէր: Մինաս՝ ազատ մնացած ձեռքովը անոր վիզին կառչած էր, և միւս կողմէ ալ ամբողջ ուժովը կռուփը գայլին կոկորդը կը մխէր:

Այդպէսով գայլը մինչեւ պատը քշեց, և երբ պատին կռթնցուց, ամուր մը կեցաւ, թող չտալով որ շարժի: Քիչ ետքը, գայլը շնչահեղձ ըլլալով մեռաւ:

Բայց Մինաս ալ՝ որուն ամբողջ կորովը սպառած էր այդ կռուին մէջ, մարած ինկաւ յաղթուած գաղանին քով:

Ժամ մը ետքը, երբ փայտահար Սարգիս և իր կինը տուն վերադարձան, սոսկումով տեսան իրենց Մինասը որ մեռած գայլին հետ քով քովի պառկած էր պատին տակը:

Նախ կարծեցին թէ Մինաս մեռած է, բայց իրենց խնամքներուն շնորհիւ տղան շուտ մը սթափեցաւ և հարցուց.

— Գայլը չը կերաւ իմ սղտիկ քոյրս, անանկ չէ՞: Ծնողքը փառք տուին Աստուծոյ, ու գորովով գըրկեցին իրենց քաջասիրտ ու անձնուէր դաւակը:

Բառերու նշանակութիւնը. — Փայտահար՝ փայտ կտրող: Յօշոտել՝ կտոր կտոր ընել: Շնչահեղձ ըլլալ՝ շունչը հատնիլ:

Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ Ն Ո Ւ Բ Ո Ձ Է Ն

Բագէն, մէկ օր  
Ժանիֆներովն իր սուր ու կոր  
Բռնած էր փոքր, անմեղուկ  
Մի ննկուկ,  
Որ սարսափէն ուշակորոյս՝  
Կորսընցուցեք էր ամէն յոյս,  
Եւ խաւարած աչքին լոյսեր՝  
Մահուան կը սպասէր.  
Երբ անդիէն հեւ ի հեւ  
Հասաւ թոչնիկ մը թեթեւ,

Փոքրիկ ձագը ննդուկին

Որ պաղատագիկն

Հայցեց. «Մայրիկս է անիկայ.

«Եթէ ան մեռնի, ո՞վ պիտի հոգայ

«Եղբայրներս, որոնք մեր բոյնին մէջէն

«Անոր *ակընդէս*՝ նրւան ու նրչեն:

«Ձեր մեծուքիւնն, ո՞վ տէր բազէ

«Ճննդուկ եթէ ուտել կ'ուզէ՝

«Իմ միսս աւելի քարմ է, զիս կերեմ,  
Եւ ապրին մայրս ու եղբայրներս երեմ...

«Թող մօրկանս համար անուշիկ

«Ես զոհուիմ յուշիկ...»

Մօրն անձնուէր ձագուկին

Երբ տեսաւ այս վիճակն ու ցաւ,

Բազէն յուզուած սասկազգին

Գրթաց, սիրքը կակղացաւ,

«Բարի զաւակ հարազատ,

Ըսաւ, ապրէ՛ մօրկանդ հետ...»

Թողուց երկուքն ալ ազատ

Թըռաւ, եղաւ ինքն *անհետ*:

**Ա. Ա. Փ. Ա. Ս. Ա. Ն.**

Բառերու նշանակութիւնը. — Ժանիֆ՝ գաղանի  
ակուայ: Ուշակորոյս՝ շուարած: Պաղատագիկն՝ աղաչելով:  
Ակընդէս՝ անոր ճամբան հայելով, սպասելով: Անհետ՝ հեռք  
չձգելով: Հայցեղ՝ խնդրել:

**Ա Ն Ժ Է Լ Ի Բ Բ Ա Ռ Ա Ն**

Անժէլիք Բառան այսօր վաթսուն տարուան պա-  
ռաւ մըն է, և քառասունըթը տարիէ ի վեր իր կեանքը  
զոհողութեան և անձնութեան օրինակ մը միայն  
եղած է:

Ֆրանսայի աննշան զիւղերէն մէկուն մէջ ծնած է,  
զիւղի մը մէջ որ հազիւ մէկ քանի հարիւր ընակիչ  
ունի: Շատ աղքատ մարդոց աղջիկը եղած է, տասեր-  
կու զաւակներու ութերորդը: Կանուխէն ինքզինքը աշ-  
խատութեան տուած է, և երբէք չէ ուղած բաժնուիլ  
իր ծնողքէն:

Տասերեք տարեկան եղած միջոցին իր երեք եղ-  
բայրները ծաղկախտէ կը բռնուին: Անժէլիք՝ մօր մը  
պէս կը կենայ անոնց քով, և վարակուիլը աչք առնու-  
լով կը զարմանէ զանոնք կատարեալ անձնութեամբ:

Եօթը տարի վերջ կ'որդեգրէ իր պզտիկ եղբայրնե-  
րէն մէկուն աղջիկը, որուն մայրը մեռած էր: Բսան  
տարի շարունակ, կ'աշխատի, ապրեցնելու համար իր  
անկրօն ծնողքը:

Վերջապէս, աշխարհի վրայ մինակ կը մնայ, առանց  
ընտանիքի: Ա՛լ իրաւունք ունէր անշուշտ հանգչելու,  
քիչ մըն ալ ինքնիրեն համար ապրելու: Բայց վար-  
ժուած էր անձը նուիրելու, զոհելու. չէր կրնար ուրիշ  
բան ընել:

Այս պատճառով Անժէլիք ինքզինքը կը նուիրէ աղ-  
քատներուն և հիւանդներուն: Կ'ողորմի, կը զարմանէ,  
կը մխիթարէ, արցունքներ կը սրբէ, միշտ մոռնալով իր  
անձը: Անժէլիք Բառան այդ զիւղին ու մօտակայ զիւ-  
ղերուն նախախնամութիւնն է: Ուր որ օգնութեան ար-

ժանի դժբաղդութիւն մը կայ, դարմանուելու կարօտ  
Տարախոխիկ ու վտանգաւոր հիւանդութիւն մը կայ, ինք  
հոն է միշտ, ամէնէն առաջ:

Այսօր գիւղին գիւղապետէն, պաշտօնակալներէն,  
քահանայէն սկսեալ մինչեւ ամէնէն յետին մշակը, մէկ  
խօսքով ամբողջ գիւղն է որ կ'ըսէ մեզի. «Մեր մէջ  
կատարեալ կին մը կայ որ միշտ ուրիշին համար ապրած  
է, որ բարիք ու մխիթարութիւն բաշխած է շարունակ,  
ամէնքս ալ կը սքանչանանք իր վրայ ու կը սիրենք  
զինքը: Վարձատրեցէ՛ք այդ բարի կինը: Ամէնքս ու  
բախ պիտի ըլլանք ատոր համար: Եթէ իրեն դրամ  
տաք, այդ դրամը երկար ատեն չպիտի մնայ իր ձեռքը,  
անմիջապէս պիտի երթայ իր միակ բարեկամներուն,  
այսինքն աղքատներուն և հիւանդներուն պիտի բաժնէ:»

**ԼԻՒՏՈՎԻՔ ՀԱՆԷՎԻ**

Բառերու նշանակութիւնը. — Անկար՝ անկարող է  
Տարախոխիկ՝ մէկէն միւսին անցնող:

**10. ԶՈՂՈՂՈՒԹԻՒՆ**

**ԳԵՂԵՅՅԻԿ ԽՕՍՔԵՐ**

— Այ մէկ բարիք Աստուծոյ հանկի է,  
երբ երբէք գտնուեցա՞մք մը չի կատար-  
ուիւր: (Ս. ԹՈՎԱՄԱՍ)

— Ինքզինքը գրկել՝ ուրիշին պէտքը լե-  
ցնելու համար: Այս պայմանով միայն  
կրնանք խկապէս բարեգործ մը ըլլալ:  
(ԼԱ ՊՈՒԻՅԷՌ)

**ԹՈՂՈՒՆՆԻՆ ԲՈՅՆԸ**

Աւգուստ իմ դպրոցական ընկերս էր, նաեւ խաղի  
ընկերս: Հազիւ տասնը չորս տարեկան կար, և իր բա-  
րիքէն աւելի ուրիշներուն բարիքը կը մտածէր:

Դասարանին ամէնէն ընդունակ աշակերտն էր թե-  
րեւս, բայց միշտ վերջինն էր որ դուլեատի մը համար  
կը յիշատակուէր:

Ընկերակիցներէն ո՛չ մէկը իր ծնողքէն այնչափ առա-  
տօրէն դրամ և հազուստ չէր ստանար, և սակայն, ամէ-  
նէն աւելի կը նեղուէր դրամ և հազուստ չունենալուն  
համար: Իր ժամանակը, ստացած նուէրները, իր խնա-  
շած դրամը, բոլորը ուրիշներուն կը պարգևէր:

Անգամ մը մեր ընկերներէն մէկուն հանդիպեցաւ  
որ ծառէ մը թռչունի բոյն մը վար առած էր:

— Ինձի՛ տուր բոյնը, գոչեց Աւգուստ:

— Չեմ տար, ըսաւ տղան :

— Սա ստակը կուտամ քեզի :

— Ոչ, վար ստանելու համար չառ նեղութիւն քաշեցի :

Աւգուստի ամբողջ հարստութիւնը այդ ստակն էր՝ գոր սողուն տալ կ'ուզէր :

— Կ'ուզե՞ս նոր գլխարկս տամ փոխարէնը, հարցուց Աւգուստ նորէն : — Ա՛խ, չէ... յարեց՝ մսաբերեղով որ գլխարկաց շրջող աղքատ սողու մը տուած էր գլխարկը :

Խեղճ տղան չէր գիտեր թէ զեռ ինչ սար : Բոյնը սիրտը կը ճնշէր :



— Բոյնը քեզի կուտամ, բայց դուն ալ փողկապիղ զարդասեղը տուր ինձի, ըսաւ ընչափայց տղան :

Աւգուստ կը վարանէր : Արժէքաւոր աղամանդ մըն էր : Ատոր համար չէր որ կը վարանէր Աւգուստ, բայց այդ ասեղը մօրմէն նուէր ստացած էր, իր մօրմէն : Եւ սակայն սա խեղճ թռչնիկները... :

— Ա՛ռ, ըսաւ ան, ա՛նա՛ գնդասեղս, սուր թռուչունները :

Տղուն ուզածն ալ առ էր, բոյնը տուաւ, գնդասեղը առաւ, և կ'ուզէր հեռանալ :

— Ինձի նայէ՛, գոչեց Աւգուսթ, ինձի ցուցուր բոյնին ասեղը, նորէն հոն դնել կ'ուզեմ՝ զայն :

Միւսը՝ ծառին վրայ բոյնին ասեղը ցուցուց իրեն : Աւգուստ վեր մազլցեցաւ. ցոյց տրուած ծակին մէջ հաստատեց բոյնը, կ'ուզէր վար իջնել. յանկարծ ինկաւ և աջ թեւը կոտրեցաւ :

Երբոր կապեցին, խնդրեց իզմէ երթալ տեսնել թէ թռչուններու ծնողքը կրկին իրենց բոյնը եկած էին :

Թռչունները եկած էին : Իմացուցի Աւգուստին, որուն զգացած ուրախութիւնը աւելի մեծ եղաւ՝ քան թեւին սպառնաւած ցաւը :

ՄՈՒՎՍՍՏՈՒՎ

Բառերու նշանակութիւնը. — Մսաբերեղ՝ միտքը բերել : Ընչափայց՝ ազահ :

ԱՆՈՒՇԻԿ ԽՆՅՈՐԸ

Հայրն Արսէնիկն այն իրկուն  
Խընձոր տուաւ անուշիկ,  
Մէկ հաս մըն էր, բայց սիրուն :

Այդ կողմերու ծառերուն  
Վըրսն այնքան անուշիկ  
Խընձոր չը կար դեռ հասած :

Արսէն՝ ուրախ ու զեղուն  
Աղբոր խնձորն անուշիկ  
Դըրսաւ փոյն իր գիրֆերուն :

Կանուխ եղաւ միւս առումն՝  
Տեսնեղ խընձորն անուշիկ՝  
Կարմիր գոյնովն ու ժրպտուն :

\* \* \*

Դրրկից ընկերն այն անումն  
Ինքն աղ բարի, անուշիկ,  
Հիւսնոյ պատկէր դողողուն :

Փայտաբ եկաւ խեղճ սրդուն  
Ուսեղ խնձոր անուշիկ .  
Հեծէր ու շար միկն իրկուն :

Բայց ծառերու ուսերուն  
Վըրան խընձոր անուշիկ  
Զըկար բընաւ, չէր հասուն :

Երբ շար բերին իրենց տուն՝  
— « Խընձոր կ'ուզէ անուշիկ,  
Ըսաւ Արսէն ուսնումն :

« Ինն աղաւոր է, շատ սիրուն,  
« Տեսնե՛ք որ չա՛փ անուշիկ,  
« Տարե՛ք տրե՛ք խեղճ սրդուն .

« Թող վերջ մը տայ շագերուն,  
« Ուսէ խնձորն անուշիկ,  
« Ըրայ առողջ ու ժրպտուն : »



Մ Ո Ւ Ս Փ Ա Յ Ը

Անտանելի ցուրտ ձմեռ օդով մը, քանի մը ընկեր-  
ներ, ամէնքս ալ ուսանող, կը պտտէինք Լիւքսէնպուրկի  
պարտէզին մէջ : Կերակուրի ժամանակ էր, և ընկերնե-  
րէս ոմանք վազվառելով կը տաքցնէին իրենց ոտքերը,  
ոմանք կը զուարճանային խնդալով ու խօսակցելով, և  
ես, հացի փշրանքներ կը բաշխէի ճնճողուկներուն :

Երբ գործս աւարտած՝ ընկերներուս հետ կը մեկ-  
նէի, տասերկու քէն տասերեք տարեկան պղտիկ աղջիկ  
մը, թեթեւ պատուտած հազուադէպով, ձեռքն ու երեսը  
ցուրտէն կարմրած, մեր դէմը ելաւ : Չուան մը բռնած  
էր, որուն ծայրը կապուած փոքրիկ շուն մը ուրախ  
զուարթ կը ցատկուտէր :

Վարանոտ, վայրկեան մը կանգ աւանդէ ետքը, աղ-  
ջիկը յանկարծ որոշումը տուաւ, և մեզի մօտենալով  
սկսաւ բաներ մը մըմնջել : Ի՞նչ էր ուզածը : Անշուշտ  
ողորմութիւն : Ու մենք կը շարունակէինք մեր ճամբան :  
Բայց աղջիկը կը հետևէր մեզի յամառութեամբ : Տե-  
սակ մը յուզմունք կար իր աչքերուն մէջ, գրեթէ ցա-  
սում մը մեր անտարբերութեան դէմ : Ու ձայնը բար-  
ձրացնելով .

— Պարոններ, պարոններ, կը թախանձէր :

Մօտեցանք իրեն : Խեղճը կորսնցուց իր համարձա-  
կութիւնը, գլուխը կախեց կուրծքն ի վար և աչուը-  
ները լեցան արցունքով :

— Մայրս հիւանդ է, ըսաւ, դրամի պէտք ունինք,  
ու գնող մը կը փնտռեմ շանս համար :

Ուսանողները ընդհանրապէս հարուստ չէին, բայց  
այնչա՛փ սրտաշարժ էր մեզի եղած առաջարկը, որ մեր

մէջ հանդանակութիւն մը կատարեցինք : Աղջիկը գրպանեց դրամը, աչքերը սրբեց, չուանը յանձնեց ինծի, ու ցեխին ջուրին մէջ գետինը ծունգի եկած պահ մը գրկեց շունը, սկսաւ անհամար համբոյրներով համբուրել զայն, գլուխը, աչքերը, քիթը, բերանը : Իսկ շունը, թաթերը տիրոջը ուսերուն դրած, կը լղուղուտէր զայն, պոչիկը երերցնելով :

Հրածեչտի այդ ողջոյնները աւարտելէ վերջ .

— Լաւ խնամեցէք Մուսթաշս, ըսաւ :

Ու հեռուն երթալով, նստարանի մը վրայ ելաւ ու սկսաւ դիտել իր փոքրիկ բարեկամը որ չէր ուղեր մեզի հետեւիլ, և զոր քաշկուտելով կը տանէինք դէպի ճաշարան : Մուսթաշ՝ ամբողջ շաբաթը տիրութեամբ անցուց, և հակառակ մեր ջանքերուն, հազիւ քիչ մը կերաւ ու խմեց : Ինքն ալ կը տառապէր անշուշտ իր տիրուհոյն կարօտովը :

Աղջիկը ո՛ւր գնաց, ի՞նչ եղաւ : Ո՞վ գիտէ : Սաւկայն ամէնուս միտքին մէջ դրոշմուեցաւ հաստատ կերպով այն գիրկընդխառնութեան տեսարանը որուն մէջ շունը իր կենդանիի հաւատարիմ ու ճշմարիտ սէրը դրած էր, և նորապի աղջիկ մը իր ամբողջ անմեղութիւնն ու գորովը :

Այդ զոհողութիւնը զոր մատղաշ աղջիկը կ'ընէր ընտանիքին պէտքերուն համար՝ իր սիրած մէկ էակէն բաժնուելով, վրաս խորապէս ազդեց :


Այդ պարզ դէպքը ինծի սորվեցուց զրկանքներ յանձն առնել գիտնալ :

**Ե. ՄԵՆԻԿ**



**Գ. ՄԱՍ**

**ԻՆՉ ՊԷՏՔ Է ԸԼԼԱԼ**



**Ի. ԿԱՄՔ**

**Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր**

— Բնութեան մէջ ամէն էակ կը ձգտի կասարկագործուելու : Եթէ մասդաւ ծառ մը կարեկար խօսիլ՝ պիտի ըսէր. « Կ'ուզեմ անիլ, կ'ուզեմ մեծնալ, կ'ուզեմ լաւ պտուղներ տալ, կ'ուզեմ աշխարհի լաւագոյն ծառերէն մէկը ըլլալ » : Այդպէս պէտք է ըսեն եւ ընեն մարդիկ :

(ԼԻՅՐԷ)

— Մարդու մը փառքը իր կամքին ուղղութեան եւ լաւ գործածութեան մէջն է :

(Տ. ՎԻՆԷ)

— « Պիտի ուզեմ » ըսելով մարդ բան մը չի կրնար ընել :

« Կ'ուզեմ » ըսելով է որ մարդիկ լաւ գործեր կրնան ընել :

(ՆՈՅՆ)

— Լաւ մը մտածելէ յետոյ, մի՛ ըսեր « պիտի ընեմ », այլ ըսէ՛ իսկոյն. « կ'ընեմ » : Այսպէսով է որ կամքը պիտի ուժովնայ :

(ՄԱՔՍ ՍԻՄՈՆ)

**ԻՆՉՊԷՏ ՅԻՍՈՒՆ ԼԵՂՈՒ ՍՈՎՐԵՑԱՅ**

Ազգապիկ ծնողքի զաւակ էի : Ունէի շատ մը եղբայրներ որոնց ամէնէն կրտսերն էի : Գիւղացի էինք :



հետեւաբար խեղճուկ դաստիարակութիւն մը առի գիւղական դպրոցին մէջ :

Այս թերի կրթութիւնս ալ աւելի թերի մնաց հօրս մահուամբ : Քանի մը ամիս ետքը , երբ տակաւին տասնընէինգ տարեկան էի , երկաթագործի մը քով աշկերտ մտայ :

Աշկերտութեանս առաջին տարիներուն մէջ կը հալէի կը մաշէի ընթերցանութեան համար . կ'ուզէի լեզուներ սովորիլ . կամքս այնչափ զօրաւոր էր որ վստահ էի թէ պիտի յաջողիմ :

Օր մը յանկարծ խորհեցայ թէ արդեօք ինչպէս կըլլայ եթէ լատիներէն սորվելու աշխատիմ : Երէց եղբորս օգնութեամբ իրիկունները կարդալով , մէկ ձմեռուան մէջ շատ մը լատիներէն գիրքեր կարդացի և յունարէնի սկսայ :

Այդ միջոցին ստիպուած էի ոչ թէ միայն ցորեկը , այլ գիշերուան մէկ մասն ալ երկաթ ձեծելով անցընել : Ճարահատած , յունարէնի քերականութիւնս գլխարկիս մէջ կը պահէի , և երբ խոշոր երկաթ մը տաքցնելու զբաղէինք , ընկերներէս գաղտուկ քերականութիւնս քանալով վառարանին վրայ կը կռթնցնէի ու կը շարունակէի բայերու խոնարհումը :

Յետոյ սկսայ նոր լեզուներ սովորիլ : Անգամ մը , տեսնելով որ ժամանակս չի բաւեր , թողուցի գործս և համալսարան մտնելով կատարելագործեցի ֆրանսերէնը , սպաներէնը , գերմաներէնը և իտալերէնը : Երկու տարի համալսարան մնալէս յետոյ կրկին սալիս գլուխը անցայ , հետս բերելով եւրոպական լեզուներու վրայ խօսող շատ մը գիրքեր :

Այդ գիրքերը կարդալէս յետոյ , մեծ եռանդով

սկսայ երբայեցերէն սորվիլ , և կամքի ու աշխատութեան շնորհիւ , քանի մը շաբթուան մէջ յաջողեցայ բաւական սահուն կերպով կարգալ և հասկնալ այդ լեզուն :

Աւելի ետքը , ուղեցի միւս արեւելեան լեզուներն ալ սովորիլ , բայց որովհետեւ միջոցներ չունէի , որոշեցի եւրոպական նաւու մը մէջ նաւաստի ըլլալ : Այս կերպով առիթը պիտի ունենայի արեւելեան երկիրներ այցելելու , և այդ երկիրներուն հին ու նոր լեզուները սովորելու :

Այս նպատակս իրագործելու համար երկաթագործի կրպակս ձգեցի , և ոտքով շատ երկար ճամբայ մը կըտրեցի նաւ մը գտնելու համար : Բայց ակնկալած նաւս չգտնելով յուսախաբ եղայ : Շուարեր մնացեր էի , երբ հնադրտական թանգարան մը այցելելու առթիւ տեսայ որ արեւելեան լեզուներու վրայ խօսող գիրքերու շատ ընտիր հաւաքածոյ մը կը պարունակէ : Արտօնութիւն ստացայ այդ գիրքերը քննելու և ուզածիս պէս կարգալու :

Անմիջապէս երկաթագործի մը քով մտայ և սկսայ արհեստս շարունակել : Պարապ ժամերս ալ կ'անցընէի թանգարանին գիրքերը կարդալով :

Այս կերպով սորվեցայ յիսունէ աւելի հին ու նոր լեզուներ , և ուրիշ շատ մը գիտութիւններ :

(Թարգմ. Ա. Կ. Ս.)

Թ. ՊԵՐԵԹ



## 2. ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

### ԳԵՂԵՅԻԿ ԽՕՍՔԵՐ

— Անհամբեր մտղը՝ իր անգուսպ փափափներուն պատճառաւ բուսառութեանց անդունդ մը կը գլորի. որքան աւելի գորատոր ըլլայ, այնքան աւելի կը վնասէ իր անհամբերութեան պատճառաւ : (ՖԷՆԸԼՈՆ)

### ԽՌՆՉԱՅԼԸ

Դասատուն՝ գոց ընելու համար ոտանաւոր մը սուսած էր Լեւոնի : Կիրակի որ մըն էր, և Լեւոն՝ իրենց պարտէզին պատին տակը նստած, չէր կրնար գոց ընել ոտանաւորը ու սիրտը կը սեղմուէր :

Եթէ քիչ մը յողմէր ու քանի մը անգամ շարունակ կարդար՝ հարկաւ այդչափ ծանր չսլիտի գար դասատուին յանձնած աշխատութիւնը : Բայց Լեւոն կ'ուզէր մէկ անգամ կարդալով՝ բառ առ բառ միտքը պահել, ինչ որ անկարելի էր արդէն :

Պահ մը նեղսրտութիւնը այն աստիճան աւելցաւ որ գիրքը խոտին վրայ դրաւ, և սկսաւ լալ :

— Ինչ ունիս, զաւակս, ըսաւ մայրը որ պատին տակ նոր բացուած վարդերը կը քաղէր :

— Չեմ կրնար գոց ընել սա ոտանաւորը, պատասխանեց Լեւոն :

— Ինչո՞ւ, այդչափ դժուար է, տեսնեմ անգամ մը թէ ի՞նչ է :

Լեւոն ցոյց տուաւ ոտանաւորը : Մայրը կարդաց խոյն և դարմացմամբ հարցուց .

— Բայց շատ դժուար բան մը չէ ասիկա, ինչո՞ւ չսլիտի կրնաս գոց ընել :

— Օ՛հ, մայր, ըսաւ Լեւոն, կարդացի անգամ մը և բառ մը անգամ միտքս չմնաց . ի՞նչպէս սլիտի կրնամ ամբողջը գոց ընել :

— Կը տեսնե՞ս որ քուկը է յանցանքը, և ոչ թէ ոտանաւորինը . ո՞վ ըսաւ քեզի թէ մէկ անգամ կարդալով կրնաս ասիկայ գոց ընել, ո՛չ թէ դուն, այլ քենէ շատ աւելի մեծ տղաքն ալ չեն կրնար ընել : Նախ համբերել գիտցիր, ամէն մէկ տողը կարդա, քանի մը անգամ շարունակ, և սլիտի տեսնես որ կարծածիդ չափ դժուար բան մը չէ :

Յետոյ պատին վրայէն սողացող խոնջայլ մը ցոյց տալով, աւելցուց .

— Նայէ՛, սա խոնջայլը կէս ժամ առաջ ճամբայ ելաւ պատին ստորոտէն և տակաւին հաղիւ կանդուն մը տեղ յառաջ դացած է . ի՞նչ ընէ խեղճը, շատ դանդաղ է, և յանցանքը իրը չէ, դանդաղութիւնը բնական թերութիւն մըն է իրեն համար : Բայց



ատոր փոխարէն համբերելու առաքլնութիւնը ունի : Երբ կէս ժամ առաջ պատին տակէն ճամբայ ելաւ, գիտէր թէ իրեն շատ ժամանակ պէտք սլիտի ըլլայ մինչև պատին կատարը հասնելու համար, բայց չի յուսահատեցաւ . առանց վհատելու կը յառաջանայ, և իր համբերութեան

Հնորհիւ պիտի հասնի պատին կատարը, հող չէ թէ զիչ մը ոչ: Խոնջայլի մը չափ ալ չիկաս:

Լեռն ամօթով մնաց, լացը դադարեցուց և այս անգամ սկսաւ մօրը պատուիրածին պէս դոյ ընել իր ոտանաւորը: Կէս ժամ ետքը՝

— Մայր, կ'ըսէր, իրաւ համբերութիւնը շատ ազ-  
ւոր բան մըն է եղեր, ըսածիդ պէս ըրի և չուտ մը սորվեցայ ոտանաւորը:

— Այո՛, զաւակս, ըսաւ մայրը, համբերութիւնը շատ օգտակար առաքինութիւն մըն է մարդոց համար, ջանա՛ որ ամէն բանի մէջ օգտուիս անկէ, և ոչ թէ միայն ոտանաւոր դոյ ըրած աստեղ:

Հ Ա Մ Բ Ե Ր Ո Ւ Փ Ի Ի Ն

Կամբ, աշխատանք ու կորով  
Երեք ձիւրքեր եւ, որով  
Մարդ, ծովու վրայ թէ հողի  
Անպատճառ կը յաջողի:

Սակայն, ձիւրք մ'աչ կայ. անի  
Միւսներուն յարի պիտանի,  
Համբերութիւնն է, որ մեզ  
Հարթէ ամէն անպարտէզ:

Համբերողն է իմասուն, Կը ծաղկիկն իր արտն ու տուն.  
Եւ խռոթ, արգելք, իր ետիկ  
Կը դիւրանան, կ'անհետիկ:

Համբերողին՝ անխափան  
Եւ հեշտ գայ կեանքի ճանքան,  
Որուն ծայրն ալ, անվրէպ,  
Բաղդը ժպտի բարեղիպ:

Համբերողը, աներկուն,  
Քաշէ անխոռով ու խոր քուն,  
Եւ ժիր, կայստ ու ժպտուն  
Կը զարթնու ալ ան առտուն:

Համբերողն, հեզ ու խոնարհ,  
Յուզմունք ու կիրք յունեւար.  
Համբերել գիտցող մարդուն  
Վրայ Աստուծ հսկէ արքուն:

Ա.Լ.ՓԱՍԼԱՆ

Բառերու նշանակութիւնը. — Անխափան՝ առանց արգելքի: Անվրէպ՝ անպատճառ:

Պ Է Ռ Ն Ա Ր Բ Ա Լ Ի Ս Ի

Համբերութեան շատ գեղեցիկ օրինակ մը եղած է Պէճնար Բալխիի կեանքը:

Ազքատ ծնողքի մը զաւակն էր այս նշանաւոր մարդը: Պղտիկ տարիքէն ապակիի գործարան մը մտաւ իր աշկերտ. հոն սորվեցաւ ապակիի վրայ գծագրու-

թիւն ընկու արուեստը : Երիտասարդ գործաւորը նոյն ատեն հետաքրքրուեցաւ նաեւ յատակադիմեր շինելու արուեստով , և յարատեւ աշխատութեան մը շնորհիւ կրցաւ կատարելագործել այդ արուեստն ալ :

Այսպէսով , երկու արուեստ ունեցաւ , և անոնց շնորհիւ յաջորդաբար Ծրանսայի և Գերմանիոյ շրջանը ըրաւ : Իր այցելած բոլոր երկիրները իրեն համար ուսումնասիրութեան աւարկաներ էին , ամէն բան կը դիտէր և չկար հետաքրքրական բան մը որ վերսկէր իր ուշադրութենէն : Այս պատճառաւ է որ իր գրած գիրքերը այնչափ մեծ հմտութիւն մը կը յայտնեն և այնչափ ալ բազմաթիւ նիւթեր կը պարունակեն :

Օր մը , իբր նուէր ստացաւ խտալական յախճապակիէ գեղեցիկ սնակ մը՝ որուն վրայ շատ գեղեցիկ և կիսուածուած պատկերներ կային : Պէ՛ռնար Բալիսի մտածեց ինքն ալ ատանկ յախճապակի մը շինել : Գործը սակայն դիւրին չէր թէ՛ բրուտի արհեստը չէր դիտեր , և թէ՛ մանուսնող բնաւ գաղափար չունէր թէ ինչպէս պէտք է գործել այդ կիսուածները :

Եւ սակայն , գործի սկսաւ : Կը փշրէր հողը՝ հազարումէկ բազադրութիւններ կը շինէր , իրարու կը խառնէր ու կ'եփէր փուռի մը մէջ , համբերութեամբ սպասելով առաջ գալիք արդիւնքին : Այսպէս , ամբողջ տարի մը աշխատեցաւ առանց արդիւնք մը ձեռք բերելու : Օր մը , վերջապէս յաջողեցաւ շինել ձերմակ կիսուած մը , ճիշտ այն կիսուածը որ այսօր մեր գործածած սկաւառակները կը ծածկէ :

\* \* \*

Բայց այդ կիսուածը չէր գոհացներ ղինքը . ինք կ'ուզէր գունաւոր կիսուածներ ունենալ : Այդ առաջին

յաջողութենէն քաջալերուած , ինք իր ձեռքով փուռ մը շինեց , և յամառ համբերութեամբ մը կրկին սկսաւ իր փորձերը : Քսան անգամ յաջողելու վրայ եղաւ , բայց ամէն անգամուն ալ ո՛րքէն է արկած մը կործանեց իր յոյսերը : Որովհետեւ փուռ տաքցնելու եղանակն ալ չէր գիտեր , երբեմն իր պատրաստած խմորը կ'այրէր մէկ կողմէն , մինչդեռ միւս կողմը բնաւ չէր եփեր : Երբեմն ալ , այլեւայլ գոյներ առաջ բերելու համար



փուռին մէջ դրուած նիւթերը իրարու կը խառնուէին և այլանդակ գոյն մը կուտային : Անգամ մը , փուռին կամարը վրաւ աշխատած միջոցին , և ուրիշ անգամ մըն ալ , մինչդեռ յաջողութեան մեծ բան մը չէր մտացած , փոշիէն արուեցաւ իր աշխատութիւնը :

Այս արկածները երբէք չյուսահատեցուցին Պէ՛ռնար Բալիսին : Ընդհակառակը , միշտ աւելի համբերութեամբ կ'աշխատէր : Կ'ինը , զաւակները , և զբայցիները ղինքը

յիմարի տեղ կը դնէին : Ամբողջ հարստութիւնը վառ-  
նեց այդ աշխատութեան համար, անօթի մնաց, բայց  
երբէք յոյսը չպակսեցաւ իր քով, և միշտ առաջ տա-  
բաւ իր փորձերը : Օր մը, երբ ա՛լ վառելիք փայտ չէր  
մնացած, փուռը չպաղեցնելու համար, անոր մէջ նետեց  
տանը բոլոր կարասիները, ինչպէս նաև իր սենեակին  
ձեղունին տախտակները :

Ամբողջ տանըվեց տարի այսպէս աշխատելով  
վերջապէս յաջողեցաւ, և սկսաւ պատրաստել դունա-  
ւոր կիտուածով սկաւառակներ և անօթներ՝ որոնք այ-  
սօր ոսկի սնակներէ աւելի կարժեն :

Ինչ անդամ տեսնուած է համբերութեան այս առ-  
տիճան գեղեցիկ օրինակ մը : Ամբողջ տանըվեց տարի  
յաջորդաբար ամէն բան զո՛նել նպատակի մը համար,  
վրայ տալ իր հարստութիւնը, առողջութիւնը, անձնա-  
կան շահը, շարունակ նեղուելով դրամի պակասէն,  
ծաղրուելով և արհամարհանքի ենթարկուելով, գրեթէ  
անօրինակ բան մըն է մարդկութեան պատմութեան մէջ :

Բառերու նշանակութիւնը. — Կիսուածուած՝ կէտ  
կէտ դոյնողոյն բանուած :



### 3. ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Թ Ե Բ

— Ա. խաւսիւք, զբաղած ըլլալը, երջա-  
նիկ ըլլալ կը նշանակէ : (ԿՐԷՑ)

— Աղբասութիւնը չսանիլը ամօրալի  
բան մըն է. ա՛լ աւելի ամօրալի բան  
մըն է ա. խաւսութեամբ աղբասութիւնը  
չի դարձանելը : (ՊԵՐԻԿԼԷՍ)

— Անօրութիւնը ա. խաւսոյ մարդուն  
դռնէն կը նայի, բայց անկէ ներս չի  
մտնիր : (ՅՐԱՆՔԼԻՆ)

— Ա. խաւսութիւնը մեզմէ կը հեռացնէ  
եւե՛ մեծ չարիքներ, ձանձորոյք, ծուլ-  
ութիւնը, կարօտութիւնը : (ՎՕԼԹԷՐ)

#### Ա Ն Մ Ա Ն Օ Փ Ի Ն Խ Բ Ա Տ Ը

Երբ տաննեւութը տարեկան էի, ամառուան մէջ՝  
կիրակի օրերը վէրսայլ կ'երթայի : Բաղքին մօտերը միշտ  
մուրացկան մը կը կենար, Անթուանը, և ամէն անդամ  
որ մարդ մը տեսնելու ըլլար, կ'աղաղակէր .

— Գիթացէք, իմ բարի՛ պարոնս :

Վէրսայլ դացած ատեններս երբէք չէի մոռնար  
դայն. միշտ միեւնոյն տեղը կը կենար, և միշտ դրամ  
կուտայի իրեն :

Օր մը, մինչդեռ այդպէս իմ ողորմութիւնս կը նե-

տէի անոր բայ գլխարկին մէջ, անձանօթ մարդ մը ան-  
ցաւ մեր մօտէն :

— Գլխացէ՛ք, իմ բարի պարոնս, պուռաց Անթուան :  
Անձանօթը իրեն գարձաւ, քանի մը վայրկեան ու-  
շաղիր քննեց Անթուանը, ու մօտենալով՝



— Բայց, ըսաւ, դուն խելացի և աշխատելու կա-  
րող կ'երեւաս, ինչո՞ւ համար այս աստիճան անարգ ար-  
հեստի մը կը հետեւիս : Կ'ուզե՞ս որ քեզ աղատեմ այդ-  
վիճակէն և հարուստ դարձնեմ :

Անթուան սկսաւ խնդալ, ես ալ իրեն հետ մէկտեղ  
կը խնդայի :

— Խնդացէ՛ք, խնդացէ՛ք որչափ որ կ'ուզէք, շարու-  
նակեց անձանօթը, բայց հետեւեցէք իմ խորհուրդնե-  
րուս և ճիշդ ըսածիս պէս հարուստ պիտի ըլլաք :

« Ես ալ ազբատ էի, բայց փոխանակ մտրալու,  
պզտիկ կողով մը ձեռք անցուցի և դաւառ երթալով  
սկսայ խնդրել ո՛չ թէ ողորմութիւն, այլ հին քուրջեր :  
Մարդիկ ինծի ձրի կուտային այդ քուրջերը, զորս թուղթի  
գործատէրերուն կը ծախէի :

« Տարի մը ետքը ա՛լ քուրջ չէի խնդրեր, այլ կը  
գնէի. նոյն իսկ սալակ մը և եզ մը ունէի իմ գործս  
աւելի դիւրութեամբ կատարելու համար :

« Հինգ տարի ետք, երեսուն հազար ֆրանք ունէի :  
Ամուսնացայ թուղթի գործատէրի մը աղջկան հետ :  
Գործատէրը զիս ընկեր առաւ, և ես, աշխատելով ա՛լ  
աւելի առաջ տարի գործը : Այսօր երկու մեծ տուն ու-  
նիմ Բարիդի մէջ, և իմ թուղթի գործարանս ալ տուած  
եմ զաւկիս՝ զոր կանուխէն վարժեցուցած եմ աշխա-  
տութեան : Դուք ալ ինծի պէս ըրէք, և հարուստ պիտի  
ըլլաք : »

Այս ըսելով, անձանօթը հեռացաւ : Անթուան ա՛յն  
աստիճան մտածկոտ մնաց որ չտեսաւ անցնող երկու  
կիներ՝ որոնցմէ թերեւս ողորմութիւն խնդրէր :

Շատ տարիներ ետքը, գիրք մը գնելու համար  
գրատուն մը մտայ : Խանութին մէջ գէր մարդ մը կար  
որ հոս ու հոն կ'երթեւեկէր՝ շարունակ հրամաններ տա-  
լով հինգ վեց պաշտօնեաներու :

Երկուքս ալ իրարու հայեցանք, ինծի անա՛նկ կու-  
ղար թէ այդ մարդը կը ճանչնայի :

Գէր մարդը որ խանութին տէրն էր, իսկոյն ինծի  
մօտեցաւ և հարցուց .

— Պարո՛ն, արդեօք ասկէ քսան քսանեւ հինգ տարի  
առաջ երբեմն Վէրսայլ կուգայի՞ք :

— Ա՛հ, դ՞ո՞ւն ես, Անթուան, գոչեցի Վերսայլի  
մուրացիկը ճանչնալով :

— Այո՛, ե՛ս եմ, պատասխանեց :

Եւ անմիջապէս ետքը աւելցուց .

— Կը յիշե՞ս անձանօթ մարդը, իր խորհուրդին հե-  
տեւեցայ, և այսօր հարուստ եմ :

Գ Ա Շ Յ Ե Ր ՈՒ Ն Մ Է Ձ

Ոսկի հասկերն արեւիկն սակ կը հրքճուիկն :  
Ճոխ գանձերով առլըցուն է հողը սեգ ,  
Որուն վրայ հակած ինչպէս մայր մ'անկեկեզ՝  
Կը իսնանէ զայն՝ բազմախոնջ գիւղացիկն :

Իրիկուան մեղով բոյրերն անվե՛րջ ծրծերով ,  
Ու քունդ երգի պսսառ մը քառ շրթունքիկն ,  
Իր վասսակիկն մէջ յաղթական , հրքճուագիկն ,  
— Օ՛ գեղջուկի երանուրբիկն անխրոտով :—

Աշխատարհւն հիսնաշի ու անկեղծ ,  
Ուր կը իսպսայ մերք իր հոգիկն ադանանդ ,  
Եւ ուր փոխան յուզումներուն արսափանդ՝  
Մաքուր ճիգիկն լոկ վարձիք կայ , փառայե՛րց :

Ու կը դասի՛ կրքած քայց միշտ անվեհեր՝  
Մըշակն անվիշտ , իր սուրբ հողիկն անձնասուր ,  
Բնութեան շէտ ու հեռաւոր անկիւնն ուր  
Քաղիկնի դառն հոգեր բընառ չեն իջներ :

Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Բառերու նշանակութիւնը . — Առջուն՝ լեփլեցուն :  
Փառայեղջ՝ փառաւոր : Կփած՝ ծռած :

Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ն Ե Ր Ը

Ամէն օր քաղքին փողոցներէն կ'անցնին գիւղացի-  
ներ, համակ ձերմակ հագած՝ արեւին լափող կրակներուն  
տոկալու ինքնալստահութեամբ հպարտ :

Ինամով փաթթուած մանգաղները ուսերնուն զար-  
կած , կաշիէ գոգնոցներ կապած , կուրծքերնին բայ ու  
չապիկին քղանցքն ու թեզանիքը հովին տուած՝ զուարթ  
խօսակցելով կ'անցնին , երթալ ցրուելու համար դաշ-  
տերուն մէջ :

Ուրախ են հիմայ ու շատ առողջ , բայց քանի մը  
չաբաթէն վերադարձած ատեննին , մի՛ հարցնէք անոնց  
թէ ո՛ւրկէ կը վերադառնան . արեւը սպառած , լափած  
պիտի ըլլայ զիրենք , ու հիւանդոտ , տկար ձայնով մը  
միայն պիտի կրնան պատասխանել ձեզի :

Կ'երթան անոնք դաշտերուն մէջ անսպառ համբերու-  
թեամբ և անխոնջ տոկունութեամբ հողագործին սիրական  
ցաներուն վրայ հակած՝ զանոնք հնձելու , ժողվելու :

Օրերով , շաբաթներով անոնք խրճիթի մը երդին  
տակ չպիտի պառկին ալ , ցրուած որոններ իրենց ան-  
կողին պիտի ըլլան ու խուրճ մըն ալ քարձ պիտի ըլլայ :  
Գիշերը , իրենց յոգնած աչքերը երկինքին լուսաւոր  
մթութիւններուն մէջ խորատուգուած պիտի գոցուին ,  
ու ծղրիթներու թրթուուն սոյլերը անուշ օրօրը պիտի  
ըլլան և յաջորդ օրը նորէն քրտինքի մէջ պիտի լողան  
անոնք ու տաքէն պիտի խաչին :

Բայց տաքին չղիմանալու գաղափարը չի՛ խրոչե-  
ցներ արդեօք դոնէ աղջիկները՝ այս դժուարին աշխա-  
տութենէն : Ա՛հ , չէ , անոնք ալ ստիպուած են երթալ

հացի կռիւը մղել դաշտի բրտութիւններուն դէմ, այս-  
րերէն աւելի զոհողութիւններ ընելով արեւին ու հովին :  
Իրենց ժիր մանկութիւնը, գեղեցկութիւնը, միակ թան-  
կագին զարդերն են, իրենց գեղջուկ հողիին միակ մխի-  
թարանքը :

Եւ հակառակ գլխու, ձեռքերու այնքան զգուշաւոր  
պատասպարումներուն, իրիկնամուտի վերադարձին երբ  
իրենց զուարթ խումբերուն կը հանդիպիմ, արեւին այ-  
րուած քները շատ որոշ կ'երեւան իրենց դէմքերուն վրայ :

**Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Բառերու նշանակութիւնը . — Անխոնջ՝ չի յոգնող :



**4. ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ**

**ԵՐԿՈՒ ԵՐԿԱԹԱԳՈՐԾՆԵՐԸ**

Լեւոն և Արտաշէս միեւնոյն օրը դպրոցէն ելած և  
երկաթագործութիւնն ուսած էին հայր Կարապետի քով :  
Լեւոն գիւղը մնացած էր, իսկ Արտաշէս՝ որ ամէն բանէ  
չուտ մը կը ձանձրանար՝ գիւղէն հեռացած էր :

Երկու ընկերները քսան տարի իրարմէ հեռու ապ-  
րած էին և երբէք իրարու մասին լուր չէին առած :

Օր մը, Լեւոն մինչդեռ կ'աշխատէր, յանկարծ Ար-  
տաշէսը տեսաւ իր խանութին առջեւ :

— Ա՛հ, դո՛ւն ես, ըսաւ զարմացմամբ, ո՞ւր էիր

նայինք, ի՞նչ ըրիր այսքան ատեն, երբէք լուր չառի-  
քու մասիդ :

— Քիչ մը ամէն տեղ պտտեցայ, ըսաւ Արտաշէս,  
բայց տեղ մըն ալ չկրցայ մնալ. երբեմն վարպետներս  
գործիս չէին գար, երբեմն ընկերներուս հետ անհամա-  
ձայն կը գտնուէի և պայուսակս կապելով ուրիշ տեղ մը  
կ'երթայի գործ վնասելու : Այսպէս, շարունակ թափա-  
ռեցայ հոս ու հոն : Հետեւանք սա կ'ըլլար որ նոր գործ  
մը գտնելու համար կը ստիպուէի գործածել նախապէս  
չահած ստակս, և շատ անգամ նեղութեան մէջ իսկ  
կ'իյնայի : Քսան տարուան մէջ շատ տեղեր տեսայ,  
չատ տեղեր աշխատեցայ, բայց չկրցայ դրամ աւելցնել :  
Վերջապէս, օր մը միտքս գրի որ գիւղս դառնամ՝ իմ  
հին ծանօթներս տեսնելու, և ահա՛ հոս կը գտնուիմ :  
Աս է իմ պատմութիւնս : Դո՛ւն ինչ ըրիր նայինք :


— Ե՛ս, ըսաւ Լեւոն, միշտ հոս մնացի, և երբէք  
չի բաժնուեցայ մեր վարպետին հայր Կարապետի խանու-  
թէն : Օր մը Հայր Կարապետը ըսաւ ինձի. «Տղա՛ս, ես  
ա՛լ ձերացայ, կ'ուզե՛ս քու վրադ առնել խանութին  
գործերը» : — «Բայց վարպետ, պատասխանեցի իրեն,  
քանի մը հարիւր դրուչի ինայողութիւն մը միայն ու-  
նիմ, ի՛նչպէս կրնամ խանութդ գնել» : — «Հող չէ՛, հող  
չէ՛, ըսաւ, վերջէն կը վճարես պարտքդ, ես մեծ վըս-  
տահութիւն ունիմ քու վրադ, և յետոյ, յաճախորդ-  
ները կը ձանձնան քեզ, ուրիշ ամէն մարդէ աւելի աղէկ  
պիտի կրնաս առաջ տանիլ այս խանութին գործերը» :  
Հիմայ խանութը ամբողջովին իմս է : Ասկէ քանի  
մը տարի առաջ ամուսնացայ մեր դրացի Մարտիրոսին  
աղջկանը հետ, և այսօր երեք զաւակ ունիմ : Շատ  
ուրախ կ'ապրիմ հոս, իմ ծանօթներուս մէջ, ու բնաւ  
չեմ ուզեր ուրիշ տեղ երթալ :



— Մեղք, ըսաւ Արտաշէս, երանի թէ ես ալ քեզի պէս յարատեւող եղած ըլլայի, հիմայ ես ալ խանութ մը կ'ունենայի, և այդպէս հանգիստ կ'ապրէի:

— Բայց ինչո՞ւ նորէն չունենաս, ինչո՞ւ այդպէս կը յուսահատիս, աշխատէ՛, և պիտի տեսնես որ դժուար գործ մը չպիտի ըլլայ:

Ա.յն օրէն ի վեր Արտաշէս կ'աշխատի յարատեւութեամբ, և միշտ յաջող գործեր կ'ունենայ:



### 5. ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՍ

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

— Անուամ մարդն անասունի մը հալուսներ ունի միտս: (ՀԻՆ ԱՌԱԾ)

— Ասումը կը վանէ ձանձրոյքը, կը փարատէ տրտմանը, կը բմբկեցնէ ցաւը, կը կենդանացնէ ու կը շնորհակալութիւնը: (ՏԸ ՍԷԿԻՐ)

— Անուամ մարդը դեկ չունեցող նաւուն կը նմանի, շուտով կը մոլորի:

(ՍԷՆՅ ԷՎՐԸՍՈՆ)

— Դրամը մարդս հարուստ կը դարձնէ, ուսմունքը մարդս կը մեծցնէ:

(ՅԵՆԷԼՕՆ)

#### Ն Ա Ի Ա Կ Ի Ն Ք Ի Ե Ր Ը

Հողագործ թովմաս օր մը իրենց գիւղին ուսուցչին հետ կը ճամբորդէր նաւակով:

Թովմաս կը տրտնջար որ իր դրացի հողատէրը, Ղուկաս, չա՛տ աւելի լաւ և աւատ բերք կ'ունենայ ամէն տարի:

— Ես ալ, կ'ըսէր թովմաս, անոր չափ եղ ունիմ, յետոյ անկէ աւելի ուժով եմ և անկէ աւելի կ'աշխատիմ: Ուրեմն ինչո՞ւ անոր բերքը իմընէս աւելի լաւ և աւելի աւատ կ'ըլլայ:

Ուսուցիչը որ երկար ատեն մտիկ ըրած էր անոր արտունջները՝

— Թովմաս, ըսաւ, ատոր մէջ զարմանալու բան չկայ, Ղուկաս միշտ քու բերքէդ աւելին ու լաւը պիտի ունենայ:

— Բայց ինչո՞ւ, չէ՞ մի որ ես անկէ աւելի կ'աշխատիմ, և անկէ աւելի առողջ, անկէ աւելի ուժով եմ:

— Այո՛, բայց ոչմն ու առողջութիւնը չեն բաւեր մարդուս, ուրիշ բան մըն ալ պէտք է, բան մը զոր Ղուկաս ունի և դուն չունիս:

— Ի՞նչ բան:

— Ուսմունք:

— Գնա՛ գործիդ, Աստուածդ սիրես, ըսաւ թովմաս խնդալով, ուսմունքը ի՞նչ պէտք է ինձի, երբ այսչափ առողջ ու զօրաւոր եմ:

Խնդալու կարգը ուսուցչին եկաւ:

— Մինա՛ս, ըսաւ նաւավարին դատնալով, նաւակը աւելի շուտ և աւելի ապահով առաջ տանելու համար ի՞նչ կ'ընես:

— Երկու թիերը մէկանց կը քաշեմ, պատասխանեց նաւավարը:

— Մէկ թին չի՞ բաւեր:

— Ո՛չ, նաւակը ծռու կ'երթայ և շուտ չի հասնիր:

Ուսուցիչը թովմասի դարձաւ.

— Լսեցի՛ր, ըսաւ անոր, ինչպէս որ նաւակը մէկ թիով չի կրնար լաւ քալել, այնպէս ալ մարդ միայն

առողջութեամբ և ուժով չի կրնար յառաջ գլխել: Ուս-  
մունքն ալ պէտք է իրեն, ապա թէ ոչ դանդաղօրէն  
միայն կրնայ յառաջանալ: Տե՛ս, Ղուկաս որ կարգալ  
գրել գիտէ, գիրքերու շնորհիւ կը հասկնայ թէ լաւ ցորեն  
հասցնելու համար ի՞նչպէս պէտք է աշխատիլ և ի՞նչ  
հնարքներ ի գործ դնել: Գուք որչափ որ ալ շատ բան  
գիտնաք, գիրքերը ձեզմէ աւելի բան գիտնն միշտ:  
Ղուկաս գիրքին կը հետեւի, և հակառակ քեզմէ քիչ  
աշխատելուն, հակառակ քեզմէ նուազ առողջ ու նուազ  
զօրաւոր ըլլալուն, քու բերքէդ շատ աւելի լաւ և քիչ  
շատ աւելի առատ բերք կ'ունենայ ամէն տարի:

Ն Ա Ի Ա Կ Ն Ե Ր

Գարնան անուշ երկինքին սսկ,  
Ծովին վրայ ջինջ ու կայստակ,  
Որ փոքրփոքի մեղմ հոյէն,  
Նառակներ կան անա երկու  
Որոնք մրցակից մէկ մէկու  
Պիտի հետուն արշաւն:

Քարափին մօտ, երկստո խուճեր  
Հեւաքիտ ու անհաւեր՝  
Իօսին, վիճին շարունակ,  
Իրարու մէջ բռնեկ գրաւ  
Թէ ո՞րն առնու պիտի դիւրաւ  
Առաջնորդեան մրցակակ:

Մեկնումի նշանն երբ կը սրբուի,  
Իսկոյն ջրոս ու կորովի  
Կը շարժին գոյգ գոյգ քեւեր,  
Թեւերն հոժկու նառակներուն  
Որք, քիտով, դիմեկ հետուն,  
Դիմացի եզերքն ի վեր:

Կը հեռանան...: Ու կ'երեւին  
Լոյծ երեսին վրայ ծովին  
Երկու կէտեր սեւ, փոքրիկ...:  
— Հասնեալ մօտ նրպասակին  
Թռիւ անպերէն, որոսագին  
Պայքին մերիկ, փոքորիկ...:

Մին այն երկու նառակներէն  
Գործածէ դէկն եւ ուժգնօրէն  
Կործի սայ գոռ աշիֆներուն,  
Մին յդեռ ջուրերուն դեմ արի՛  
Միան յուսահաս կը սլայքարի  
Ուղեկորոյս, երեուն:

Մին հոսանքին կը տկայ քայ,  
Եւ անխոսոր գնալով առաջ  
Դիմացն հասնի անխափան.  
Մինչ միան որ դէկ չունի, ափա՛ւ  
Թափաւերէ ետքն հոն ու հոս,  
Կ'ընկրդմի ճիշդ կէս ճաւրան:

Տրդա՛ք, կեանքն որ պիտի ապրի՛ք  
Օրով մ'ե՛, ուր սիրե՛ փոքորիկ . . .

Պե՛սք է գիտնա՛ք դուք աղէկ  
Թե՛ ինչո՛ք, ուսնու՛նք եւ կա՛նք հըգօր

Միայն կրնան հասնապագօր

Ծառայե՛լ ձեզ իբրեւ դէկ :

Ա. Լ. Փ. Ա. Ա. Ն.

Բառերու նշանակութիւնը. — Զինք՝ յտակ : Կոյծ՝ սահող : Ուղեկորոյս՝ ճամբան կորսնցուցած : Երեւուն՝ դողդոջացող : Անխոստ՝ առանց խոստրելու :

ՀԱՐՏՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Դասարանին մէջ, աշակերտ մը կ'ըսէր իր ընկերոջը .

— Ես պիտի աշխատիմ որ հարուստ ըլլամ, հարըստութիւնը աղուոր բան է, անանկ չէ :

Դաստիարակը որ աղուն մօտը կը գտնուէր, լսեց այս խօսքը ու ըսաւ .

— Տղա՛ս, հարստութիւնը իրաւ աղուոր բան է, բայց հարուստ ըլլալէ առաջ աշխատէ որ ուսմունք սորվիս, զարգացած մարդ մը ըլլաս : Զարգացումը ոչ միայն չի վնասեր հարուստ ըլլալու փափաքիդ, այլ աւելի երնպատէ անոր իրականացման :

«Զարգացման օգուտը մինակ աս չէ, նոյն իսկ եւ հարուստ ալ ըլլաս, կրկին զարգացման չնորհիւ է պիտի յաջողիս հարստութիւնդ պահպանել և աւել-

ցնել : Ի՞նչ օգուտ ունի դրամը, եթէ չես գիտեր զայն օգտակարապէս գործածել : Վասնուելով, վասնուելով պիտի հասնի վերջապէս, և դուն նորէն պիտի աղքատանաս : Զարգացումն է որ քեզի պիտի սորվեցնէ թէ ի՞նչպէս պէտք է գործածել հարստութիւնը, ի՞նչպէս պէտք է շահագործել զայն և աւելցնել :

Մի՛ մոռնար նաեւ որ միմիայն հարուստ ըլլալով մարդ չի կրնար իր նմաններուն յարգանքին արժանանալ, անոնցմէ մեծարուիլ, սիրուիլ . զարգացած պէտք է ըլլալ ամէն բանէ առաջ : Իրաւ է որ հարուստ մարդը մատով կը ցուցնեն, բայց զարգացած մարդն ալ կը յարգեն : »



### 6. Բ Ա Ր Ե Կ Ա Մ ՈՒ Յ Ի Ն

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

— Առափինի՛ եւ իրենց առափնուրփուններով իրարու նմանող մարդիկը միայն կրնան կատարեալ բարեկամներ ըլլալ :  
(ԱՐԻՍՏՈՏԷԼ)

— Կեանքի ամէնէն գլխաւոր քաղցրութիւնը բարեկամութիւնն է. բայց երբ գեթ բարեկամներ ընտրած ըլլանք, բարեկամութիւնը կեանքի ամէնէն մեծ դառնութիւնը կը դառնայ : (ՍԷՆ ԹԷՎՐԸՄՈՆ)

— Այն մարդը որ չէ հանցած անկեղծ ու անճաշխարհի բարեկամութեան մը գեղեցկութիւնը, չգիտեր բնաւ թէ մարդ որչա՛փ երջանկութիւն կրնայ գտնել իր նմանէն : (ԵՌՆԿ)

— Առանց վստահութեան՝ բարեկամութիւն չկայ : Մարդ, երբ իր բարեկամին չի վստահիր, ամէնէն մեծ նախասիրներ րած կ'ըլլայ անոր : (ԼԱՔՈՒՏԷՐ)

#### Ա Մ Ի Ն Ք Ա Ս

Ազգաստ հովիւ մը, Ամինթաս, տապարը ձեռքը դուրս ելաւ անտառէն :

Ամինթաս ձողեր կտրած էր իրեն հիւղակ մը շինելու համար, և անոնց բեռան տակ կ'ընէր զէպի իր բնակարանը կ'ուղղուէր :

Առուակի մը մօտէն անցած ատենը, տեսաւ պզտիկ կաղնի մը՝ որուն արմատները մերկացած, մէջտեղ ելած էին ջուրի հոսանքներէն : Մտռը կը դողար, յայտնի էր որ պիտի տապալէր :

— Խեղճ ծառ, ըսաւ Ամինթաս, այս վայրենի ջուրին մէջ պիտի իյնաս, բայց ես չպիտի թողում որ քու գազաթղ այս ալիքներուն խաղալիքը դառնայ :

Ամինթաս իր ծանր բեռը վար դրաւ :

— Ես կրնամ իմ հիւղակս շինելու համար ուրիշ ձողեր կտրել, ըսաւ ինքնիրենը :

Եւ, հակառակ յոգնած ըլլալուն, ծոնկի եկաւ, հողը փորեց, ձողերը չարեց, ու քիչ մը ատենուան մէջ ամուր թումբ մը շինեց ջուրերուն և կաղնիին արմատներուն միջեւ :

Մտռը փրկուած էր : Ամինթաս հողով ծածկեց արմատները, և իր ըրած բարիքէն դո՛հ, կ'ուղէր հեռանալ :

Բայց անտառներու ոգին որ տեսած էր այդ բարի գործը, Ամինթասը կանչեց անոյշ ձայնով մը .

— Բարի՛ հովիւ, ըսաւ անոր, այդ ըրած բարիքդ չեմ ուզեր առանց վարձատրութեան թողուլ : Գիտեմ որ աղքատ ես, և թէ հաղիւ հինգ ոչխար ունիս, ըսէ՛ ուրեմն ի՞նչ կերպով վարձատրեմ քեզ :

— Ո՛վ ոգի, պատասխանեց Ամինթաս, թալիման դրացիս, որ իմ միակ բարեկամս է, հիւանդ պառկած է, և չի կրնար աշխատիլ, առողջացո՛ւր դոյն, և ես ուրիշ վարձատրութիւն չեմ խնդրեր :

Բարի հովիւին խնդիրքը կատարուեցաւ և թալիման առողջացաւ : Բայց անկէ ետքը, Ամինթասի բոլոր գործերը սկսան յաջողիլ, անանկ որ քիչ ատենէն հարուստ հովիւ մը դարձաւ :

ԿԵՍԵԼԻ

ՇՈՒՇԱՆԻՆ ԲՈՅՐԸ

— Ո՛վ կսպասակ շուշանդ հոյ՛սաց,  
Խոնարհ բաժակէդ կիսաբաց  
Կը բորէ հոս մը անուշակ,  
Սիրուն ծաղիկ, զայն ո՞ւսի առիր դուն : »

— « Փունջ մը կապերու համար, այս առտու,  
Կոյս մը փաղեց գիս, եւ մեխակ,  
Յաւակն ու վարդ եւ մանիշակ  
Ընկերֆս եղան հոն շարունակ :

— Բոյրս — որուն պատճառը հասկըցար սրդէն —  
Առի մեխակէն, յաւակէն, վարդէն : »

Չի մոռնաք բընար, — մարդ կ'օգտի ամէն անգամ  
Երբ կը ջանայ ընտրել իրեն շաւ բարեկամ :

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԿՈՏՐԵԼԻՆ ԵՏՔԸ

Հարկաւ ազնիւ յախճապակի էր այս սուրճի սկա-  
հակը իր պղտիկ պնակին մէջ, երբոր նուէր բերին ին-  
ձի օր մը :

Տուողը, բարեկամներէս մէկը, որուն պղտիկ ծա-  
ռայութիւն մը մատուցեր էի, ըսաւ թէ չնչին բան մըն  
էր սուածը :

Ասիկա զատեր էր, որպէս զի սուրճս անոր մէջէն  
խմեմ եւ միշտ յիշեմ զինքը այս առիթով :

Պարզ զարդի համար տեղ մը դրինք : Քանի մը օր  
վերջը հոս ու հոն նետուեր էր. անգամ մը պղտիկ  
զաւակիս ձեռքը տեսայ, հետը կը խաղար ու ժամանակ  
կ'անցընէր : Օրին մէկն ալ ձեռքէն վար ինկաւ, հաղար  
կտոր եղաւ :

\* \* \*

Անցած օր անոր պղտիկ պնակը ձեռքս անցաւ :  
Սրտի նեղութեան մէկ վայրկենիս, նուրբ զծագրու-  
թիւնները ու դունադեղ կիսուածները կը զննէի : Ստու-  
գիւ գեղեցիկ արուեստի մը հրաշակերան էր : Յանկարծ,  
իրարու փաթթուած երկու տառեր նշմարեցի՝ վրան ար-  
քայական զինանշանով, ճիշդ դիմացի կողմը չըջանա-  
կին՝ միեւնոյն զինանշանը ու միեւնոյն սկզբնատառերը :

Այս տառերը ֆրանսերէն Լ և Յ տառերն էին, և  
ահա՛ լոյսը խկոյն ծագեցաւ մտքիս մէջ : Լուի-Ֆիլիփի  
կը վերաբերէր այդ սուրճի սկահակը իր պնակովը :

Ալ տարակոյս չիկար, Յրանտայի թագաւորինն էր  
անիկա, իր զարդարուն ու նրբակերտ շինուածքը բա-  
ւելու էր արդէն մէկ նայուածքով ճշդելու թէ ան սովո-  
քական մահկանացուի յատուկ բան մը չէր կրնար ըլլալ :

Եւ հիմա, որ կտորած, փշրուած էր այդ խեղճ սկա-  
հակը որուն արժէքը չէի կրցած ըմբռնել՝ երբոր տարի-  
ներ մնացեր էր քովս, ձեռքիս տակ, հիմա որքան կը  
զղջայի ըրածիս վրայ, որչա՛փ կը կշտամբէի ինքզինքս՝  
քիչ մը հոգ և ուշադրութիւն չտանելուս համար այսքան  
թանկագին բան մը հասկնալու և պահպանելու :

\* \* \*

Բարեկամութիւններն ալ ասանկ են շատ անգամ .

ամենադոյզն արժէք մը չենք տար այն սրտերուն որոնք յօժարափոյթ ու լուռ հաւատարմութեամբ մը մեզի կը սպասեն, և հարկ է որ այդ սրտերը խորտակուին, որպէս զի կորուստին մեծութիւնը կարենանք զգալ և չափել :

Այսպէս պատահեցաւ իմ սուրճի սկահակիս համար ալ, ճանչցայ... կոտորելէն ետքը :

Գ. ԶՕՀՐԱՊ

## 7. ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐԶԱՍԻՐՈՒԹԻՒՆ

### ՔԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

— Համեսութիւնը սեանչիի յասկուրիւն մըն է որ հեմարիս արժանիքը կը յայտնէ. համեսութեամբ է որ մարդ իր նմաններէն կը յարգուի, եւ ո՛չ քէ գոռուութեամբ : (ԶԷՍԹՐՅԻՆՏ)

— Հպարտութենէն աւելի բարձր, սնափառութենէն աւելի ազնիւ բան մը կայ՝ որ համեսութիւնն է : Բայց համեսութենէն աւելի հազուագիւս բան մըն ալ կայ՝ պարգասիւրութիւնը : (ՐԻՎԱՐՈԼ)

— Մարդու մը արժանիքներուն մէջ համեսութիւնը այն դերը ունի՝ զոր շուքերը ունին կենդանագրի մը վրայ. այսինքն անոնց աւելի ոյժ եւ բարձրացում կուտայ : (ԼԱ ՊՈՒԻՅԷՐ)

### ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Նուպար փաշայի պարզասիրութիւնը առակի կարգանցած է Եզրիպոտսի մէջ, ուր՝ իր պաշտօնավարութեան

ամէնէն փայլուն ժամանակները անդամ խոյս կուտար պերճանքէ :

Երկրին մէկ սովորութեան համեմատ, պաշտօնատարներն ու աղնուատոճմ հարուստները իրենց կառքերուն առջեւէն կը վաղցնեն զոյգ մը Ասորիներ կամ Պէրպէրներ, ոսկեթել շողշողուն հագուստներ հագած, լայն թեզանիքներով ու ձեռքերնին բռնած աղեղնաձեւ գաւազանիկ մը, դէպի վեր :

Նուպար փաշա բացառութիւն կը կազմէր այդ ընդհանուր կանոնէն, և կը շատանար իր անձնական սպասաւորովը որ կառասպանին քովը կը բազմէր : Այնպէս որ զինքը դէմքով չի ճանչցող մը չէր կրնար կասկածիլ թէ կառքին մէջ քովընտի ընկողմանած ծերունին՝ երկրին բարձր պաշտօնատարներէն մէկն էր :

Շատ անգամ հետխոսն պտոյտներ ալ կը կատարէր առանձին, գաւազանին յենած, մտախոճ :

Օր մը, այսպէս էզպէքիէի հանրային պարտէզը կը մտնէ առանց ճանչցուելու, և արուեստական լճակին եզերքը ուռենիներուն տակ կը նստի պահ մը հանգստանալու. մեկնած պահուն, ոսկի մը կը ձգէ քովը դրուած սուրճի ափսէին մէջ, և անշուշտ կը հեռանայ : Սպասաւորը, կարծելով թէ մտազբազ յաճախորդ մըն էր որ սխալմամբ ոսկի մը թողուցած էր մէկ զրուշի տեղ, կը փութայ ետեւէն համնիլ, և դրամբ հտ տալ կ'ուզէ :

— Մնացորդն ալ տղոցդ համար, կը պատասխանէ փաշան՝ ճամբան շարունակելով :

Պարտէզին վարձակալը որ բացակայ էր այն միջոցին, վերադարձին կը գուշակէ թէ Նուպար փաշան էր այդ այցելուն՝ բայց չի յանդիմաներ ծառաները որ մասնաւոր պատիւ մը չէին ընծայած անոր, վասն զի իմացած էր որ Նուպար փաշա պիտի նեղանար հակառակ պարագային :

Բառերու նշանակութիւնը . — Հեփթան՝ ոտքով :

Մ Ա Ն Ի Շ Ա Կ Ը

Սիրուն մանիշակ , արդեօք ինչո՞ւ դուն  
Այդպէս հոյճիկ մէջ կը ծաղկիս հեռուն ,  
Տերեւներու մէջ ինչո՞ւ պահուրջիս  
Ու հրպարս ծաղկանց կարգէն կը փախչիս :

Բայց չքննա՞յ ծաղիկ , երբ կը փաղեկ փեղ ,  
Աւելի ակոյճ բունմունկ կ'արձակես ,  
Քան շատ ծաղիկներ որով պրճնըրիկ  
Ճոխ արդուգարդով փայլուն , քանկազիկ :

Եւ հաւեւսութեան դու պահերն իսկ ես ,  
Անոր պէս միկնակ սարիչ կը սիրես ,  
Ու երբ արժանիքի ի վեր կը հանկէն ,  
« Շնորհակալ եմ » մընջես հեգօրէն :

Գ. Յ. Վ. Ա. ՅԱ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը

Անգամ մը երկու վաճառականներ որոնք միասին  
կը ճամբորդէին , պանդոկ մը հասան՝ ուր մէկ հողինոց  
սենեակ մը միայն պարսպ մնացած էր :

Օղը շատ ցուրտ էր և գիշերն ալ վրայ հասած ,

այնպէս որ երկուքն ալ չէին կրնար ուրիշ տեղ մը օթե-  
ւան մը ճարել :

Վաճառականներէն մէկը շատ չքեղ հագուստներ  
հագած էր : Մատուրներէն մեծագոյն մասը ոսկի մատա-  
նիներ կը կրէին , արհամարհանքով կը խօսէր ամէնուն  
հետ , և առիթ կը փնտռէր որպէս զի իր մեծ մարդու  
ձեւերով ուրիշները նուաստացնէ :

Միւսը՝ շատ պարզօրէն հագուած , խոնարհ ու սա-  
կաւախօս մարդ մըն էր : Մեծ քաղցրութեամբ կը վար-  
ուէր ամէնուն հետ , և բնաւ ուրիշներուն արժանա-  
պատուութիւնը չէր վիրաւորէր :

Երբ պանդոկին սպասաւորը իրենց ըսաւ թէ մէկ  
հողինոց սենեակ մը միայն կայ , սնափառ վաճառականը  
մտածեց ինքնիրեն .

— Իրաւ է որ երկուքս ալ միեւնոյն ատենը հա-  
սանք , բայց անշուշտ սենեակը սա խեղճ , գլուխը կախ  
ընկերիս չպիտի տան , այլ ինձի :

Եւ իսկոյն սպասաւորին հրամայեց որ պայուսակը  
այդ սենեակը տանի :

Սպասաւորը սակայն վարանեցաւ :

— Ինչո՞ւ կեցեր ես , չի հաղանդի՞ս , ըսաւ սնա-  
փառը դայրացած :

— Ներեցէք , Տէ՛ր , պատասխանեց սպասաւորը , եր-  
կուքդ ալ միեւնոյն ատեն հասաք մեր պանդոկը , ու-  
րեմն երկուքդ ալ իրաւունք ունիք այդ սենեակը բնա-  
կելու , բայց սենեակը միայն մէկ հողի կրնայ առնել , և  
ես , առանց վարպետին խորհուրդ հարցնելու , չեմ կրնար  
ըսել թէ ձեզմէ ո՞վ պիտի պառկի հնն :

— Գնա հարցո՛ւր , ըսաւ սնափառը , վստահ՝ թէ  
պանդոկպետն ալ սենեակը իրեն տալ պիտի ուզէր :

\* \* \*

Սպասաւորը զնաց արթնցուց պանդոկապետը, և խնդիրը հասկցուց անոր :

— Ի՞նչ տեսակ մարդիկ են, հարցուց պանդոկապետը :

— Երկուքն ալ հարուստ կ'երեւան, բայց մէկը փրոջ պէս կը հրամայէ, կը պուռայ, կը կանչէ :

— Իսկ մի՞ւսը :

— Չայնը անգամ չի հաներ, պէտք է պուռացողին տալ սենեակը, արդէն աւելի հարուստը ան կ'երեւայ :

Պանդոկապետը քիչ մը ատեն մտածեց և ըսաւ .

— Կը սխալիս, հաւատա որ կը սխալիս. երբոր պարապ տակաւի մը զարնես, ի՞նչ կ'ըլլայ :

— Ահադին աղմուկ կը հանէ :

— Եւ երբ տակաւը լեցո՞ւն ըլլայ :

— Գրեթէ բնաւ ձայն չի հաներ :

— Կը տեսնե՞ս որ ամէնէն աւելի պուռացողները, ձայն հանողները չեն որ ամէնէն աւելի արժէք կ'ունենան : Դուն զնա սենեակը քիչ խօսողին տուր, և պուռացող կանչողն ալ, եթէ ուզէ, բակին մէկ անկիւնը պառկեցուր :

Մնախաւոր երբ այս որոշումը լսեց, շատ կատողեցաւ, բայց ստիպուեցաւ բակը պառկիլ, որովհետեւ գիշերանց չէր կրնար ձամբան շարունակել :

Պանդոկապետը, յաջորդ առտուն համողուեցաւ որ սխալ չէր իր գուշակութիւնը : Խոնարհ երեւոյթով հաջնատ վաճառականը որ մնախաւէն հարիւր անգամ աւելի հարուստ էր, առատապէս վարձատրեց զինքը :



## 8. ԲԱՂԱԲԱՎԱՐՈՒԹԻՒՆ

### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Գ Ե Ր

— Անհաղափար մարդը որչա՛փ ալ խելք, արժանիք եւ առաքինութիւն ունենայ, միշտ անհանելի պիտի երեւի :

(ՏԻԿԻՆ ՏԸ ՄԷՆԹԸՆՈՆ)

— Քաղաքավարութիւնը վեհանձն միջի մը եւ ազնիւ բնաւորութեան մը պրօսուցն է :

(ԷՄԸՐՍԸՆ)

— Խօսակցութեան մը միջոցին անձի մը արժանապատւութիւնը վիրաւորելը անհաղափարութեան ամէնէն մեծ ապացոյցներէն մէկն է :

(ՍՈՒԻՏԹ)

— Քաղաքավարութեան գլխաւոր պայմանը համեմատութիւնն է : Այս պատճառով՝ քաղաքավար մարդիկ երբէք իրենց անձը բաղդատութեան դեղով չեն նշուսացներ իրենց նմանները :

(ՏԻԿԻՆ ՏԸ ԼԱՄՊԷՆ)

### Գ Ե Ղ Զ Ո Ւ Կ Շ Ա Ի Ա Ր Շ Է

Դրամատէր Սէլիմեան՝ քաղքին ամէնէն հարուստ մարդոցմէն մէկն է : Իր տունը շատ մեծ ձոխութեամբ կահաւորուած է, ունի բազմաթիւ սպասաւորներ, և կը յարգուի ամէն մարդու կողմէ :

Չեզի պատմեմ թէ ի՞նչ բան պատճառ եղած է իր այդ վայլուն և նախանձելի դիրքին :



Շատ տարիներ առաջ, մեծահարուստ մարդ մը՝ ճամբորդած միջոցին համեստ գիւղ մը կը մտնէ, և որովհետեւ ճամբան չէր գիտեր, կը հարցնէ քանի մը գեղջուկ տղոց որոնք հրապարակին վրայ կը խաղային:

Տղոցմէն մէկը, Շաւարշ, որ շատ լաւ բնաւորութիւն մը ունէր, հարուստին հարցումներուն կը պատասխանէ կատարեալ յարգանքով:

— Մինակնիդ չէք կրնար գտնել ճամբան, կ'ըսէ, որովհետեւ շատ մը անցքեր կան ձեր առջեւ և անպատճառ կը մոլորիք, ևս կ'առաջնորդեմ ձեզ:

Հարուստ մարդը սիրով կ'ընդունի Շաւարշի առաջարկը և երկուքը մէկ ճամբայ կ'եկնեն:

Քալած ատեննին՝ մարդը աչքը չի գտեր իր առաջնորդէն: Համեստ բայց մաքուր հազուստներով տղայ մըն է, շատ վայելուչ քալուածքով, և վերջին ծայր քաղաքավար: Միշտ կը փութայ պատասխանել իրեն ուղղուած հարցումներուն, աւելորդ խօսքեր չընէր, ոչ ալ յիմարի պէս կը ցատկուտէ ճամբուն երկայնքը:

Հարուստ մարդը կը համակրի իսկոյն, և կը հարցնէ անոր.

— Հայրդ ի՞նչ գործ կ'ընէ այս գիւղին մէջ:

— Մշակ է, կը պատասխանէ Շաւարշ:

— Դպրոց կ'երթա՞ս:

— Ո՛չ, գիւղին մէջ դպրոց չիկայ, հօրս հետ կ'աշխատիմ:

— Կ'ուզե՞ս կարդալ սորվիլ:

— Այո՛, բայց դպրոց չունինք:

Երբ շիտակ ճամբան կը հասնին.

— Վերադարձիս կրկին ձեր գիւղէն պիտի անցնիմ, կ'ըսէ անձանօթը, և պիտի խօսիմ հօրդ հետ, եթէ հա-

ւանի, քեզ մէկտեղ քաղաք կը տանիմ և դպրոց կը դնեմ:

Անձանօթ մարդը խօսքը կը բռնէ, և Շաւարշը առնելով քաղաք կը տանի և դպրոց կը դնէ: Շաւարշ կ'աշխատի անընդհատ, և երբ դպրոցէն կ'եկէ լաւ վկայականով մը, հարուստ մարդը զինքը վերակացու կը կարգէ իր գործերուն:

Այսօր, այդ մարդը մեռած է, և ուրիշ ժառանգորդ չունենալուն համար, ամբողջ հարստութիւնը թողած է Շաւարշի:

Դրամատէր Սէլիմեանը ահա՛ այդ գեղջուկ Շաւարշն է, և արդի վիճակն ալ ուրիշ բանի չի պարտիր՝ եթէ ոչ իր քաղաքավարութեան:

Հ Ե Ր Մ Ի Ն Է

Կանուխ կ'երբայ վարժարան.

Մաքուր հագուած, ժիր, ժպտուն.

Աղջիկ մըն է

Հերմիկէ,

Քաղաքավար ու բարի,

Տեսնողն անոր կը յարի:

Դատերէն ետ չի մնար.

Մեծերուն քով հեզ խոնարհ

Աղջիկ մըն է

Հերմիկէ,

Եւ ըզգաս ու խերացի  
Չի շուիր ճայնն իր շացի :

Օսարներու հիւրի ֆոյ  
Մօտեցող միշտ յարգանքով  
Աղջիկ մըն է  
Հերմիկէ,

Նիս ու կացն ալ անբասիր,  
Շաս չի խնդար ու խօսիր :

Իր քաղիկն մէջ՝ մէկ հասիկ  
Բարեհամբոյր, համեսիկ  
Աղջիկ մըն է  
Հերմիկէ,

Իրենց զակիկն շարունակ  
Չայն սան մայրերն օրինակ :

Ո՛չ ֆէն ունի, ո՛չ նախանձ,  
Գորովասիրտ յախագանց  
Աղջիկ մըն է  
Հերմիկէ,

Վիշնն երբ տեսնէ քրջուտոյին  
Իր աջերը կը վառի՛ն . . . :

Կոյրիկն, կաղիկն՝ օգնական,  
Ազնիւ, անոյշ, պատուական

Աղջիկ մըն է  
Հերմիկէ

Չոր Արարիչ Հայրն Աստուած  
Հօրն ու մօրն է պարգեւած :

Տրդա՛ք, սուանց վարանման  
Կ՛րսեմ՝ Տիպար, անկրման  
Աղջիկ մըն է  
Հերմիկէ .

Պէ՛տք է ջանաք ամէն օր  
Նրման ըրալ ճիշդ անոր :

Ա.Լ.ՓԱՍԼԱՆ

Բառերու նշանակութիւնը. — Յարի՛ միանալ :  
Չգաս՝ սպարկեշտ : Անբասիր՝ անմեղադրելի : Բարեհամ-  
բոյր՝ սիրուն, աղէկ բնաւորութիւն ունեցող :

Մ Ա Ռ Ն Ո Ի Ա Ղ Ջ Ի Կ Ը

Ա.

Անտառին եղերքը բարձրացող հսկայ ծառը նոր  
զարդարուած էր կանանչ տերեւներով : Արդէն իսկ քըն-  
քուշ կոկոններ բացուած էին անոնց մէջ, և ծառը  
կուռճանար, դարման չունչովն ու ցօղով :

Թռչունները ուրախ դուարթ կ'երգէին ծառին շուրջը :  
Բայց ա՛հա յանկարծ, սառնամանիքը եկաւ և ըսաւ  
ծառին .

— Ինձի՛ տուր այդ կոկոններդ, ապա թէ՛ ոչ բռնի  
կ'առնեմ քեզմէ :

— Մե՛ղք են , մե՛ղք , մրմնջեց ծառը , թող որ գոնէ  
ծաղիկ բացուին :

Սառնամանիքը հեռացաւ դժգոհ :

Բ.

Օրեր անցան և կոկոնները գեղեցիկ ծաղիկներու  
փոխուեցան արեւին ոսկի ճառագայթներուն տակ :

Թռչունները ուրախ զուարթ կ'երգէին ծառին շուրջը :

Բայց ահա յանկարծ չար հովը եկաւ և ըսաւ ծառին .

— Ինձի՛ տուր այդ ծաղիկներդ , ապա թէ ոչ բռնի  
կ'առնեմ քեզմէ :

— Մե՛ղք են , մե՛ղք , մրմնջեց ծառը , թող որ գո-  
նէ պտուղ տան :

Չար քամին հեռացաւ դժգոհ :

Գ.

Օրեր անցան և ծաղիկները համեղ պտուղներու  
փոխուեցան ամառուան կեկասառ ջերմութեամբ :

Թռչունները ուրախ զուարթ կ'երգէին ծառին շուրջը :

Առտու մը , գեղանի աղջիկ մը եկաւ ծառին տակ  
և ըսաւ անոր .

— Ա՛խ , ի՛նչ աղուոր պտուղներ , ինձի տուր դա-  
նոնք , ես բռնի չեմ առներ :

— Ա՛ռ , ա՛ռ , նազելի աղջիկ , անոնք քեզի կը  
սպասեն , ըսաւ ծառը , ա՛ռ քանի որ այդչափ անոյշ է  
լեղուդ :

Եւ ծառը՝ ճիւղերը խոնարհեցուց :

Աղջիկը՝ գոհ՝ մեկնեցաւ :

**ՊԻՐՐԵՍԱՆ**

Բառերու նշանակութիւնը . — Կեկասառ՝ կեանք  
տուող :

## 9. ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Բ

— Ս. առջուրիւնը մարդկային կեան-  
քին ամենէն մեծ բարիքն է . բայց մա-  
քուր ըլլալ պէտք է այդ բարիքը վայելե-  
լու համար : (ՅՐԱՆՔԼԻՆ)

— Ս. առջուրիւնը բարիք մըն է գոր-  
տելի խնասուցները կը վայելեն քան  
քէ գորտուրները : (ՏՐ. ՏԻՒՆ)

— Մաքրութիւնը սիրող մարդիկ միշտ  
բարի վարք մը կ'ունենան : (ՏԿՆ. ՏԸ ՍԹԱԼ)

— Մարդիկ միշտ հիւանդութեան մը  
ենթարկուելէ վերջ իրենց առաջութեան  
նկատմամբ զգոյց կը դառնան : Պէտք է  
սակայն առաջաւրնէ զգոյց կենալ :  
(ՅՕՆՍԿՐԻԿ)

Բ Ժ Ի Շ Կ Ի Ն Խ Ր Ա Տ Ն Ե Բ Ը

Տօքթօր Սխմոնի զուակը՝ իր ընկերներէն երեքը  
իրենց պարտէզը հրաւիրած էր զբօսնելու :

Չորս աղաքը քիչ մը ատեն մարմնամարդ ընելէ և  
երկար ժամանակ ալ վազել վազվզելէ յետոյ , բոլորո-  
վին քրտնեցան և պարտէզին ամէնէն հովասուն վայրը  
դացին հանգստանալու համար :

Բարերազդաբար բժիշկը հոն էր :

— Ի՞նչ կ'ընէք, պոռաց, այդ ի՞նչ անդգուշութիւն է, չէ՞ք գիտեր որ այդպէս քրտնած վիճակի մէջ հովը կրնայ դպչիլ ձեզի և նոյն իսկ մահացու հիւանդութեան մը պատճառ դառնալ: Գայէք քառորդ ժամ մը հանդարտ նստեցէք արեւին տակ, որպէս զի քրտինքնիդ չորնայ, անկէ ետքը ո՛րչափ կ'ուզէք կեցէք հովին առջև:

Տղաքը իսկոյն հնազանդեցան:

\* \* \*

Երբ քառորդ ժամը լրացաւ, բժիշկը զանոնք իր քովը կանչեց և ըսաւ. — «Կը յուսամ որ չպիտի մոռնաք այս դասը, տաքէն անմիջապէս ետքը երբէք պաղի մի ենթարկէք ձեր մարմինը:

Յետոյ աւելցուց.

— Քանի որ հիմա առիթը եկաւ, քիչ մը քննեմ ձեզ, տեսնեմ որչափ հոգ կը տանիք ձեր առողջութեան:

Տղաքը անձկութեամբ իրարու նայեցան:

— Օ՛հ, այդչափ մի՛ վախնաք, ըսաւ Տօքթօրը, դժուար բան մը չէ, դո՛ւն, Յակոբ, շիտակ կեցիր նայիմ:

— Ահաւասիկ, Պարո՛ն:

— Քիչ մը աւելի շիտակ. քիչ մըն ալ . . . :

— Բայց չեմ կրնար:

— Կը տեսնե՞ս, բարեկամս, չես կրնար շիտակ կենալ, արդէն կոնակիդ ծռած է, և ուսերէդ մէկը միւսէն աւելի բարձր է. եթէ այսպէս շարունակէ քսան տարեկան եղած ժամանակդ կուզի պէս ծռած պիտի ըլլայ մարմինդ:

— Բայց յանցանքը ի՞մա է:

— Ի՞նչպէս քուկդ չէ, դպրոցին մէջ շատ կը ծռիս տեսարակներուդ և գիրքերուդ վրայ, գրած միջոցիդ ձախ

թեւեռ պէտք եղածէն աւելի կը տարածես գրասեղանին վրայ, վերջապէս շատ գէշ դիրքով մը կը նստիս: Եթէ այդպէս շարունակես, ո՛չ թէ միայն մարմինդ իր բարեկեցութիւնը պիտի կորսնցնէ, այլ առողջութիւնդ ալ պիտի վտանգուի:

— Դասատունիս ալ այսպէս կ'ըսէ յաճախ, աւելցուց Յակոբ, բայց . . . :

— Բայց զինքը մտիկ չէ՞ք ըներ և դէ՛ռ կ'ընէք, ըսաւ բժիշկը:

\* \* \*

Յետոյ դարձաւ Ռուբէնին.

— Եկո՛ւր նայիմ, դաւակա, սա լրագիրը առ և քիչ մը բան կարդա ինձի:

Ռուբէն կարդաց:

— Աղէկ կարդացիր, ըսաւ բժիշկը, բայց տեսայ որ կարդացած ատենդ շատ կը տանջուիս, և գիրքը տեսնելու համար կը սախալուիս լրագիրը աչքերուդ քսել:

— Որովհետեւ կարճատես եմ, հեռուն չեմ տեսներ:

— Գիտեմ որ այդպէս է, բայց խնդիրը հոն է որ քու այդ տկարութիւնդ երթալով կը ծանրացնես, տան մէջ, ցորեկ ատեն, միշտ մութ խուցի մը մէջ կ'աշխատիս, մինչդեռ աշխատելու համար բոլորովին լուսաւորուած տեղ մը պէտք է ընտրես: Եւ յետոյ, ինքզինքդ չես վարժեցներ առարկաները կարելի եղածին չափ հեռուէն տեսնելու: Փոխանակ աչքերդ անոնց մօտեցնելու, աշխատէ որ նայուածքդ անոնց հասցնես: Այսպէս շարունակ վարժութիւն ընելով, կրնաս յաղթել այդ տկարութեան և քու ընկերներուդ պէս տեսնել:

\* \* \*

Տօքթօր Սիմոն երրորդ աղուն դարձաւ .

— Եկո՛ւր նայիմ, Միհրան, քիչ մըն ալ քեզ քննենք :  
Միհրան յառաջացաւ, բայց կարծես թէ յանցաւոր  
մըն էր, և մատուղները ծածկած էր ափերուն մէջ :

— Բայց նայիմ ձեռքերդ, ըսաւ բժիշկը :

Միհրան բացաւ ձեռքերը :

— Այդ աղտոտ եղունգներուդ համար կը խոնէիր,   
դաւակս : Կաւ, ամօթի զգացումը ունենալը աղէկ բան  
մըն է, բայց ինչո՞ւ զգաս, ինչո՞ւ ամօթով մտաս : Կը  
տեսնես որ աղտոտ ըլլալը ի՞նչ գէշ բան է : Երանի՛ թէ  
միայն աստուք ըլլար . անմաքրութիւնը հիւանդութիւն-  
ներ ալ յառաջ կը բերէ և շատ անգամ մահուան պատ-  
ճառ կ'ըլլայ : Այդ եղունգներուդ մէջ ամէն տեսակ աղ-  
տոտութիւն կայ : Կրնայ ըլլալ որ անոնցմով մարմինդ  
քերես և վէրքեր բացուին : Անանկ վէրքեր կան որ  
շատ ուշ կ'անցնին և ուրիշ հիւանդութիւններու պատ-  
ճառ կ'ըլլան :

Երեք տղաքն ալ լսիկ մնջիկ մաիկ ըրած էին բժիշ-  
կին խօսքերը :

— Գացէ՛ք, ըսաւ Տօքթօրը անոնց, գացէ՛ք խա-  
ղացէ՛ք նորէն, բայց մի՛ մոռնաք տուած խորհուրդներս :

Տղաքը խոտոացան գործադրել իր պատուէրները,  
և շնորհակալութիւն յայտնելով հեռացան :



Մ Ա Ք Ր Ո Ւ Ա Մ Ա Ր Տ Ը

Երկու մարդիկ երբեմն հարուստ,

Կեղով յանկարծ զէն ու կորուստ

Եղած էին գրեթէ աղփաս :

« Ի՞նչ պէտք ընել բաղդէն գանգաս »

Ըսին իրարու. « Երկուքս ալ արեւ ունինք փոյլէ

փոյլ,

« Եկո՛ւր հողագործ ըլլանք, մրշակենք զանոնք

մեր ձեռքով,

Հասնին բերքերն, ու աւնան

Մեր քրտակները լեցան . . . : »

Առին ցորեն, հունց, գարի

Եզներ, մանգաղ ու արօր . . .

Մին խելացի, հողերն արտին մաքրեց բոլոր,

Զի թողուց կտոր մ'իսկ փարի . . .

Մինչ միւսն՝ անմիտ, հազիւ հերկեց հողն ան-

խրնամ .

Ըսաւ. « Ինչ պէտք պիտ ունենամ . . .

Ես մաքրութեան արտաստի . . .

Արեւն ու անձրեւ, լաւ օդերն են որ

Պիտի հունձներն արեւուն ընեն նրազ կամ

առաս . . .

— Ու ցանեցին երկուքն ալ : Օդերն աղուոր

եղան շատ,



### 10. ԶԲՕՍԱՆՔ ԵՒ ՀԱՆԳԻՍ

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Բ Ե Ր

— Մարդկային մարմնին համար հացին չափ անհրաժեշտ է կանոնաւոր կանգիսքը:

\*\*\*

— Երկարատեւ գրօսանքը գրօսանք ըլլալէ կը դադրի: (ՎՕԼԹԷՌ)

— Մարդ պէտք է այնպէս գրօսու՝ որ գրօսանքը բան մը սորվեցնէ իրեն, եւ կամ օգուտ մը ունենայ իր առողջութեան: Զրօսանքի ժամանակը այս կերպով գործածելը ամէնէն խելացի խնայողութիւններէն մէկն է. (ՊԷՌԱՐ)

#### ԶԲՕՍԱՆՔ ԵՒ ՀԱՆԳԻՍ

Զրօսանքն ու հանգիստը մարդու համար այնչափ անհրաժեշտ բաներ են, որչափ անհրաժեշտ է սնունդը: Բայց ինչպէս ամէն բանի մէջ, անոնց մէջ ալ միշտ չափաւորութիւն պէտք է:

Շատ ուտող մը իսկոյն ստամոքսի անհանգստութիւն կ'ունենայ եւ իր շատակերութեան պարաճառատ առողջութիւնը վրայ կուտայ: Զրօսողն ալ, եթէ առողջապահութեան պայմանները չի յարգէ, բնականաբար հիւանդ կ'ըլլայ եւ ինքն ալ կրնայ կեանքը վրայ տալ: Եւ կամ, եթէ շատ հանգիստ ընէ, մոռնայ աշխատու-

թեան համարը, չուտով ծուլութեան կը վարժուի, ինչ որ ոչ նուազ դէշ հեռեւանքներ կրնայ ունենալ:

Մարդկային մարմինն ալ տեսակ մը մեքենայ է, ատեն ատեն պէտք է յոգնութիւն առնէ, որպէս զի չի մաշի: Շարունակ գործածուող մեքենայ մը միշտ չուտ անդործածելի կը դառնայ, չարաչար եւ անընդհատ աշխատութեան դատապարտուած մարմիններն ալ կանուխէն կը սպառին:

Բայց եթէ մեքենան երկար ատեն յոգնութիւն առնէ, մըր ժանգոտի եւ բանի մը չի ծառայեր, մարմինն ալ եթէ երկար ժամանակ հանգիստ ընելով ծուլութեան վարժուի, ա՛լ գործի չգար:

Պէտք է զրօսուել, պէտք է հանգիստ ընել, բայց առանց աշխատութեան ժամանակը մոռնալու: Զրօսանքն ու հանգիստը աշխատող մարմնի մը համար բարիքներ են, բայց ծոյլ մարմնի մը համար կրնան չարիքներ դառնալ:

Եւ արդէն, մարդ աշխատելէն, յոգնելէն ետքն է որ զրօսանքին ու հանգիստին անուշութիւնը կը զգայ: Որպէս զի հաճոյք զգանք ո՛ր եւ է բանէ մը, պէտք է յոգնինք անոր համար:

#### Գ Ե Ղ Ա Մ Ի Մ Ա Ղ Մ Ա Ն Կ Ո Ւ Փ Ի Ի Ն

Սառսուռով լի են մեր սիրտերն համակ, Մեր այգերուն մէջ կը շողայ հրբուսանք, Թըռչուններուն պէս՝ անհառաբընակ Օդով ու խինդով կը զուարբանանք: Զինչ երկինքին Տակ ու արեգակին,

Ուր երջանկութիւնն խայսայ ցրնծագին,  
Մենք կը նրոուողենք անհոգ ու անվախ. —  
Ժրպսուն մանկութիւնն ենք յարածիծաղ:

Մեր բարձր հասակը, գարնն ծաղկաւէտ,  
Կը բանայ փափուկ բաժակներ արդէն,  
Որոնց գոյները՝ շողուն, խայսաբղէտ,  
Իրենց հեճանքով մեզ կ'արբեցրնեն:  
Ճառագայթներովն ոսկեփայլ այգուն  
Մեր հոգին կ'առնէ բոխչն իր բարձրագոյն,  
Ու կը թրթրուայ յայտով մ'անսուաղ. —  
Ժրպսուն մանկութիւնն ենք մեճածիծաղ:

Ապագայ կեանքի ցոլովն անարգել  
Կը կայսռենք զըւարթ, խարտաւ ու աղուոր,  
Եւ ո՛չ մէկ ըստուեր կուգայ մըրբագնել  
Ըզմեզ ողողող ծրփանքն հեճօրօր:  
Կը տօնենք կեանքի քայլերն առաջին,  
Կը պուրկան վստահ մեր ձայներն ուժգին,  
Եւ մեր նայուածքներ՝ ջինջ, անշարժանդայ.  
Ժրպսուն մանկութիւնն ենք գեղածիծաղ:

Թարգմ. Ն. ԹՈՐՈՍԵԱՆ

Ե. ԳՈՒՐՏԻՍԵԼ

Բառերու նշանակութիւնը. — Յարածիծաղ՝ միշտ  
ծիծաղող: Խայսաբղէտ՝ պուտ պուտ բիծեր ունեցող:  
Մրբագնել՝ պղտորել: Անշարժանդայ՝ առանց մշուշի:

Ս Ո Ն Ա Կ Ի Ն Ե Ր Գ Ը

Ժամանակն էր: Եթէ քանի մը օր ալ ուշանայի օ-  
այս տարի չպիտի կրնայի մտիկ ընել սոխակին երգելը:  
Յունիսի առաջին օրերուն, երբոր իր ձագուկները  
կը ծնին, սոխակը ձայնը կը կորսնցնէ: Կը փափաքէի-  
ժամ առաջ գեղը ըլլալ, դռնէ նուագահանդէսին վեր-  
ջին մասը չփախցնելու համար:

Սոխակին երածչտութեան չափ հեշտալի երածչտու-  
թիւն չիկայ: Ու դայն վայելելու համար մարդ չը ստիպ-  
ուիր սենեակի մը մէջ բանտարկուելու:

Վերջապէս է: Պայծառ երկինքին մէջ առաջին ցոլ-  
քերը կը սլալան: Երկրի վրայ ամէն բան կը ստուերտի:  
Ծաղիկները միայն սեւ կանանչութեան մէջ կենդանի  
փայլ մը, որոշ գծագրութիւն մը ունին: Իրիկուան մեղմ  
հողը կ'առնէ կը տանի վարդերուն շունչը:

Իրարու ետեւէ՝ թռչունները կը լռեն: Մեծ եղելի-  
նի մը ծայրէն տատրակը անգամ մըն ալ կը մնչէ: Կեռնե-  
լսի մը արի սուլումը, սարեակի մը ուրախ ճլուրլիւնը  
յանկարծ կը մարին: Օդը կը զովանայ: Աւելի մութ  
երկնակամարին մէջ, մոլորակները աղամանդի շողեր  
կ'արձակեն:

Ան առնն, գիշերին մէջ որ վերջապէս եկած է,  
այդ լռութեան, զովութեան ու բոյրերուն մէջ, միս-  
մինակ սոխակը կը սկսի երգել իր բոյնին փառքին  
համար:

Երկարօրէն արձակուած խաղեր են նախ, գողտրիկ  
ու քախմալից միանգամայն: Իրարու կը յաջորդեն, իրա-  
քու կը միանան, առանց իրարու խառնուելու: Յետոյ  
յանկարծ, կարծես գինովութենէ բռնուած, կոկորդալի-



կ'երգէ վայրի անտառին երգիչը, զարնան գիշերներու վսեմ երաժիշտը: Կ'երգէ արծակի օղին մէջ, և ոչ մէկ քան կը հաւասարի իր հրաշալի դեղգեղներուն զօրութեան:


Անցեալ իրիկուն իրօք գերազանցեց ինքզինքը: Կարծես թէ բոլոր բնութիւնը հմայուած էր իրմով: Մեծ ծառերու անշարժութիւնը ուշադիր կ'երեւար, և երկինքին խոշորցող աստղերը կարծես իրարու կը մօտենային աւելի լաւ լսելու համար:

Գիտէ՞ք այն սիրուն հէքեաթը որ կը պատմէ թէ վանական մը հարիւր տարի կաղնիի մը տակ նստած մնաց սոխակի մը երգը մոխի ընելով: Անցեալ իրիկուն՝ առասպելական վանականին զգայութիւնները կրեցի: Շնորհակալ եմ, թռչնակ, քեզի կը պարտիմ հաճոյալի վայրկեան մը:

Երգէ՛, սոխակ, երգէ՛, զինովցուր զիս երաժշտութեամբ: Յիշեցո՛ւր ինձի թէ մարդկութեան մէջ ամէնքն ալ, քեզի պէս, զոնէ մէկ քանի մայիսի ամիս ճանչցած են սիրելու ուրախութիւնը, բոյնին տաքութիւնը:


**ՃՐԱՆՍՈՒՄ ՔՈՐԷ**

Բառերու նշանակութիւնը. — Թրախձալից՝ ախուր: Կոկորդալիս՝ լեցուն բերնով:



**Դ. ՄԱՍ**

**ԻՆՉ ՊԷՏՔ ՉԷ ԸԼԼԱԼ**



**I. ԾՈՒԼՈՒԹԻՒՆ**

**Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Բ**

— Ծուլութիւնը մայրն է բոլոր ամօթալի մալութիւններու: (ՏԻԿԻՆ ՏԸ ԼԱՆՊԱԼ)

— Ծուլութիւնը այնքան դանդաղօրէն կը շարժի որ աղբասութիւնը շուտ կը միանայ անոր: (ՏՐԱՆՔԼԻՆ)

— Ծոյլերը միշտ շուտ բաներ ընելու փափաք ունին, բայց բան մըն ալ չեն ընել: (ՎՕՎԵՆԱՐԿ)

— Ծուլութիւնը անզգալարար կ'աչընցացնէ ամէն առաքինութիւն: (ԼԱՌՕՏՅՈՒՔՕ)

**Ս. ՊԵՏՐՈՍԻ ԿԵՌԱՍՆԵՐԸ**

Յիսուս՝ անգամ մը պղտիկ քաղաք մը կ'երթար իր Պետրոս աշակերտին հետ, երբ ճամբուն վրայ բան մը տեսաւ որ ձիու կոտորած պայտի մը կը նմանէր:

Իսկոյն Պետրոսին դարձաւ և ըսաւ .

— Վերցո՛ւր սա պայտը :

Պետրոս որ ծոյլ էր , և ուրիշ աւելի մեծ բաներու վրայ կը խորհէր , արհամարհոտ նայուածք մը նետեց պայտին վրայ :

— Ի՞նչ կ'արժէ այդ երկաթի կտորը , ըսաւ ինքնիրեն :

Եւ Յիսուսի խօսքը չլսելու դարկաւ :

Յիսուս ձայն չի հանեց և ինք ծռելով գետնէն վերցուց կտորած պայտը :

Երբոր քաղաք հասան , Յիսուս դարբինի մը ծախեց կտորած պայտը՝ երեք կտոր դրամի փոխարէն : Յետոյ , շուկայէն անցած ատեննին , այդ դրամներով գեղեցիկ կեռասներ գնեց , և , առանց Պետրոսի զգացնելու , վերարկուին թեւին մէջ պահեց զանոնք :

\* \* \*

Յիսուս քաղաքին մէջ չկեցաւ , և , միշտ Պետրոսը իրեն հետ ունենալով , սկսաւ յառաջանալ անքեր ու անջրդի դաշտերէ՝ որոնց մէջ ծառ մը , նոյն իսկ տունկ մը չէր տեսնուեր : Սոսկալի արեւ մը կար : Պետրոս ծարաւցաւ , բայց ո՛ւրիշ ջուր պիտի գտնէր :

Յիսուս որ առջեւէն կը քալէր և հասկցած էր Պետրոսի նեղուիլը , պահ մը կեռաս մը ձգեց գետին : Պետրոս որ անկէ առաջ կտորած պայտը առնելու համար չէր ուղած ծռիլ , կեռասը տեսնելուն պէս վրան նետուեցաւ , վերցուց ու կերաւ , շատ ախորժանամ ու կազդուրիչ գտնելով զայն :

Երբոր քիչ մըն ալ յառաջացան , Յիսուս ուրիշ կեռաս մըն ալ վար ձգեց : Պետրոս նորէն ծռեցաւ , առաւ կեռասը ու կերաւ :

Եւ այսպէս , Յիսուս շարունակ պարտաւորեց Պետրոսը որ

ըստ որ ծարաւը յագեցնելու համար ծռի և կեռաս ժողուէ գետնէն :

Վերջապէս , ետին դարձաւ , և ըսաւ ժպտելով .

— Պե՛տրոս , եթէ երբէք պայտը քեզի ցուցուցած ատենս ծուլութիւն չընէիր և զայն գետնէն վերցնէիր , չպիտի ստիպուէիր այսչափ անգամ ծռելու , ո՛վ որ պղտիկ բաները կ'արհամարհէ , ա՛լ աւելի պղտիկ բաներու համար կը պարտաւորուի յոգնիլ : **ԿԷՕԹԷ**

Բաւերու նշանակութիւնը . — Անքեր՝ անպատու :  
Աջրդի՝ չոր ու ցամաք :

Մ Ո Յ Լ Ը

Եթէ չգայ ձայն սալ իրեն  
Հոգածու մայրն իր բարի ,  
Անկողնին մէջ թուլօրէն՝  
Մինչեւ ցորեկ կ'երկարի :

Կամաց հագուի , պուս մը ջուր  
Հազիւ արսկէ դէմքին վրայ .  
Պատրասկներ գտնէ զուր  
Որ դանդաղի , երեայ . . . :

Եւ միտս դժգոհ ու մըռայլ  
Դպրոց կ'երթայ ան շատ ուտ ,  
Տրևսընալով ծանրաբայլ ,  
Կարծես ոտն է մըսեր փուտ :

Հոն , անհոգ ու անտարբեր ,  
Խօսուրոսուով շարունակ ,  
ձիգ , աշխատանք չի քափեր ,  
Կը վասնէ իր ժամանակ :

Իր ուսուցչին սասն ու չախ  
Բընաւ չեն ազդեր իրեն ,  
Պատիժ ալ սան՝ քիթը կախ  
Չի քաշուիր ընկերներէն :

Իսկ երբոր անոն կ'երգեն  
Կը վազվրգեն , խանդով ժիր ,  
Ինքն աշխոյժին ըրեր քէն ,  
Նստած տեղէն չի շարժիր :

Իրմէ մեծին ու փոքրին  
Քաւահրակն առարկայ ,  
Հակակրեղի , պաղ , ստորին  
Էսկ մը նէ անիկայ .

Էսկ մը , որ պարզապէս  
Աշխատութեան անյարմար ,  
Աշխարհ եկած է կարծես  
Ուտել , խմելու համար :

Եւ որ կ'ապրի *անգիտակ*  
Թէ՛ ժպտի բաղդն ա՛ն մարդուն

Որ կը գործէ , միտս շիտակ  
Կամփով , ջանփով եռանդուն :

Եւ որ կ'ապրի ու չի զգար  
Կեանքին ախորժն ու նաշակ ,  
Թէ անոր մէջ՝ ի՛նչ պայտար ,  
Ի՛նչ վայելք կան անուշակ :

Եւ անվրէպ , ո՛ւտ , կամ վաղ ,  
Ծոյլ մարդն , առանց անունի ,  
Թըրուառութեան մէջ , աւա՛ղ ,  
Տառապելով կը մեռնի . . . :

Ս. Ա. Փ. Ս. Ա. Ն.

Բառերու նշանակութիւնը . — Հոգածու՝ խնամք  
տանտղ : Պատրուակ՝ պատճառ : Քաւահրակն՝ արհամար-  
հանք : Հակակրեղի՝ չսիրուելիք : Անգիտակ՝ տգէտ :

ՉԱՐԱԳՈՐԾ ԹՈՎՄԱՍ

Թովմաս անուանի չարագործ մըն էր . գիւղին մէջ  
չկար մէկը որ անոր մասին լաւ վկայութիւն տար : Ընդ-  
հակառակը , ամէն մարդ կը խորշէր անկէ , ո՛չ ոք իր  
տունէն ներս կը մտցնէր զայն :

Օր մը , գողութեան համար օձիքը ձեռք տուաւ :  
Ոստիկաններ բռնեցին զինքը և թեւերը ետին կապած  
տարին բանտ նետեցին :

Գիւղին տղաքը կը գիտէին անոր ամօթահար երեւոյթը և իրարու կը ցուցնէին դայն, ըսելով՝

— Գիտե՞ս, Թովմաս նորէն գողութիւն ըրաւ, բանս պիտի երթայ :

Ծերունի մը, որ անոնց մօտը կը գտնուէր, դարձաւ և ըսաւ .

— Տղաքս, այս անպիտան Թովմասին օրինակը թող ձեզի լաւ խրատ մը ըլլայ : Տեսէ՛ք գինքը, որչա՛փ կը խսկի գեղին մէջէն այսպէս անցնելուն համար : Իրեն համար աւելի լաւ պիտի ըլլար գեանին տակ անցնիլ, քան թէ ամօթահար բանտ առաջնորդուիլ : Գող մըն է, ամէնուն արհամարհանքին ու նախատինքին արժանի չարագործ մը : Ասիկա գիտէք անշուշտ, բայց չէք գիտեր թէ ինչո՛ւ գող մը եղաւ, անանկ չէ՞ :

— Ո՛չ, պատասխանեցին տղաքը :

Ծերունին շարունակեց .

— Է՛ս՛ւ, ձեզի պատմեմ թէ Թովմաս ի՛նչպէս գող մը եղաւ : Ինք պատուաւոր ծնողքի մը գաւակն էր, բայց շատ ծոյլ . դպրոցին մէջ չէր աշխատեր, դուրսը գործի երթալ չէր ուզեր : Մինչև իրիկուն ասդին անդին կը պտտէր անգործ, կ'ուտէր, կը խմէր, և անկէ անդին միայն քնանալու հոգ կը տանէր : Որչափ ատեն որ հայրն ու մայրը ողջ էին, այսպէս ապրեցաւ : Երբոր ծնողքը մեռան, երբ մնացած տունն ու պարտէզը ծախեց, որովհետև չէր աշխատեր, դրամ չէր շահեր, առած գումարը շուտ մը հատաւ և մնաց մէջտեղ : Ետեք իրեն խորհուրդ տուին որ աշխատի և ապրուստ մը ձարէ : Այո՛, պիտի աշխատիմ, կ'ըսէր, բայց անգամ մը ծուլութեան վարժուած էր, ծուլութիւնը հիւանդութիւն մը դարձած էր իրեն համար : Չէր կրնար աշխատիլ :

« Այդպէսով կամաց կամաց դէ՛ջ ճամբու մէջ ինկաւ : Նախ մուրալ սկսաւ, բայց որովհետև իրեն երես չէին տար, գողութեան ելաւ : Սկիզբէն հաւեր, պտուղ, վերջապէս մանր մունր բաներ կը գողնար ասոր անոր պարտէղէն : Ամէն մարդ գիտէր թէ ո՛վ է գողցողը, բայց կը մեղքնար և ձայն չէր հաներ : Թովմաս սակայն, աւելի առաջ տարաւ գողութիւնը : Սկսաւ դրամ գողնալ, արժէքաւոր առարկաներ գողնալ : Գողութիւնն ալ ծուլութեան պէս հիւանդութիւն մը դարձած էր իրեն համար . ալ ամէն չարագործութիւն կրնար ընել, առանց խղճահարութեան :

« Եկաւ ատեն մը՝ ուր մարդիկ սկսան բողոքել իրեն դէմ : Օր չէր անցնել որ նոր չարութիւն մը չընէր, գիւղին գլխուն փորձանք մը դարձած էր : Ի՞նչ եղաւ վերջը : Ահա տեսա՛ք թէ ինչպէս զինքը տարին բանտ նետեցին : Երբոր բանտէն ելլէ, ալ ամօթէն չպիտի կրնայ գիւղ դալ, պիտի ստիպուի ուրիշ գեղ երթալ, և շատ կարելի է որ ամբողջ կեանքին մէջ դժբաղդ ըլլայ :

« Տղաքս, խրատուեցէք իր օրինակէն, մի՛ մոռնաք որ իր բոլոր դժբաղդութեանց պատճառը ուրիշ բան չէր, եթէ ոչ ծուլութիւնը : Երբ պղտիկ տարիքէն հետեւէր իրեն տրուած խորհուրդներուն, և աշխատութիւնը սիրէր, անշուշտ այսօր այս խղճալի վիճակը չպիտի ունենար և բանս չպիտի նետուէր : »



## 2. ՉԱՐՈՒԹԻՒՆ

### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

— Պէտք չէ բնաւ չարի՛ք գործել, նոյն իսկ եթէ իրաւացի պահանաւներ ալ գոյութիւն ունենան: (ՏԵՐՏՈՒՂԻԱՆՈՍ)

— Չարագործ մը աւելի իր անձին կը վնասէ, քան թէ ուրիշներուն:

(Ս. ԹՈՎՄՍՍ ԱԳՈՒԻՆԱՅԻ)

— Պէտք է բարութեամբ յարեալ չարութեան: (ԱՄԻԷԼ)

— Չարութիւնը արմատ մըն է, որուն ճիւղերը մէյմէկ մոլորութիւն կը ներկայացնեն:

\*\*\*

### Հ Ա Յ Ի Ս Ն Տ ՈՒ Կ Ը

Մօրուին և հիւանդ Լիւքի կողմէ վճռատուելէ յետոյ, Տանիէլ՝ որ կազ էր՝ փողոց իջաւ, արցունքոտ աչքերը սրբելով:

Անօթութենէն կը մարէր, երկու օրէ ի վեր բան չէր կերած, հազիւ իր ցուպերուն վրայ կենալու չափ ուժը մնացած էր:

Տանիէլ կարծեց թէ սիրտի մեռնէր:

— Պէտք է որ մուրամ, ըսաւ, երթամ եկեղեցիին դրան առջեւ կենամ:

Եւ դէպի հոն ուղղուեցաւ:

Եկեղեցին բաց էր և խորանն ալ ճրագներով լուսազարդուած: Դուռնէն դուրս կ'ելլէր խուռնկի բարուժ մը, երգէտնի ձայնին խառնուած:

Յանկարծ, Տանիէլ զգաց որ աչուրները կրկին կը վեցուն արցունքով, և սկսաւ աղօթք ընել:

— Աստուած իմ, օգնէ ինձի, կը մրմնջէր:

Հետզհետէ մարդիկ ներս կը մտնէին, բայց Տանիէլ չի համարձակեցաւ ձեռքը երկարելու:

Նոյն պահուն իր խորթ մայրը եկեղեցի կը մտնէր, սեւ, չքեղ վերարկովի մը մէջ հնգկահառի պէս ուսած: Տանիէլ ըսաւ ինքնիքեն.

— Քանի որ մօրուս դուրս ելեր է, ես ալ տուն դառնամ:

Անօթութեան ցաւը այնքան սաստիկ էր, որ չը սպասեց. ցուպովը կը թռէր կարծես:

Ակնթարթի մը մէջ տուն հասաւ շնչասպառ ու դողդոջուն: Առանց աղմուկի վեր ելաւ, բանալին փնտուց պատին մէկ ծակին մէջ, դտաւ, բայց դուռը բանալէ առաջ ծակէն ներս նայեցաւ, Լիւք՝ ընացած կ'երևար:

— Եթէ կարենայի, մտածեց, հայրը առնել առանց զինքը արթնցնելու:

Անօթութիւնը քաջութիւն կուտար իրեն. դուռը բացաւ և ներս մտաւ ցուպերուն վրայ կըքած, առանց աչքերը անկողնէն հեռացնելու:

Հայի մտտուկին քովը հասնելուն՝ կաղը կեցաւ և Լիւքի նայեցաւ պահ մը. յետոյ, ծռելով ջանաց մտաուկին կախարիչը վերցնել, սակայն մտաուկը խուլ կ'ըլլար մը արձակեց:

\* \* \*

Լիւք չարժում մը ըրած էր, և աչքերը բանալով տեսած էր Տանիէլի ըրածը :

— Գո՛ղ աւաղակ, կը պոռար բոլոր ուժովը :

Բայց բարկութիւնը կը խեղդէր զինքը, և մինչդեռ Տանիէլ՝ անտուկին վրայ ծռած՝ հացի կտոր մը կը փնտրուէր դողացող ձեռքովը, Լիւք վար ցատկեց անկողնէն և գնաց անոր թեւէն բռնեց, որպէս զի արգիլէ :

— Գո՛ղ ես, գո՛ղ ես, կը պոռար խենթի մը պէս :

Եւ խենթի մը պէս ալ՝ անտուկին ծանր կափարիչը վերցնելով իջեցուց Տանիէլի գլխուն. խղճմասանքը անհետացած էր իրմէ, ամբողջ ուժովը կը կոխէր կափարիչին վրայ, իբր թէ Տանիէլի գլուխը կտրելու համար : Կափարիչը սկսաւ կռնչել Տանիէլի վիզին վրայ, միայն մէջ կը մտնէր, ջիզերը կը ճղմէր, այնքան որ վերջապէս Տանիէլ վար ինկաւ, անկենդան :

Այն ատեն, սղաննուած Տանիէլի առջեւ, դարհուրելի վախ մը ցնցեց Լիւքի հոգին :

Երկու երեք անգամ, յիմարի մը պէս դեղեւելով, սենեակին շրջանը ըրաւ, յետոյ, անկողնին վրայէն ծածկոյթները վերցուց, անոնցմով պատեց ինքզինքը՝ գլխէն մինչեւ ոտքերը, և մահճակալին տակը մտաւ :

Լուսթեան մէջ իր ակօսաները կը կճրտէին՝ ինչպէս խարտոցը կը կճրտի երկաթին վրայ :

(Թարգմ. ՏՕՄԻՆՅ)

Կ. Տ՝ԱՆՈՒՆՅԻՕ

Բառերու նշանակութիւնը. — Մօռն՝ խորթ մայր :

Չ Ա Ր Ի Ն Պ Ա Տ Ի Ժ Ը

Մէկ չարուկ չարասիրտ կիճ կ'աղօթէր առ Տէր, Որ դրացոյն կովը սասկի. սակայն կը սասկէր Ի՛ր կովը, ա՛լ ի՞նչ ընէր, Կուլար ու կ'աղաղակէր.

— « Այս ի՞նչ Ա.սսուած է, որ ծուռ մուռ այսփան Խօսք կը հասկնայ, զի աղօթքս էր այն՝ Որ անոր կովը, ո՛չ թէ իմինը Ուրէր ու սասկէր. — այս իմ սեւ բա՛ղդը » : Դուն մի՛ նեցեք վեր փար, Գըլխուդ կ'իջնէ դարվար :

Չ Ա Ր Ի Ն Պ Ա Տ Ի Ժ Ը

Ա Մ Ո Ւ Ե Ւ Կ Յ Ո Ր Ն Ե Ր Ը

Ածուխի կառք մը եկած կեցած է դռան մը առջեւ : Կիրակի առտու մըն է : Տանտէրը, գիշերնոց և մուշտակ հագած հաստափոր մարդ մը, դռանը առջեւ կեցած հրամաններ կուտայ ամխազործին, որ պարկերը կռնակը առած՝ կը պարպէ տանը մթերանոցին մէջ :

Յուրտերը սկսած են. աշունը լմնալու վրայ է : Ու տանտէրը գոհունակութեամբ կը դիտէ ամուխի պարկերը, որոնք հետզհետէ կ'երթան պարպուիլ մթերանոցին մէջ :

Կին մը կ'անցնի անկէ. աղայ մըն ալ քովէն կուգայ : Կինը քիչ մը հեռուն կը կենայ ու կը սկսի դիտել

ածուխի պարկերը : Աղքատիկ երեւոյթ մը ունի , մաշած սեւ զգեստներ հագած է : Աշուրներուն մէջ յայտնի կը կարողացուի թէ այդ պահուն ուրիշ ըղձանք չունի՝ հաս- պա իր տկար թեւերուն մէջ վերցնել այն պարկերէն մէկը և տանիլ հեռուն , մինչեւ իր տնակը : Բայց չէ , բան մը չի կրնար ընել : Թեւերը կախուած , հեռուէն կը դիտէ միայն անյագ աշուրներով :

Յանկարծ , իր քովը կեցող տղուն կը ծռի և անոր ականջն ի վար բան մը կը փախայ : Տղան՝ երթալով կը մօտենայ ածուխի կառքին , գրպանէն աղտոտ թաշ- կինակ մը կը հանէ , կը փռէ դայն , ու կը սկսի դետինը թափած ածուխի պմէնէն պղտիկ կտորները ժողուել և թաշկինակին մէջ դնել : Երբ մեծ կտորներու կը հանդի- պի , կ'առնէ զսանոք և կառքին մէջ կը նետէ :

Թաշկինակը լեցած է արդէն : Տղան՝ վեր կը վերցնէ դայն , չորս ծայրերէն բռնելով , և կը պատրաստուի եր- թալ , երբ տանտէրը՝ որ մինչեւ այն ատեն անձայն դի- տած էր տղուն շարժումները , սաստող ձայնով մը տղան քովը կը կանչէ .

— Հո՛ս եկուր ծօ :

Տղան՝ դողդողալով կը մօտենայ :

— Ծօ՛ անպիտան , մենք սա ածուխին փարա տուեր ենք , հասկցա՞ր :

Եւ ծրարը տղուն ձեռքէն առնելով , կ'երթայ կը պարպէ տանը մթերանոցին մէջ : Յետոյ , պարապ թաշ- կինակը կը բերէ և տղուն երեսին նետելով .

— Հայտէ , կ'ըսէ , ապտակ չի կերած ելի՛ր դնա սրկէ :

Տղան՝ աշուրները արցունքով լեցուն , մօրը քովը կ'երթայ , և երկուքը մէկ իրենց ճամբան կը շարունակեն , տղան՝ աւելի կարմրած , մայրը աւելի գունատ : Ծ .



### 3. ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Ն Խ Օ Ս Թ Ե Բ

— Ասախօսութիւնը մարդկային արժա- նապատութիւնը կ'ոչնչացնէ : (ՔՕՆԹ)

— Ասախօսութիւնը շատ կարճ համ- բայ մըն է , բայց անդուրդը անոր ծայրն է , այնպէս որ սսախօսը շատ կը գորի անոր մէջ : (ԱՄԻՕ)

— Մարդ անգամ մը որ սուս կը խօսի , ա՛յ մինչեւ վերջը սուս կը խօսի . որով- հետեւ միակ սսախօսութիւն մը ծածկե- լու համար պիտի սսիպուի ուրիշ հազար սուսեր ալ հնարել : (ՔՕՆԹ)

— Ասախօս մարդիկն են որ ամէնէն շատ երգում կ'ընեն : (ՔՕՆԵՅԼ)

#### Ճ Շ Մ Ա Ր Տ Ա Խ Օ Ս Ե Ո Ւ Ս Տ Ա Խ Օ Ս Ե

Ատենօք երկու վաճառականներ կային , մէկը միշտ ստախօսութեամբ կ'ապրէր և միւսն ալ ճշմարտախօսու- թեամբ : Այս պատճառաւ , առաջինը « ստախօս » կ'ան- ուանէին և երկրորդն ալ « ճշմարտախօս » :

Ստախօսը ճշմարտախօսէն շատ աւելի հարուստ էր : Օր մը ստախօսը ճշմարտախօսին հանդիպելով ըսաւ .

— Ըճշմարտախօս բարեկամ , չե՛ս կարծեր որ ստա- խօսութեամբ ապրիլը աւելի շահաբեր է :

— Չեմ կարծեր, պատասխանեց ճշմարտախօսը, իրաւ է որ ստախօսութեամբ մարդ աւելի շուտ իր նպատակին կը հասնի, բայց օր մը չէ օր մը կը զղջայ:

— Բայց մտածէ անգամ մը, ես որ ստախօսութեամբ կ'ապրիմ, քեզմէ տասնապատիկ աւելի հարուստ եմ: Որու կ'ուզես հարցուր թէ ո՞րն է լաւը, ստախօսութեամբ ապրիլը, թէ ճշմարտախօսութեամբ ապրիլը: Եթէ քեզի ըսեն թէ ճշմարտախօսութեամբ ապրիլն է լաւագոյնը, ան ատեն բոլոր ունեցածս քեզի կուտամ, հակառակ պարագային՝ դուն քու բոլոր ունեցածդ ինծի կուտաս:

— Ի՞նչ օգուտ ատկէ, առարկեց ճշմարտախօսը, շատ հաւանական է որ մարդիկ քեզի իրաւունք տան, գալով ինծի, ես հոգ չեմ ըներ թէ ուրիշներ ինչ կը մտածեն, որովհետեւ ճշմարտախօս ըլլալս ինծի երջանկութիւն կը համարեմ:

— Հաւատա՛ որ սխալ կը մտածես և թէ օր մը պիտի համոզուիս ըսածիս, յարեց ստախօսը:

Ճշմարտախօսը պատասխան չտուաւ:

\* \* \*

Ամբողջ երեսուն տարի ճշմարտախօսն ու ստախօսը իրար չի տեսնան: Օր մը, երբ արդէն իսկ ձերացած էին, բաշխել անանկ բերաւ որ իրարու հանդիպին:

— Որչա՛փ երկար ատեն կայ՝ որ իրար չենք տեսած, ըսաւ ստախօսը, շիտակը՝ ես յոյսս կտրած էի: Ի՞նչպէս ես նայինք, շատ դրամ չահեցա՞ր:

— Ո՛չ, պատասխանեց ճշմարտախօսը, բնաւ չչահեցայ, բայց դժգո՛ւ ալ չեմ, փառք Աստուծոյ, կ'ապրիմ առանց վիշտի, և եթէ ձերութեանս պատճառաւ չեմ

կրնար աշխատիլ, գոնէ բարի դաւակ մը ունիմ որ ամէն պէտքերուս կը հասնի:

— Ուրիշ դաւակ չունի՞ս:

— Ո՛չ, մէկ հատ մըն է:

— Ես, ըսաւ ստախօսը, շատ մը մանչեր և աղջիկներ ունիմ, բայց անոնցմէ ոչ մէկը ինծի կ'օգնէ: Նոյն իսկ չեն յարգեր զիս, թէեւ շատ խելացի են: Սիրտ չունին ամէնքն ալ: Ծռայլօրէն կը վատնեն հարստութիւնս և շնորհակալութիւն անգամ չեն յայտնուցնուց: Ա՛լ յուսահատած եմ, բանի մը չեմ խաւնուիր, և կը թողում որ ուղածնին ընեն:

Ճշմարտախօսը լռիկ մտիկ կ'ընէր:

— Ամէնքը աս չէ, շարունակեց ստախօսը: Հիմաջ նախկին բարեկամներս ալ, որոնք ինծի պէս վաճառականներ էին, ամէն միջոցներով կ'աշխատին զիս խաբել, աղգականներս անգամ չարունակ կը կուրին հետս, և դատ դատի վրայ կը բանան ինծի դէմ: Ա՛խ, ճշմարտախօս բարեկամ, ընդունէ որ ձերութեանս օրերը շատ ուրախ չեն անցնիր:

Այսպէս խօսեցան քիչ մը ատեն ալ, և իրարմէ բաժնուեցան վերջնականապէս:

— Խեղճ մարդ, մտածեց ճշմարտախօսը՝ երբ ստախօսէն կը բաժնուէր, ալ հիմա չպիտի ըսես թէ ստախօսութեամբ ապրիլը՝ ճշմարտախօսութեամբ ապրելէն աւելի լաւ է: Դժբաղդաբար ուշ հասկցար ասիկա, եթէ աւելի կանուխէն հասկցած ըլլայիր, այսպէս չպիտի անցընէիր կեանքդ: Երբեմն՝ ես չա՛տ գէշ դատեր եմ քեզ, պէտք չէր որ այսպանէի քեզ, այլ պէտք էր որ խղճայի վրադ, որովհետեւ քու բոլոր հարստութեամբդ կրկին բոլոր աշխարհի ամէնէն աղքատ մարդն ես:



ՍՏԱԽՕՍ ՀՈՂԻՔԸ

Փոքրիկ հովիւ մըն էր Մինքան,  
Որ ամէն օր դաշին վրան,  
Արածելու կ'երթար անտուն՝  
Հօտն իր գիւղին ոչխարներուն:

Օր մը՝ նեղուած հոն միամիտակ,  
Ըսաւ. « Աղուոր խաղ մը խաղանք ».  
Եւ ըսկրսաւ պոռալ ուժով՝  
« Գայլ կայ, գայլ կայ, հասէ՛ք շուտով »:

Գեղացիներ եկան հասան,  
Ոչ գայլ գրտան, ոչ ալ գազան.  
Քանհան խընդաց անկիրք սրղան,  
Ըսաւ անոնց. « Կատակ էր ան »:

Գայլեր եկան օր մը իրաւ,  
Մարդ իր ձայնին մըտիկ չըրաւ,  
Մէկը չեղաւ իրեն պաշտպան,  
Կըսոր կըսոր եղաւ Մինքան:

ՍԻՊԻՒ



ՅԱԿՈՔԻ ՈՍԿԻՆ

Յակոբի հօրեղբայրը օր մը պղտիկ ոսկի մը նուիրեց իրեն:

Աղուոր, փայլուն դրամ մըն էր, և պղտիկ ծակ մը ունէր՝ ուրիշ վարդագոյն ժապաւէն մը անցուցած էին:

— Ի՞նչ աղուոր դրամ է, ըսաւ նուարդ՝ Յակոբի քոյրը:

— Եւ որչա՛փ ալ փայլուն, անանկ չէ՞, աւելցուց Յակոբ:

— Ի՞նչպէս կը չինեն այս դրամները, հարցուց նուարդ որ տակաւին շատ պղտիկ էր:

Յակոբ՝ որ ստախօսութիւնը կը սիրէր և միշտ կը խարէր իր քոյրը.

— Չե՞ս գիտեր ի՞նչպէս կը չինեն, ըսաւ:

Նուարդ չէր գիտեր:

— Այս ոսկի դրամները հողին մէջ կը թաղեն, շարունակեց Յակոբ, լաւ մը կը ծածկեն վրան և մինչեւ ամառ այդպէս կը թողուն: Երբոր ամառը գայ, պղտիկ թուփ կը բուսնի՝ վրան լեցուն ասանկ ոսկիներով:

Նուարդ հաւատաց իր եղբօրը խօսքերուն որ շատ ուրախ կ'երեւար քոյրը խաբած ըլլալուն համար:

Նոյն օրը, Յակոբ իր դպրոցի ընկերներուն պատմեց թէ ինչպէս խաբած էր քոյրը: Ամէն անգամ որ կը պատմէր.

— Քոյրս չա՛տ պարզամիտ ու դիւրահաւան աղջիկ մըն է, անանկ չէ՞, կ'ըսէր իր ընկերներուն, չէ՞ք գիտեր որչա՛փ կը զուարճանամ այսպէս շարունակ զինքը խաբելով:

\* \* \*

Իրիկուան, երբ տուն վերադարձաւ, Յակոբ իր ուս-  
պին փնտուեց այն գորոցին մէջ ուր դրած էր առտուն:  
Ոսկին հոն չէր:

— Նուարդ, ըսաւ, ոսկիս առի՞ր:

— Այո՛, պատասխանեց աղջիկը:

— Ինձի տուր, չեղլես կորսնցունես:

— Բայց քովս չէ որ տամ, քու ըսածիդ պէս  
պարտէզ սարի և լաւ մը թաղեցի հողին մէջ, որպէս  
զի գալ ամառ մէկի տեղ շատ մը ոսկիներ ունենաս:

— Անմրա, քեզի ո՞վ ըսաւ որ ոսկին կը բուսնի:

— Դո՛ւն ըսիր առտուն:

Յակոբ սկսաւ լալ:

— Ո՛ւր թաղեցիր ոսկին, ո՛ւր է տեղը, կը հար-  
ցընէր հեծկտալով:

Այդ միջոցին մայրերնին վրայ հասաւ, և իրողու-  
թիւնը հասկնալով սկսաւ յանդիմանել Յակոբը, քոյրը  
խաբած ըլլալուն համար:

— Եթէ ոսկին չի գտնուի, ըսաւ, աղուոր պատիժ  
մը պիտի ըլլայ քեզի: Թող ասիկա դաս մը ըլլայ, որ-  
պէս զի ուրիշ անգամ մարդ չի խաբես:

Եւ իրաւ ալ ոսկին չգտան: Նուարդ չկրցաւ յիշել  
թէ ո՛ւր թաղած էր զայն:



#### 4. Ն Ա Խ Ա Ն Ձ

##### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Գ Ե Բ

— Չկայ կիրք մը որ նախանձէն աւելի  
ամօրալի ըլլայ: (ՊՕՍԻԻԷ)

— Նախանձս մարդը իր նմաններուն  
ինչքը մի՞ս իր ինչքէն մեծ կը տեսնէ:  
(Ս. ՖՐԱՆՍՈՒԱ ՏԸ ՍԱԼ)

— Եթէ կ'ուզես լաւ ապրիլ, աչք մի՛  
ունենաւ ուրիշին ստացուածին վրայ եւ  
գայն մի՛ բազդասեր բու ունեցածիդ  
հետ: (ՔՕՆՏՕՐՍԷ)

— Նախանձը վատ ձիւրք մըն է, որով-  
հետեւ մի՞ս կը ծածկուի եւ մուրիկ  
մէջ կը զարնէ: (ԼԱԹԷՆԱ)

##### Լ Ա Ի Օ Ր Ի Ն Ա Կ Ն Ե Ր Ը

Երբոր ձեր մէկ ընկերը իր խելացիութեան և աշ-  
խատութեան շնորհիւ դասարանին մէջ առաջին կը հան-  
դիսանայ, անշուշտ չէք նախանձիր, չէք չարանար,  
անանկ չէ: Ընդհակառակը, դուք գայն կը յարգէք,  
կը սքանչանաք անոր վրայ, կը հպարտանաք անով, մա-  
նաւանդ երբ հպարտ չէ, երբ ձեզ չարհամարհեր:

Հարկաւ չէք մոռնար թէ Պետրոս, Յակոբ կամ  
Պօղոս՝ լաւ աշխատելով երբէք ձեր լաւ աշխատելուն  
արդեւք մը չեն եղած, անոնց շարունակ ուսնիրը ձեր

տգէտ մնացած ըլլալուն արդարացումը չի կրնար ըլլալ : Դուք աղէկ կը զգաք թէ անոնք ձեզի լաւ օրինակ եղած են, հետեւաբար ձեզի օգտակար դարձած են, ձեզ դրդած, նոյն իսկ ձեզի օգնած են : Ի՞նչ պիտի ըլլար ձեր վիճակը, եթէ անոնց տեղ ծոյլ ու անկարող ընկերներ ունենայիք, ան ատեն աւելի ծոյլ և աւելի անհող չ'պիտի ըլլայիք :

Մարդու միշտ լաւ օրինակներ պէտք են, մարդերը իրեն օրինակ կ'առնէ իրմէ աւելի իմաստունը, իրմէ աւելի արժանիք ունեցողը, միշտ կը շահի : Հոտ չունեցող ծաղիկ մը քիչ մը ժամանակ վարդին հետ կ'ապրի և անոր բոյրը կ'առնէ : « Ի՞նչ ալ անոյշ կը բուրէ, կ'ըսեն, վա՞րդ է արդեօք » : — « Ո՛չ, կը պատասխանէ, վարդ չեմ, բայց վարդի հետ ապրեցայ » :

Բարեկամներս, ինչպէս է դպրոցին մէջ, այնպէս է կեանքին մէջ : Հոն ալ կան այդ անհաւատարութիւններն ու տարբերութիւնները : Մարդիկ կան որոնք բնաւ չեն յաջողիր, ուրիշներ՝ կէս մը մրայն կը յաջողին, և կան ալ որ կատարեալ յաջողութիւն մը ձեռք ձգելով առաջ կ'անցնին : Մէկը կը հարստանայ, ուրիշ մը կը զարգանայ, և երրորդ մը նշանաւոր կը դառնայ : Այդ մարդիկը գէշութիւն կ'ընեն անոնց որոնք իրենցմէ ետ կը մնան, անոնց յատկացուած տեղերը կը գրաւեն :

Այո՛ պիտի ըսէք, եթէ այդ մարդիկը հարստանալու համար գողութիւն ըրած են, կամ ուրիշին գործերով ինքզինքնին զարգացած ցոյց տուած են, և կամ իրենց չպատկանող արժանիքով մը նշանաւոր հանդիսացած են : Տղաքն ալ՝ երբեմն դպրոցին մէջ մրցանակ մը կորդելու համար, իրենց արժանաւոր ընկերոջ պարտականութիւնը կ'օրինակեն և կամ անոր արգելք կը դառ-

նան : Այդ տեսակ միջոցները սակայն ուղիղ չեն, պրծգանք միայն կ'առնեն և պատժի կ'ենթարկուին : Ասոր համար է որ արդարութիւն մը հաստատուած է և օրէնքներ դրուած են :

Բայց երբ մարդիկը պատուաւոր աշխատութեան մը շնորհիւ հարստացած, զարգացած, նշանաւոր դարձած են, պէտք չէ որ չարամանք, պէտք չէ որ նախանձինք : Այդ կերպով մեղմէ առաջ անցնողները բարիքներ են մեզի համար, որովհետեւ լաւ օրինակներ կը դառնան :

Յանցանքը մերը կ'ըլլայ՝ եթէ չուզենք անոնց հետեւիլ .

Յ. ԲԱՍԻ

ՕՁՆ ՈՒ ԿԱՅԾՈՒԻ ԿԸ

Կայծողիկ մ'հանգչէր պուրակին մէջ մուր,  
 Օձն յանկարծ խայթեց նրնին շուսու,  
 Որ գոչեց .— « Յանցանքս ի՞նչ էր, օձ անգութ » :  
 — « Կը փայլէիր դու : »

Ա.Ղ.Ե.Բ. ՓԱՆՈՍԵԱՆ

Բաւերու նշանակութիւնը .— Պուրակ՝ անտառ : Լուսու՝ փայտղ, լոյս առող :

ԵՐԿՈՒ ՆԱԽԱՆՁՆԵՐԸ

Նախանձը՝ ինք իր մէջ սեւ, տգեղ, չար, ահարկու՝ կը մեծցնէ սակայն մարդը և անպարտելի կը դարձնէ զայն, երբ մաքուր ու թեղումն հողի վրայ ինկած է: Որովհետեւ չենք կրնար մտածել թէ բոլոր նախանձոտ մարդիկ չար և անկարող են: Կեանքը՝ հակառակը կ'ապացուցանէ:


Քրիստոս՝ որ եօթը մահացու մեղքերուն կարգը դրաւ նախանձը, անշուշտ ըմբռնեց ա՛յն նախանձը որով Եփրայեցիք զինքը խաչեցին, այն անմիտ նախանձը որ ուրիշին վնասը միայն նպատակ ունի, որ կը խամբէ, կ'ոչնչացնէ, առանց ծաղկեցնելու, ստեղծելու:

Նոյն իսկ մեր թերութիւններուն մէջ զուրկ ենք խելքէ և կորովէ, որովհետեւ չենք գիտեր մեր նախանձը դարձնել ո՛չ թէ անձերու, այլ անոնց գործերուն վրայ ու մեր բարոյական ու Ֆիզիքական ոյժերը կը սպառենք միշտ ի վնաս ուրիշին, և երբէք մեր օգտին համար:

Մեծ, գեղեցիկ գործերը, ազնիւ նպատակները պէտք է մեր նախանձը զրգուեն. պէտք չէ որ զանոնք արհամարհելու չափ տգէտ ըլլանք. մեր նախանձը պէտք չէ ըլլայ չարիքի կամք մը, վտիտ՝ տխմար նախանձը որ իր մէջ կը մաշի, ինք իրմով կը խորտակուի, մեր սրտէն ու մեր մաքէն հեռացնելով ազնիւ ըղձանքներ:

ՍԻՊԻՆ

Բառերու նշանակութիւնը. — Բեղումն՝ արդիւնք ստուղ:



5. ԿԵՂՄԻՔ

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

— Ձկայ կեղծիք մը որ չի յայտնուի. կեղծիք մը որչա՛փ լաւ ծածկուած ըլլայ, այնչափ օուս կը յայտնուի: (ՏԷՄՕՑԻԼ)

— Կեղծիքին շնորհիւ մարդ կրնայ մեծ և փայլուն երեւայ, բայց երբ կեղծիքն երեւան ելլէ՝ միշտ արհամարհելի կը դառնայ: (Ս. ՍՄՍՅԼՍ)

— Մէկ իրական արժանիք, հազար կեղծ արժանիք կ'արժէ:

(ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՄ)

ԿԵՂՄ ԲԱՐԵՐԱՐԸ

Երբոր մինչեւ վերջին վայրիկանը լաւ մը կըտացաւ ու յոյժացաւ իր հարստութեամբը, ու ինքնիրենը ստուգեց թէ ո՛ր և է վայելք մը չէր մտցած իր կեանքին մէջ, իր անթիւ ոսկիները ի՞նչ ընելիքին վրայ խորհեցաւ:

Կը զգար որ գեղին ոսկիները կը խլրտէին, կը շարժէին, անսովոր ձայներ կը հանէին անտուկին մէջէն: Իր մահուան անկողնէն որոշ կերպով կը լսէր անոնց մետաղի խլրտուքը:

Ա.յն ատեն, տարօրինակը՝ անհատատային պատահեցաւ: Ա.յս հնարամիտ մարդը որ ամէն բանէ օգուտ մը հաննելու մէջ իր նմանը չէր ունեցած այսքան տարի,

չուարած մնաց, ապիկար ու անկարող գտաւ ինքզինքը  
հաճոյք մը ձեռք ձգելու՝ իր ձեռքին տակ եղած ահա-  
գին դրամէն:

Իր հինգած, փճացած ստամոքսը ո՛ր է է հաւնարաւ  
չէր կրնար մարսել. իր պարսաւունն և թուլցած ջիւղերը  
օրհասական ժամին պրկումովը կը գալարուէին:

Այս անկարողութեան խոստովանութիւնը խելքը  
գլխէն տարաւ, քովի սենեակին պատէն նախ փախուք  
մը, յետոյ աղմուկ մը կը թափանցէր, կուգար ներս, և  
վերահաս մահուան երկիւղէն սթափած լսողութիւնը՝  
այդ աղմուկին մէջ իր ժառանգորդներուն ձայնը ճանչցաւ:

Եւ յանկարծ լսյս մը ծագեցաւ մահուան արհաւիր-  
քով գրաւուած այս մտքին խորը. իր չար մարդու  
բնազդը մէկէն արթնցաւ. վերջին աւազակութեան մը,  
վերջին կողոպուտի մը խորհուրդը իր ողորմելի մարմինը  
դղրդեց օտքէն մինչեւ գլուխը:

Եպիսկոպոս, քահանայ ու թաղական ուղեց իր քո-  
վը, որոնք փութացին եկան: Ան առնն, հանդիսաւոր  
ու սրտառուչ ձայնով մը, կտակ ըրաւ, և իր բոլոր  
հարստութիւնը որ ա՛լ իրը չէր, եկեղեցիին ձգեց:

**Գ. ԶՕՀՐԱՊ**

Բառերու նշանակութիւնը. — Յղիսնալ՝ կշտանալ է  
Հաւնարաւ՝ համեղ ուտելիք: Պարսաւուն՝ յոգնած է:

**Ա Գ Ռ Ա Ի Ի Ն Փ Ե Տ Ռ Ի Ի Ն Ե Բ Ը**

Ջաւունկ, սեռուկ ու պաւաւ

Մէկ ազոսաւ,

Սիրաւարգի մը քեւերէն

Թափրփիւս փեւտրներն իրեն

Վրակ առաւ.

Եւ առտու մը, իսիս կսկնախ,

Երբ կը սոնփաւ քարճազոսիս,

Փոքրիկ քոչունիսն ակնստիկն

Եկակ ակնոր շուրջն առիկն,

Հիւսցունով, զարնակով.

Սարեակը սոխակիկն փոյ

Կը մնցի. «Ա՛խ, ո՛վ է աւ,

Շքոված իրերն ինր փեայ,

Որ իր սեպիկն արսափիկն

Նրակն է սիրաւարգիկն.

Աղոտր քոչուն, սաւր պէս,

Հաւ մըն ալ յեւ սեւած ես»:

Սգոսաք, կեղծ պճնասեր

Այս իօստերն որ կը յրսեր,

Կարծեց իր փառքն ապստով...:

— Երբ յանկարծ բռնեւ երա հով,

Եւ սոս զարդերն իր, ցիր ցակն,

Մէկ վայրկեանէն քափեցակն...

Բոքր քոչունի, մէկ քեւակն

Ըսկրասն ինդազ վրասն...:

Ագոստին պէս — ուշադիր  
Յիշեցե՛ք միշտ այս առակ, —  
Մարդիկ աչ կեղծ ու պատիր,  
Կ'ըղբան միշտ խաղի խայտառակ...:

Յ. Ա. Փ. Ս. Ա. Ն.

Բառերու նշանակութիւնը. — Զատուկ՝ խարերայ:  
Սոնեթա՛յ՝ Պարծենաչ: Շուրջը առնե՛լ՝ չըջապատել: Շփուի՛լ՝  
զարդարուիլ:

Հ Ո Ւ Լ Ի Ի Ն Ա Ն Օ Ք Ն Ե Բ Ը

Հուլի մեծ դրամատէր մըն էր որ խարէական մի-  
ջոցներով հարստացած և խարդախութեամբ մնանկա-  
ցած՝ դատարաններուն առջեւ կը քաշկուտուի հիմա:

Այս մարդը, իր փայլուն օրերուն մէջ, մտածելով  
անշուշտ թէ իր շահերուն նպաստաւոր պիտի ըլլար բա-  
րեպաշտի ու կրօնատէրի տիպոս մըն ալ աւելցնելը իր  
պատուաւոր և հարուստ սեղանաւորի համբաւին վրայ,  
պատարագի յատուկ ծանրագին անօթներ նուիրած էր  
Լոնտոնի Ս. Պօղոս եկեղեցիին: Այսօր՝ որ իր հարստու-  
թեան պզտոր աղբիւրը խմացուեցաւ, այդ անօթները  
չպիտի գործածուին ա՛լ, և անմիջապէս ծախուելով՝ դո-  
յացած դրամը Հուլիի պահանջատէրերուն պիտի տրուի:

Հուլիին անօթները ետ առուողները ըսել կ'ուզեն  
պարզապէս որ կրօնային, կրթական կամ մարդասի-  
րական հաստատութեան մը սասարեղ ուղողը մաքուր

անուն մը ունենալու է, ապա թէ ոչ՝ իր նուէրը չըն-  
դունուի. ազտոտ մարդուն դրամն ալ ազտոտ կ'ըլլայ.  
ուսկին փայլը չի կրնար կեանքին արատը մաքրել:

Միշտ կրնանք դաս մը առնել ասանկ պարագա-  
ներէ, քիչ մը պակաս գոհացում ունենալու համար կեղծ  
բարերարի համբաւներուն առջեւ, որոնց քով կ'անշը-  
քանան շատ անգամ ճշմարիտ բարերարութիւնները,  
համեստ քսակներէ տրուած նուէրները:

Տ. Ա.

Բառերու նշանակութիւնը. — Սասարեղ՝ օգնել:



### 6. ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

— Գիմացիներից անձը պէտք է հաւասար  
նկատես իւր անձից, եւ բնաւ պէտք չէ որ  
գալն նուասացնես իւր անձնասիրու-  
թիւնի գոհացնելու համար : (ՔԱՆՔ)

— Այն որ ուրիշները կ'արհամարհէ,  
իճնն ալ արհամարհանքի արժանի կը  
դառնայ : (Ա. ՍԷՆ-Ք'ԻԼԷՌ)

— Շնորհիով մարդիկ արժով կարգ  
կ'ըլլան. իսկ ապուշները՝ վարձուներով :  
(ՏԻԻՔԼՈ)

— Անոնք որ ազգաս մարդոց հետ անձ-  
նասիրութեամբ կը վարուին, բացարձա-  
կապէս արհամարհելի կը դառնան :  
(ՉՈՒ)

### ԵՐԿՈՒ ԳՐԱՅԻՆ ԵՐԸ

Ա.

Մարդ մը կ'ապրէր իր աշխատութեան չնորհիւ, ու  
կ'ապրեցնէր իր կինն ու զաւակները : Եւ որովհետեւ  
առողջ էր, զօրաւոր բազուկներ ունէր ու միշտ գործ  
կը գտնէր, զիւրաւ կը հասնէր իր ու ընտանիքին պէտ-  
քերուն :

Բայց անգամ մը գործերը պակսեցան, որովհետեւ  
շահ չէին բերեր. ամէն բան սղեց, նոյն իսկ ուտելիքը :

Աշխատաւոր մարդն ու իր ընտանիքը սկսան նեղ-  
ուիլ : Մարդը ապրելու համար նախ վասնեց իր խնա-  
ջած դրամը, յետոյ սկսաւ կարասիները ծախել՝ օրուան  
հացը գնելու համար : Բայց եկաւ օր մը ուր ա՛լ տանը  
մէջ ծախելիք բան չմնաց : Ան ատեն՝ անօթութիւնը  
ներս մտաւ մարդուն տունէն, և անօթութեան հետ ալ  
հիւանդութիւնը :

Բ

Այդ մարդը երկու դրացի ունէր, մէկը շատ հա-  
րուստ և միւսն ալ քիչ մը բարեկեցիկ :



Մարդը գնաց գտաւ հարուստը և բտաւ անոր .

— Գթացէ՛ք մեր վրայ, ե՛ս, կինս ու զաւակներս  
անօթի ենք :

Հարուստը պատասխանեց .

— Ի՞նչ կրնամ ընել ես, երբ ինձի համար կ'աշ-  
խատէիր, վարձքդ միշտ տուի ամբողջութեամբ, ո՛չ  
մէկուն իրաւունքը կերայ, ձեռքերս մաքուր մնացած  
են ամէն անարդարութենէ : Իբրաւ է որ ձեր խղճալի վի-

ճակը կը յուզէ զիս , բայց ասանկ նեղութեան ատեններ ,  
ամէն մարդ ինքզինքին վրայ կը մտածէ , ո՛վ զիտէ որ-  
չափ ատեն ասանկ պիտի երթայ :

Պ.

Խեղճ մարդը լուց , և սիրտը անձկութեամբ լեցուն  
տուն կը վերադառնար , երբ հանդիպեցաւ իր միւս դրա-  
ցիին , անոր՝ որ նուազ հարուստ էր :

Այս վերջինը , զինքը այդչափ ախուր և մտածկոտ  
տեսնելով , հարցուց .

— Ի՞նչ ունիս , բարեկամ , ինչո՞ւ ասանկ ախուր  
ես և ինչո՞ւ արցունքներ կան աչքերուդ մէջ :

Խեղճ մարդը նկարագրեց իր թշուառ վիճակը :

Ան ատեն դրացին ըսաւ իրեն .

— Բայց ինչո՞ւ աստանկ կը յուսահատիս , մենք  
ամէնքս ալ եղբայրներ չե՞նք . ես չեմ ուզեր իմ եղբայրս  
լքել թշուառութեան մէջ , եկուր իմ տունս և բաժնինք  
ինչ որ Աստուած պարգեւած է ինձի :

Թշուառ մարդուն ընտանիքը այս կերպով ազա-  
տեցաւ նեղութենէ , մինչեւ որ կրցաւ կրկին ինքզինքը  
ապրեցնել :

Պ.

Շատ տարիներ անցան , և մարդուն այդ երկու  
դրացիները երկնային դատաւորին ներկայացան :

Աստուած այսպէս խօսեցաւ հարուստին .

— Իմ աչքս մըշտ քեզի հետեւեցաւ երկրի վրայ .  
զիտեմ որ դուն ոչ մէկուն նեղութիւն պատճառե-  
ցիր , թէ ոչ մէկուն իրաւունքը յափշտակեցիր , բայց  
դուն մինակ քու անձիդ համար ապրեցար և երբէք  
ականջ չի կախեցիր եղբայրսիրութեան օրէնքին : Հի-  
մա , այս աշխարհին մէջ , ուր մերկ և ազքատ կը

մանեա , քեզի հետ ճիշտ այդ կերպով պիտի վարուին և  
երկրի վրայ դուն ոչինչ տուիր քու նմաններուդ , հոս  
ալ քեզի ոչինչ պիտի տրուի : Ինչպէս որ աշխարհի մէջ  
մինակ քու անձդ մտածեցիր , մինակ քու անձդ սիրեցիր և  
այնպէս ըրէ նաեւ հոս :

Յետոյ , մարդուն միւս դրացիին դատաւարով , ա-  
ւելցուց .

— Իսկ քեզի , ի՞նչ որ ուզեա պիտի տրուի հոս ,  
որովհետեւ երկրի մէջ հետեւեցար զթութեան օրէնքին ,  
որովհետեւ քու ունեցածդ բաժնեցիր անոնց հետ՝ որոնք  
կարօտ էին , և սրբեցիր արցունքները անոնց՝ որոնք  
կուլային : Գնա՛ և ընդունէ վարձատրութիւնը անոնց՝  
որոնք ամբողջովին կատարած են իրենց պարտականու-  
թիւնը , սիրոյ և արդարութեան օրէնքին հետեւելով և  
Ատիկա քու արդար իրաւունքդ է :

ԼԱՍՏՆԷ



Ե Ձ Ո Ւ Յ Ի

Անձնասէր ձիւն  
Խեղճուկ եզիւն  
Այսպէս կ'ըսէր .  
« Ես միշտ իմ տէր  
Շաշիս սակիս  
Դաշտ ու գիւղեր .  
Փառք շատ ունիս ,  
Թող քեզ հաւնեմ  
Զիրքերս ամէն .



Իսկ դուն թ'նչ ես, եզնի'կ սրկար,  
 Թ'նչ ունիս դուն ձիրք օգսակար,  
 Շաս շաս արտեր վարեղ հերկեղ,  
 Յեանոյ ախոռ գայ ու նիրհեղ» :  
 — « Սակայն այդ իմ աշխատարկուն  
 երե յըրայ, քու սերն ու դուն  
 Հապու ինչէ՞ն պիտի ապրիք,  
 Ո՞րք աւանասեր ձի աւնիւելիկ : »

Եզն այսպէս  
 Պասսախանեց.  
 Չիև յսես՝  
 Լեզուն քաշեց :

Վ.Ս.Գ.Ս.Ն. Ա.Պ.Ս.Կ.Յ.Գ.Ի.Բ

Հ Ա Ր Մ Ի Ն Ա Ր Յ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ը

(Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Շ Է Ք Ե Ա Յ)

Սեպուհը, արեւին պէս աղուոր երիտասարդ Սեպուհը մահացու կերպով վիրաւորուած է :

Անտառներուն խորը որսացած ատեն, յանկարծակիի եկաւ չար վարաղէ մը որ իր ժանիքներով պատուեց զայն :

Եւ հիմա, յամբիկներու փունջի մը պէս տոգոյն, պառկած է անկողնին արիւնտա դիպակին վրայ :

Անկողնին բոլորտիքը երեք կլին կան որ կուլան ոտքի վրայ. մայրը, քոյրը և հարսը :

« Վազենք, կ'ըսէ մայրը, շուտ վազենք երթանք պարիկին որ մինաւորիկ կ'ապրի անտառներուն խորը :

« Ինք միայն կրնայ զսնել բազաւան մը որ բուժէ իմ աղուոր, արեւին պէս աղուոր Սեպուհս : »

Երբոր անտառներուն խորը հասան, պարիկը այսպէս խօսեցաւ իրենց. « Կրնամ բուժել երիտասարդ Սեպուհը, կրնամ ձեզի տալ բալասան մը որ բուժէ զայն : Բայց այս մէկ հատիկ բալասանիս փոխարէն պէտք է որ ինձի տաք, դուն՝ մայրը՝ քու աջ թեւդ, դուն՝ քոյրը՝ ձերմակ ձեռքդ՝ մատին մատնիովը, և դուն՝ հարսը՝ ոսկեթել առատ մազերդ » :

Մայրը ըսաւ. — « Ատ ինչ դիւրին ըսն է » :

Եւ տուաւ աջ ձեռքը :

Քոյրը ըսաւ. — « Ա՛ռ իմ ձերմակ ձեռքս մատիս մատնիովը » :

Բայց հարսը հեծեծեց. — « Աւա՛ղ, ինչպէս կրնամ բաժնուիլ ոսկեթել մազերէս : Իրաւ է որ չեմ կրնար տալ ոսկեթել մազերս » :

Պարիկը իր բալասանը չտուաւ :

Ու Սեպուհը մեռաւ :

Հիմայ, երեք կլին են որ կուլան անշունչ մարմին բոլորտիքը : Մայրը կուլայ՝ վեր առնելով իր սիրեցեալ Սեպուհին գլուխը, որ անտառներու եզեւինի մը պէս գետին ինկած է :

Քոյրը կուլայ՝ Սեպուհին, արեւին պէս աղուոր Սեպուհին ոտքերուն տակ:

Եւ հարսը կուլայ Սեպուհին մուսած սրտին մօտ:


Ս.յն տեղը, ուր մայրը լացաւ, դեղեցիկ գեա մը Բղաւ, անմահական ջուրերով, որոնք մինչեւ այսօր կը հոսին:

Հոն ուր քոյրը արատուեց, ականակիտ աղբերակ մը եղաւ:

Բայց այն տեղը ուր հարսը արցունք թափեց, պղտիկ լճակ մը եղաւ՝ զոր ելլող առաջին արեւը չորցուց:

**ՄԱՌԻ ԳՐԻՋԻՆՍԻՍ.**

Բառերու նշանակութիւնը.— Դիպակ՝ աղնիւ զոր-  
ժուած կերպաս: Բաշասան՝ դեղ: Ականակիտ՝ փայլուն:



**7. ՍՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ**

**Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Գ Ե Բ**

— Մարդկային հոգիին ու մտքին սկարուրեան ամէնէն մեծ նշանը սնափառութիւնն է: (Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ)

— Մարդիկ կան՝ որոնք կը յոխորտան երբ լաւ ձիւ մը վրայ կեծնեն. բայց չեն մտածեր որ երբ ասոր մէջ փառք մը կայ՝ աւելի ձիւն կը պատկանի քան թէ իրենց: (Ս. ՅՐԱՆՍՈՒԱ ՏԸ ՍԱԼ)

— Սնափառ մարդիկը շուտ կ'ըլլան, եւ շուտ մարդիկն ալ շուտ կը կործանին: (Ա. ԲԸԹԻԷ)

— Կեղծ համեստութիւնը սնափառութեան ամէնէն զէտ տեսակն է: (ԼԱ ՊՈՒԻՅԷՐ)

**Կ Ե Ղ Ծ Մ Ա Ր Գ Ր Ի Տ Ն Ե Բ**

Շուրջս լեցուած էր, կողովներու մէջ, սեղանին վրայ, պուպրիկիս վիզը, երեսը, գլուխը, ամէն կողմ, ամէն տեղ, ճշմարիտ հեղեղ մը մարդրիտներու, որոնց սաստիկ սէր մը տուեր էր հիւանդ ըլլալէս ի վեր:

Ե՛լ հիմակ չէի ձանձրանար, ո՛չ ընկերներս կը փնտրուէի, ո՛չ խաղերս, ո՛չ պարտէզին մէջ աղուոր վազվրուտութիւնս: Ամէն բան մոռցած էի մարդրիտներու համար, որոնցմէ կը բերէին ինձի առատ առատ:

Եւ ես կ'ուզէի, նորէն կ'ուզէի, և միշտ կ'ուզէի:

Բայց ո՞ր վայելքն է որ ստորանք չունենայ, ամէնէն անմեղը, ամէնէն մանկականը, իմա ալ նախանձը շարժեց բաղդին: Եւ որ մը, երբ հպարտ երջանկութեամբ մը իզմէ տարեց ընկերունի մը ցոյց կուտայի մարդբիտներս, « ատենք կեղծ են » ըսաւ արհամարհանքով մը:

Կեղծ, ի՞նչ, իմ մարդբիտներս կեղծ ըլլային, բայց ինչո՞ւ, ի՞նչ հարկ որ կեղծ ըլլային, քանի որ իրականը կրնար ըլլալ:

\* \* \*

Օր մը ձեռք անցուցի իրական մարդբիտներ: Ատենք ալ իմի՛ններուս կը նմանէին, կ'որ, հմայիչ, բայց գոյնով և ծաւալով աւելի աննշան: Իմի՛ններս աւելի գեղեցիկ ու ճոխ էին, ինչպէս աշխարհի ամէն կեղծ բաները:

Եւ երբ հասկնալու համար անոնց արժէքը, աչքերս ու միտքս կը յոգնեցնէի, անհամբերութեամբ մը ձեռքիս մէջ սեղմեցի երկուքն ալ. իմ մարդբիտներս ճմլուեցան և վշուր վշուր մատներէս վար թափեցան, մինչ միւսները կը դիմանային:

Անկէ ի վեր, ամէն անգամ որ կը հանդիպիմ խօսքերու՝ որոնք շատ հրատուրիչ են, ձայներու որոնք շատ անուշ են, սրտերու՝ որոնք շատ զգայուն են, կեղծ մարդբիտներս միտքս կուգան: Որովհետեւ կը յիշեմ այն միւս մարդբիտները որոնք այնքան աննշան ու համեստ էին իրենց թանկագին արժէքին մէջ:

ՍԻՊԻՆ



Մ Ո Ւ Կ Ն Ո Ւ Ե Ո Ւ Ն Կ Ը

(ԲՈՂՈՒԻԱԿԱՆ ԱՌԱՍ)

Պատարագի միջոցիկ,  
Գրականիկն երեքէր քաց,  
Ծակի մը մէջ, առանձին,  
Մոկիկ մըն էր պահուրսած,

Երբ ժամերգութեան վերջանալուն մօտ՝  
Իր ֆիքիկն հասաւ խռնկիկն ակուշ հոտ:  
— «Օ՛հ, ե՛ս եմ, ըսաւ, սարսկոյս չը կսե՛յ,

Ձերմ պաշտմիկն առարկայ

Այս բոլոր մարդոց՝ որք կ'աղօթեն յար  
Հոս, գեհնամած ու խռնարհ...:

Երեւա՛նի, կեղծ խիպկն ա՛յ յոնի իմաս,  
Կոզեմ՝ ճեւնեղ այն

Խռնկն որ կը մըխայ, որ կը վառի սաս  
Ու վեր կ'երդէ՝ ինձ, ի՛նձ հաւար միայն...:»

Եւ աներկեւան, մեր մոկկն սկներեա  
Դուրս գարոյ, լեսաւ սեղակիկն վերեա...

Բայց սրբասան պահակ կասուն  
Տեսաւ, վրասն ցաւեց ժրպսուն,  
Մէկ հարուածով ֆակդեց մոկիկն  
Սիկն մարմիկն ու սեւապարծ հոգիկն:

Կը պատկեն քե՛ ըտերոյ՝ այս դէպքն ուշագրաւ,  
Գերապայծառն իր քարոզին նիւթ ըրաւ:

«Պէտք է, ըսաւ, ամէն ստրի մէջ, մարդիկ  
Ըրան ըզգոյշ, ինկնաճանայ, համեասիկ,  
Եւ իրենց լուռ խորշին մէջէն,  
Խելն, խնաստիկն ու ուսկան  
Բընալին դուրս եղերու չեն  
Որ փորձանիսի մը չը գան:

Թրգի. Ա. ՓԱՆՍՍԵԱՆ

ԳՆԱԶԻԿԻ

Բառերու նշանակութիւնը. — Գեղեցիկ՝ դեռ  
չուրած: Անկերպան՝ անվար: Ռակայ՝ անխելք:

ԵՐԿՈՒ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐԸ

Տան մը պատէն երկու ժամացոյցներ կախուած էին:  
Մէկը շատ նոր էր, շատ ալ փայլուն, բայց այն աս-  
տիճան անկանոն կը բանէր որ իր սլաքները մէյ մը շատ  
առաջ կ'երթային, մէյ մըն ալ շատ ետ կը մնային: Այդ  
ժամացոյցը երբէք ճիշդ ժամը ցոյց չէր տուած, բայց  
շատ սնափառ ըլլալով, շարունակ կը ծաղրէր իր մօտ  
կախուած միւս ժամացոյցը:

Այս վերջինը շատ հին էր, երկար ատեն դորձած-  
ուած ըլլալով ինքն ալ մեծ բան մը չէր արժեր, մին-  
չեւ անգամ ժամերը ցոյց տուող սլաքները ինկած էին:

Օր մը, նոր ժամացոյցը ըսաւ անոր.

— Անգամ մը ինծի նայէ, տես թէ որչափ մեծ

կարեւորութիւն ունիմ. ամէն մարդ ինծի խորհուրդ կը  
հարցնէ, ամէն մարդ ինծի կը դիմէ օրուան բոլոր կա-  
րեւոր առիթներուն մէջ: Որք՝ իր ժամացոյցը կ'ուզէ  
ինծի նայելով, ուրիշ մը կը վազէ իր ժամադրութեան  
զոր միշտ ե՛ս ցոյց կուտամ իրեն: Չկայ մէկը որ ինծի  
երախտապարտ չըլլայ: Մինչդեռ դուն՝ ոչինչ կ'արեւս,  
ոչ ոք քեզի կարեւորութիւն կուտայ: Մարդիկ՝ արհա-  
մարտոտ նայուածք մը միայն կը նետեն վրադ, ու կ'անց-  
նին կ'երթան:

Միւս ժամացոյցը պատասխանեց.

— Կրնամ արձամբհելի դարձած ըլլալ, բայց դո-  
նէ քեզի պէս մարդ չե՛մ խաբեր:

Ժ. Պ. ՍԷՅ

### 8. Ծ Ա Ղ Ր Ա Ն Ք

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

— Մարդու մը կերպարանքը ծաղիկը աշխարհի ամէնէն անմիտ եւ ամէնէն այգաճեղի բանն է: (ՍՅԱԼ)

— Ծագրանքն ու չարախօսութիւնը դրացի են իրարու: (ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՌԱՄ)

— Անարգանքներուն մէջ՝ ամէնէն անցեցիկն ծագրանքն է, որովհետեւ մարդու մը արժանապատուութիւնը կը վերաւորէ: (ԼԱ ՊՈՒԻՅԷՐ)

— Մտնի մէջ չարութիւն չունեցողը ոչ ոք կը ծագրէ: (ՏԻԿԻՆ ՏԸ ԼԱՍՊԷՌ)

#### Ձ Կ Ն Ո Ր Ս Ի Ն Վ Ր Է Ժ Ը

Ձկնորս Սիմոն՝ որ շատ տղեղ էր, կռնակը ծանր բեռ մը առած անտառէն դէպի իր տունը կը վերադառնար: Ճամբան սառույցներով ծածկուած էր, և խեղճ ձկնորսը մեծ դժուարութեամբ կը յառաջանար:

Երբ որսորդ թովմասի տանը մօտերը հասաւ, Սիմոն վար դրաւ բեռը, որպէս զի քիչ մը յողմութիւն առնէ:

Թովմաս՝ տանը առաջին էր և ուշադրութեամբ կը գիտէր Սիմոնը:

— Ի՞նչ տղեղ մարդ, ըսաւ յանկարծ, օ՛հ, մարդուս գանիլը կուգայ:

— Բեզի ի՞նչ մլաս ունի տղեղութիւնս, ըսաւ Սիմոն՝ որ որսորդին խօսքը լսած էր, ի՞նչ գէշութիւն տեսար իմ տղեղութենէս:

— Այդչափ տղեղ մարդիկ պէտք է որ չար եղած ըլլան, շարունակեց թովմաս:

— Չարութիւնը մարդուս սրտին մէջն է, և ո՛չ թէ դէմքին վրայ, պատասխանեց Սիմոն:

Եւ հեռացաւ զնաց, մինչդեռ թովմաս կը շարունակէր ծաղրել:

— Ստատածը սիրողը թող անդամ մը նայի, կապիկի կը նմանի. ասանկ մարդ մը կրնա՞յ երբէք բարի ըլլալ. օ՛հ, մարդուս գանիլը կուգայ:»

\* \* \*

Քոնի մը օր ետքը, մինչդեռ ձկնորս Սիմոն գետեզրին մօտ կաշխատէր իր նաւակին մէջ, որսորդ թովմասի տղան գետին մօտեցաւ, փոթորիկէն կէս մը կործանած կամուրջին վրայէն դիմաց անցնելու համար: Թովմասի տղան չէր գիտեր թէ կամուրջը խարխուլ է:

— Մի՛ անցնիր, գաւակս, ըսաւ Սիմոն, կը փլչի ու գետը կ'իջնաս:

Տղան կեցաւ, բայց որսորդ թովմաս՝ որ գետին միւս կողմը կը գանուէր, պոռայ անոր.

— Կարապիտ, ականջ մի՛ կախեր Սիմոնին և անցիլը. կամուրջը բան մը չունի:

Կարապիտ հետեւեցաւ հօրը խորհուրդին, բայց հազիւ քանի մը քայլ առած էր, երբ կամուրջը փլաւ:

Կարապետ խեղդուելու վտանգին մէջն էր և օգնութիւն կ'աղաղակէր :

Հայրը չէր համարձակեր գետին մէջ նետուիլ, և վշտագին ճիչեր կ'արձակէր :

Բայց ահա անդիէն՝ ձկնորս Սիմոն սառ ջուրերուն մէջ նետուեցաւ, և Կարապետը ազատելով տարաւ հօրը՝ որ տակաւին կ'ողբար :

— Ա՛ռ, ըստ անոր, աղաղ ողջ առողջ քեզի կը բերեմ :

Թովմաս ամօթով մնաց, մյուսքը բերելով այն ծանր խօսքերը զոր քանի մը օր առաջ ըրած էր անոր, դէմքին ազդուութիւնը ծաղրելու համար :

— Ներէ՛ ինձի, վեհանձն Սիմոն, թոթովեց, ներէ՛ իմ չարութեանս : Որչա՛փ բարի ես որ փոխանակ վրէժ լուծելու, այսպէս զաւակս ազատեցիր :

— Լաւագոյն վրէժը, ըստ Սիմոն, բարութեամբ ու ներողամտութեամբ կ'ստանուի : Կ'ուզեմ միայն որ համողութիւն թէ ծաղրանքը ոչ մէկ օգուտ կը բերէ մարդուս, և թէ ամէնէն ծաղրելի մարդիկը չեն որ միշտ ամէնէն չարերը կ'ըլլան :

Պ Ա Յ Ի Ժ Ը

Հինգ վեց տղայք կը խաղային,  
Փոփրիկն Արշակ ինկար գետին .  
Քար մը շա՛ս մեծ, անգուած այնտեղ,  
Քունկն արխնեց՝ տղուն անմեղ :

Արշակ կուրար, քարին Արամ՝  
Եղբայրաբար՝ սակեր խրկում :  
Բայց անդիէն կրստերն Ասեղ  
Շաս խրկողպէն ըսկաւ ծաղրել :

— Ի՞նչ եղար, ի՞նչ, ըստ կամաց,  
Ի՞նչ այդ զրոյիւն, խի՞քոյ է բռնած :  
Բայց քիչ մ'անդիին Ասեղ գրսաւ  
Իր կոշ ծաղրին պատիժն անբաւ :

Երբ դեռ խրկողար՝ գրորեցաւ  
Սանդուխն ի վար, ըզգաց մեծ ցար :  
Արդար տղայք իր վիճակին  
Բրկաւ խրկումք, հոգ չը տարին :

— « Ի՞նչ ունիս, ի՞նչ, ըսին կամաց,  
Ի՞նչ այդ զրոյիւն, խի՞քոյ է բռնած : »  
Մի՛ մոռնա՛ք դո՛ք՝ միշտ ծաղրողին  
Ծաղրանք անգութ կ'իյնայ քածին :

Յ. ՊԱՌԱՅԻ

Մ Ա Ր Կ Ո Ս Ե Ի Ա Ր Շ Ա Ի Ի Բ

Ազքատ ընտանիքի մը զաւակն էր Մարկոս : Մայրը, այրի մնացած ըլլալով, ուրիշներու տուները կ'աշխատէր օրուան ապրուստը ձարելու համար, և Մարկոս, դպրոցէն ելլելուն պէս, չէր դեգերեր փողոցները և չի-

տակ տուն վազելով չորս կողմը կ'աւելի կը շտկէր, որ-  
պէս զի մօրը օգնութիւն մը ըրած ըլլայ:

Դպրոցի ընկերներէն մէկ քանին՝ փոխանակ Մար-  
կոսի այս ընթացքը գովելու, կը ծաղրէին, Արշաւիր  
մանաւանդ՝ որ հարուստ վաճառականի մը զաւակն էր,  
չարունակ կը ծաղրէր Մարկոսի մաքուր բայց խեղճուկ  
հագուստներն ու հին կօշիկները:

Մարկոս միշտ բարութեամբ կը պատասխանէր անոր  
ծաղրանքին:

Բաւական ժամանակ վերջը, Արշաւիրի հայրը, ճա-  
խորդ գործեր ընելով մնանկացաւ: Իր հարստութենէն  
ոչինչ մնաց ձեռքը, ու ինքն ու ընտանիքը մեծ կարօ-  
տութեան մէջ ինկան: Պարտքեր ալ ունէր, այնպէս որ  
պահանջատէրերը ծախեցին տունն ու կարասիները, ու  
զինքն իր ընտանիքին հետ փողոց ձգեցին:

Խեղճ մարդը շատ չդիմացաւ, մեռաւ, և ընտանի-  
քը առանց ասպաւէնի մնաց:

Ատեն մը, իրենց մնացած քիչ մը ինչքը ծախելով,  
Արշաւիր և իր մայրը կրցան ասլիլ: Բայց եկաւ օր մը  
ուր ալ ծախելու բան մնացած չըլլալով, ստիպուեցան  
ինքզինքնին արձանագրել տալ Աղքատախնամի ցու-  
ցակին մէջ, իբր յետին թշուառութեան մատնուած ըն-  
տանիք մը: Աղքատախնամը, որ արդէն այդ կարգի մար-  
դոց օգնելու համար հաստատուած է, չմերժեց, և յանձն  
առաւ քիչ շատ հաց և ուտելիք հայթայթել իրենց:

Այսպէս, առաւ մը, Արշաւիր ստիպուեցաւ Աղ-  
քատախնամի գրասենեակը երթալ՝ իրենց սահմանուած  
հացը առնելու համար: Այդ ճամբան շատ ծանօթ էր  
Մարկոսի, բայց Արշաւիր՝ առաջին անգամն էր որ պիտի  
կտրէր այդ ճամբան: Գնաց գտաւ գրասենեակը, սա-

կայն չէր գիտեր թէ ո՛ւր և որո՛ւ պէտք էր դիմել,  
իրենց յատկացուած նպաստը ստանալու համար:

Շփոթած կեցած էր, երբ յանկարծ Մաշկոսը տե-  
սաւ, ա՛յն Մարկոսը զոր կրբեմն, դպրոցին մէջ այնքան  
կը ծաղրէր՝ աղքատ ու խեղճ ըլլալուն համար: *Վ*

Արշաւիր կասկարմիր կտրեցաւ: Մարկոս հասկցաւ  
իսկոյն թէ ինչու համար հոն եկած է, բայց որովհետեւ  
բարի ու գթասիրտ տղայ մըն էր, անոր բնաւ չյիշեցուց  
երբեմնի ծաղրանքները: Ընդհակառակը, ժպտուն ու  
կարեկիր դէմքով մը անոր քով գնաց ու ըսաւ.

— Բարի լոյս, Արշաւիր, նպաստ ստանալու եկած  
ես, անանկ չէ՞, եկուր միասին երթանք. ևս այնչա՛փ  
անգամ հոս նպաստ խնդրելու եկած եմ որ ամէն տե-  
ղերը գիտեմ: Եկո՛ւր օգնեմ քեզի:

Արշաւիր յուզուեցաւ այսքան բարութեան առջև  
և լալով Մարկոսի հետեւեցաւ:



### 9. ՇՈՂՈՔՈՐԹՈՒԹԻՒՆ

#### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

— Շողոքորթիւնը ամօրալի առու-  
տուր մըն է, ուրիշ էիջ անգամ միայն շո-  
ղոքորթողը կը ցափի: (ԹԷՈՓՐԱՍ)

— Շողոքորթիւնը կեղծ դրամ մըն  
է, որ սնափառ մարդոց համար միայն  
արժէք ունի: (ԼԱ ՌՕՇՖՈՒՔՕ)

— Շողոքորթիւնը ցաւիկն պէս է, ոչ  
կը պզտիկցնէ մեզ, ոչ ալ կը մեծցնէ:  
(ԴԱՆԻԱԿԱՆ ԱՌԱՄ)

— Աւելի պէտք է նախընտրել իմա-  
տուցիկն պարսաւք, քան անմիտիկն գո-  
վեստը: (\*\*\*)

#### Յ Ա Ք Ա Ն Ը

Ազարակապան մը ցափանի մը պէտք ունենալով, իր  
երկու ծառաները մօտակայ ազարակ մը զրկեց որ հաս  
մը փոխ աննեն:

— Ծանր է թէեւ, ըսաւ անոնց, բայց երկուքդ ալ  
մէյմէկ ծայրէն ուսերնուդ վրայ առնելով կրնաք բերել:  
Ծառաներէն մէկը որ խորամանկ ու շողօքորթ էր,  
կ'ուզէր բնուր ամբողջովին ընկերոջը բնօջնել:

Ասոր համար, ցաքանը տեսնելուն պէս, ըսաւ ըն-  
կերոջը.

— Որչա՛փ ալ անխելք են մեր տէրերը, ասանկ

ճանր գործիք մը վերցնելու համար երկու հողի կը  
զրկին, մինչդեռ առնուազն չորս մարդ պէտք է զայն  
տանելու համար:

Միւս ծառան որ չատ պարզամիտ էր և ուժով, պա-  
տասխանեց.

— Ի՛նչ կ'ըսես, եղբայր, չորս հողի ի՛նչ պէտք  
կայ, ես մինակս կրնամ տանիլ զայն. օգնէ՛ քիչ մը որ  
ուսիս վրայ դնեմ, և պիտի տեսնես:

Շողօքորթին ուզածն ալ ատ էր արդէն:

Ճամբան՝ մինչդեռ անմիտ ընկերը կը հեծէր բնօխ  
տակ.

— Օ՛հ, ս'ըջափ ուժով ես, ս'ըջափ ուժով ես, կ'ը-  
սէր շարունակ, չէի կարծեր ընաւ թէ այդչափ ուժ  
ունիս. հաւատա՛ ըսածիս, ամբողջ աշխարհի մէջ քեզի  
պէս հատ մըն ալ չկայ: Ատ ի՛նչ ուժ, Աստուած իմ:  
Բայց չատ չի յոգնիս, քիչ մը օգնեմ քեզի:

Միւսը սակայն որ հրապուրուած էր շողօքորթին  
խօսքերէն.

— Ո՛չ ո՛չ, ըսաւ, մեծ բան մը չէ, ես մինակս  
կրնամ մինչեւ առն տանիլ, նոյն իսկ աւելի հեռուն  
ալ, եթէ երբէք պէտք ըլլայ:

Իրաւ է որ սարաւ, բայց այնչա՛փ յոգնած էր որ  
քանի մը օր հիւանդ պառկեցաւ:

Իսկ շողօքորթը կ'ուրախանար, որովհետեւ ցաքա-  
նին ծանրութիւնը չէր զգացած ընաւ, և հետեւաբար  
չէր յոգնած:

#### ՅՐԱՆՔԻՆ

Բառերու նշանակութիւնը. — Յափա՛ն հողակոյ-  
տերը փշրելու և հունտերը ծածկելու գործիք:



ԿԱՏՈՒ ԵՒ ՍԱՐԵԿՆԵՐ

« Բարի յոյս փեզ,  
 Խասոյս արեկ,  
 Ամեն առսմ,  
 Ո՛վ արեկ դու,  
 Մռթնաշունտն  
 Սիրուն սիրուն  
 Ինչպէ՛ս կ'երգես,  
 Արդեօք գիտն՞ս : »

Կասու մը՝ պասին կոքնած՝  
 Սարեկին ձիշո դեմ նսսած՝  
 Այայես կը խօսէր,  
 Կը շողոփորբէր :  
 « Ա՛խ գայի  
 Քեզ յրսէի »

Այգուն այգուն եւ զմայրէի  
 Տեսփոյ, ձայնիոյ սփանջելի :  
 Օ՛ն, քո դայրայրիկ  
 Երգէ՛, ո՛վ արեկ : »

Շողոփորբին այս սուտ խօսէն  
 Սարեկ եղած հոն ինկ իրմեն՝  
 Հագար տեսակ ձայն կը ձրգէր,  
 Անուշ անուշ կը ձրոտողէր .  
 Լէո ու ձորակ, անստ ամեն  
 Կը քնդային անոր ձայնեն :

Բայց ի՛նչ զարմանք, երբ Սարեկ դեռ  
 Տաղեր կ'երգէր, ձայն կ'արձակէր,  
 Կասուն յանկարծ ձայնեց .

« Քիչ մը կեցի, Սարեկ,  
 Այդ յեղաւ,  
 Այդ յէ շաւ .

Այդ եղանակ շատ գեշ է,  
 Անուշիկ յէ, սակն անկ է,  
 Կեցիր քովդ եղեմ գամ,  
 Նոր եղանակ փեզ ցոյց սամ : »

Ըստ եկաւ . բայց երգի եղանակ  
 Յոյց սարս ջունէր երբեք նրպասակ :  
 Զի երգիչ չէր, այդ արեկը մտադիր էր  
 Խեղդել ուսել : Եւ իրաւ ալ կը խեղդէր :

Շողոփորբներ նախ կը գովեն,  
 Յետոյ կ'ուսեն, կը բրզբփսեն :

Վ. Ա. ՀԱՆՆ Վ. Բ. Գ. Տ. Մ. Ի. Ա. ՍԵՆԱՆ

ԵՐԿՈՒ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐ

Հին ատենի մեծատուն մը ծառայի մը պէտք ունենալով, մունետիկ հանել տուաւ, որպէս զի իրեն ծառայելու փափաքող անձերը ներկայանան :

Մունետիկը, շատ անգիր պատելէ յետոյ գնաց հեռաւոր գիւղ մը, ուր երկու հոգի տրամադրութիւն

յայտնեցին մեծատունին առաջարկը ընդունելու: Երկուքն ալ մունեախիկին ըսին թէ պատրաստ են իրեն հետեւելու:

— Իմ տէրս, առարկեց մունեախիկը, միայն մէկ ծառայի պէտք ունի, այնպէս որ ձեր երկուքէն մէկը պարագ պտեղը այսքան երկար ճամշորդութիւն մը ըրած պիտի ըլլայ:

Մարդոցմէն մէկը որ շողոքորթ էր, մտածեց թէ մեծատունը շողոքորթելով պիտի կրնայ ընդունուիլ, և՛

— Հոգ չէ, ըսաւ, ես իմ մասիս վստահ եմ որ պիտի ընդունուիմ:

Միւսը՝ միմիայն իր խելացութեան կ'ապաւինէր.

— Վնաս չունի, աւելցուց, եթէ ես չընդունուիմ.

Թերեւս այդ կողմերը ուրիշ գործ մը գտնելով բազդս կը շակեմ:

Մունեախիկը, տեսնելով որ ամէն բանի պատրաստ ու անձնավստահ մարդիկ են, երկուքն ալ առաւ և հետը տարաւ:

\* \* \*

Մեծատունը շատ մտայի և արդար մարդ մըն էր: Երբոր ծառաները իրեն ներկայացան, խոյն հասկցաւ թէ անոնցմէ որն է խելացին, և ըսաւ անոր.

— Վստահ ես թէ պիտի կրնաս զիս գոհացնել:

— Տէր իմ, պատասխանեց խելացին, իրաւ է որ մեծ արժանիք մը չունիմ, բայց ձեռքէս եկածին չափ պիտի աշխատիմ որ գո՛հ մնաք:

— Լաւ, ըսաւ մեծատունը:

Յետոյ, շողոքորթին դառնալով հարցուց.

— Իսկ դո՞ւն:

— Արդարամի՛ս Տէր, պատասխանեց շողոքորթը,

ձեր գլխաքառութիւնը, ձեր հաղարաւոր ձիրքերը, ձեր կարողութիւնը, բարեսիրութիւնը վաղուց ծանօթ են ինձի: Գիտեմ թէ ամէն օր հարիւրաւոր թշուառներ կը կերակրէք, ինչ որ սուջին քաղաքացին դարձուցած է ձեզ՝ այս քաղաքին մէջ: Ձեր ազնիւ բնաւորութիւնը, ձեր բարի և գլխաւստ սիրտը գիտեմ, հարկաւ ձեր հանձարեղ միտքը կրնայ հասկնալ թէ ինձի պէս ուսմունք տեսած սղասաւոր մը պիտի կրնայ գոհացուցիչ կերպով ծառայել, հլու գերի մը ըլլալ ձեր կամքին, և վայրկենապէս գործադրել ձեր բոլոր հրամանները:

Մեծատունը՝ որ լուս մտիկ ըրած էր.

— Այս կողմերը եկած ես, զիս կը ճանչնայի՛ր, հարցուց:

— Ո՛չ, գլխած Տէր, պատասխանեց շողոքորթը, այս կողմերը չեմ եկած և տակաւին նոր լսելու բարեսխախտութիւնը կ'ունենամ ձեր նշանաւոր անունը:

— Ուրեմն ինչէ՛ն զիտէիր թէ ես գլխած, աղքատասէր, առաքինի և հանձարեղ մարդ եմ, և թէ ազնիւ բնաւորութիւն մը ու բարի սիրտ մը ունիմ:

Շողոքորթը շփոթեցաւ, և, իր ստախօսութեան մէջ բռնուած, չկրցաւ պատասխան մը տալ:

— Շո՛ւտ, ելիր դնա ասկէ, պոռաց մեծատունը, ես պէտք չունիմ քեզի պէս անպիտանի մը, դնա՛ ուրիշ տեղ ծախէ քու շողոքորթութիւնդ: Եթէ իմ մասիս՝ նոյն իսկ ինձի՛ սուտ կը խօսիս, ուրեմն ի՛նչ պիտի ընես, երբ ուրիշներու նկատմամբ ինձի տեղեկութիւն տալու հարկին մէջ գտնուիս:

Եւ խելացի սպասաւորը իր ծառայութեան առնելով, առատապէս վարձատրեց զայն:

### 10. ԳԷՇ ԸՆԿԵՐԱԿՑՈՒՔԻ ԻՆՆԵՐ

#### ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

— Աւելի լաւ է աշխարհի մէջ միմակ մնալ, քան թէ գէօ ընկերներ ունենալ :  
(ԼՈՐՏ ՔՕԼԻՆԿՎՈՒՏ)

— Մեր երջանկութիւնը ու պատիւը կախում ունին մեր ընտրած ընկերներէն. եթէ անոնք գէօ են՝ մեր կորուստին պատճառ պիտի ըլլան. եթէ լաւ են՝ մեզ պիտի բարձրացնեն :  
(ՍԸՐ ՃՈՆ ԼԸՊՊՕՔ)

— Մարդ երբ գէօ ընկերներ ունի, կա՛մ անոնց գոհը կ'ըլլայ, եւ կա՛մ անոնց ցնամը :  
\*\*\*

— Աշխարհի ամէնէն անպիտան եւ ստոյն մարդիկը անոնք են որոնք գէօ ընկերներ ունին :  
(ՄՕՆՔԷՍՔԻՏՕ)

#### ԳԱՅԼՆ ՈՒ ԱՂՈՒՔՕՐ

Շատ ցուրտ կ'ընէր այն տարին. գիւղին գետը սառած էր, և գիւղացիները ամէն օր սառուոյցին վրայ ծակ մը կը բանային ջուր առնելու համար : Գիշերները, ջուրին երեսը կրկին սառ կը կապէր ու ծակը կը գոցուէր :

Օր մը աղուէսը ըսաւ գայլին .

— Գայլ եղբայր, ձուկ կը սիրե՞ս :

— Կը հարցնե՞ս, պատասխանեց շատակեր գայլը :

— Նայէ՛, ըսաւ աղուէսը՝ սառուոյցին վրայ բացուած ծակը ցուցնելով, ամէն գիշեր ձուկերը այդ ծակին մօտ կուգան օդ առնելու. այս գիշեր, երբ գիւղացիները քնանան, հոն կ'երթանք և առատ ձուկ կ'որսանք :

Գիշերը՝ երկուքն ալ ծակին քովն էին :

— Գայլ եղբայր, ըսաւ աղուէսը, ահաւաստիկ դայլ մը և չուան մը : Դոյլը պոչիդ պիտի կապեմ և ծակէն վար պիտի իջեցնեմ. դուն ալ ծակին բերանը նստելով, պոչդ ջուրին մէջ պիտի խօթես որպէս զի դոյլը վար իջնէ, այսպէսով, բոլոր ձուկերը դոյլին մէջ պիտի իջնան, ճիշդ ինչպէս որ մուկերը ականատի մը մէջ կ'իջնան : Երբոր դոյլը լաւ մը լինայ, ան ատեն վեր կը քաշենք ու ձուկերը կը լափենք :

Գայլը գործադրեց աղուէսին պատուէրները ու նստաւ ծակին բերանը :

Իսկ աղուէսը ուռննիի մը ոստերուն տակ պառկեցաւ, ինքզինքը պատապարեց հողին դէմ, և դաղատուկ սկսաւ խնդալ գայլին պարզամտութեանը վրայ : Ժամերը կ'անցնէին :

— Կը մտիմ կոր, կը պտտար դայլը :

— Տեղէ՛դ մի շարժիր, կ'ըսէր աղուէսը, պզտիկ շարժում մը ընելուդ պէս ձուկերը կը վախնան ու կը փախչին :

Եւ մինչդեռ ժամերը կ'անցնէին, ջուրը կամաց կամաց կը սառէր, և թակարդի մը պէս կը սեղմէր գայլին պոչը :

Արշալոյսը ծագելու մօտ էր, երբ գայլը ըսաւ աղուէսին .

— Աղուէ՛ս բարեկամ, ինձի անանկ կուգայ թէ որսերնիս շատ յաջող է. պոչս խաղցունել կուզեմ ու չեմ կրնար, այնչա՛փ ձուկ կայ դոյլին մէջ :

— Քիչ մըն ալ կեցի, բարեկամս, ըսաւ ազուէսը,  
և ան ատեն աւելի յաջող պիտի ըլլայ մեր որսը:

Քիչ ետքը ծակին բերանը ամբողջովին սառոյց  
կապած էր, և հետևաբար գայլին պոչն ալ լաւ մը  
բռնուած էր: Չորս դին սկսած էր լուսաւորուիլ, գիւ-  
ղը արթնցած էր: Կրնար ըլլալ որ մարդիկ վրայ հասնէին:

— Ազուէս բարեկամ, ըսաւ գայլը, եկուք օգնէ  
ինձի որ սա դայլը դուրս հանեմ. շուտ ըրէ, հիմա ո՛ր  
որ է մարդիկ կը հասնին, հաղիւ փախչելու ժամանակ  
ունինք:

— Ես ալ անանկ կը կարծեմ, ըսաւ ազուէսը, և  
կրցածին չափ շուտ դէպի անտառը վազել սկսաւ, սա-  
ռոյցին վրայ գայլը մինակ ձգելով:

Գայլը ի դուր փորձեց պոչը աղատել: Սառոյցը  
շատ ամուր էր, և գայլին ուժէն չա՛տ աւելի զօրաւոր  
ուժ մը պէտք էր գայն կոտորելու համար: Շատ չան-  
ցած, գիւղացիք երեւան ելան, և գայլը տեսնելով  
վրան յարձակեցան ու սպաննեցին:

Միշտ լաւ ընտրեցէք ձեր ընկերները. եթէ գէշ  
ընտրէք, ուշ կամ կանուխ ո՛ր է է կերպով մը կը վնաս-  
ուիք անոնց երեսէն:

**ԵԿԲԱՆԻԿՆ ՈՒ ՃՆՃՂՈՒԿՆԵՐԸ**

Ճնճղուկներուն ակնյիսան,  
Որք հմեմտներուն ցարդ կոչուան,  
Հողագործ մը ճարտաս,  
Լարեց գաղտնի ականաս:  
Հետեւեալ օրն, — ի՛նչ աւար —

Ճնճղուկներ թիով ըսուաւ  
Յակցին մէջ էին ինկեր...  
Բայց ակնեց հե՛տ, խօջ ընկեր,  
Բրունըներ էր այն առան  
Եկխակի մ'ալ ուսուսուն:  
— «Խընացէ ինձ, իրա՛ւ որ  
ձրջեց, ես չեմ մեղաւոր,  
«Եւ օգտակար ալ եմ շատ,  
«Ձի ցարդ կոչուա՛մ ապիրատ  
«Բուսակեր միջասկերուն...  
«Չայնս երգս ալ եմ սիրուն,  
«Դաշին, ձորին, պուրակին  
«Մէկ գարդն եմ եւ քանկագին,  
«Թո՛ղ որ ապրի՛մ...:»  
Մարդն քսաւ,  
«Չիրտեղ ամէն գիտե՛մ շա՛,  
«Բայց ճնճղուկներուն ինչո՞ւ  
«Ընկերակից եղար դու:  
«Գողին ընկերն անքսեղ  
«Կը հաւարուի ինքն ալ գող...  
«Արդ դու ալ սուսեց ներման  
«Պիտի մտնիս ակնեց նեւն:

**Ա.Լ.ՓԱՍԼԱՆ**

Բաւերու նշանակութիւնը. — Ականաս՝ մուկ կամ  
կարդ մը ուրիշ կենդանիներ բռնելու յատուկ գործիք:  
Սոււար մեծ: Ուսուսուն՝ ցառկրտոյ: Անսոյ՝ յայտնի:

Գ Ի Ն Ի Ի Ն Շ Ի Շ Ը

Մեր գիւղին տօնախմբութեան իրիկունն էր : Ամէն կողմ ուրախութիւն կը տիրէր : Երիտասարդները կը պարէին, ուրախ երգեր կը բարձրանային շարունակ : Ընտանիքներ կ'երթեւեկէին լուսազարդուած խանութներու առջեւէն, ու մարդիկ կը խաղային և կա՛մ գինեւտուններու մէջ կ'արբենային : Իսկ տղաքը կը զիտէին այդ ամէնը ու կը զուարճանային :

Ա.յն ատեն տասը տարեկան էի :

— Եկ՛ւր, ըսաւ դպրոցական ընկեր մը որ իզմէ շատ մեծ էր և որ գէշ տղայ մը ճանչցուած էր դպրոցին մէջ :

Իրեն հետեւեցայ :

Երկուքս մէկ գինետան պարտէզը մտանք, և անկէ ալ անցանք պղտիկ բակ մը ուր՝ գինիով լեցուած շիշեր կը գտնուէին : Ընկերս շիշ մը գողցաւ ու փախանք միասին : Երբ մօտակայ ցանկապատը հասանք, ընկերս մէջտեղ հանեց շիշը ու խմեցինք մէջի գինին : Յետոյ, շիշը անկիւն մը նետելով կրկին գիւղ վերադարձանք :

Ա.յն իրիկունը սիրտս լեցուած տուն գացի. գլուխս կը ցաւէր . չկրցայ քնանալ :

Յաջորդ օրը երբ զանգակին ձայնով դպրոց դացինք, ինծի անանկ կը թուէր թէ յանցանքս գրուած է ճակտիս վրայ, և թէ ամէն մարդ պիտի կարգայ :

Տղաքը բակին մէջ բոլորակ մը կազմած էին, բայց չէին խաղար : Ամէնքն ալ բան մը կը զիտէին : Մեր դաստիարակը իր տեղը նստած էր ու մեզ կը զննէր : Քիչ մը աւելի մօտեցայ և սեղանին վրայ տեսայ այն

չիշը զոր նախօրոյ իրիկունը ցանկապատին մէջ թողած էինք : Գինեպանը տեսեր էր մեր գողութիւնը, գտեր էր շիշը ու գացեր ամէն բան պատմեր էր մեր դաստիարակին :

\* \* \*

Յանկարծ դաստիարակնիս հարցուց .

— Երէկ ո՞վ գողցաւ այս շիշը :

Իսկոյն, բոլոր տղաքն ալ, սիրան իմ ընկերոջս նայիլ, որովհետեւ չէին կարծեր որ անկէ դատ մէկը կրնայ այդ աստիճան գէշ դործ մը ընել :

Ընկերս առաջ անցաւ և ըսաւ .

— Այո՛, ևս էի, բայց մի՛նակս չէի, «ան» ալ ինծի հետ էր :

Եւ մատովը զիս ցոյց տուաւ :

— Ա՛հ, ըսին ընկերներս, մինչդեռ ևս ամօթէս կասկարմիր կարած էի ու կը փախաքէի գետնին տակը անցնիլ :

Դաստիարակնիս շատ բարի էր և զիս ալ կը սիրէր : Չուզեց զիս հրապարակաւ հարցաքննել . տխուր դէմքով մը զիտեց զիս և տղոց հրաման ըրաւ որ դատարան մտնեն :

Դասի ժամերը յաջորդարար անցան, բայց դաստիարակնիս բնաւ գողութեան խօսքը չըրաւ : Իրիկունը միայն, մինչդեռ տղաքը կ'արձակուէին, ինծի և ընկերոջս պատուիրեց որ չմեկնինք :

Երբ զիս կանչեց, լալով խոստովանեցայ ամէն բան :

— Ա՛խ, ըսի իրեն, տունը բան մը մի՛ ըսէք . եթէ հայրս իմանայ, եթէ մայրս իմանայ, իրենք որ հակառակ իրենց տղապատութեան, այնքան պատուաւոր են . . . ևս իմ ընտանիքս անպատուեցի, ներեցէ՛ք, ներեցէ՛ք ինծի :

— Գնա՛, ըսաւ դաստիարակս, արդէն իսկ պէտք եղածէն աւելի պատժուեցար . դնա՛, և բնաւ մի՛ մտ-

Նոր թէ գէշ ընկերակցութիւնները տարրեր հետեւանք մը չեն ունենար երբէք :

Տունէն բնաւ չգիտցան այս դէպքը : Դաստիարակութեամբ առաջուան պէս շարունակեց զիս սիրել, բայց չիշը այդ անիծեալ գինիի շիշը երբէք չի մոռցայ, մինչեւ այսօր տակաւին միտքս է ան, և քանի անոր վրայ կը մտածեմ, այնքան կ'օրհնեմ դաստիարակս որ մեռած է հիմա :

Չգիտցայ բնաւ թէ ընկերոջս ի՞նչ պատիժ տուին : Արդէն քիչ ետքը մեկնեցաւ դպրոցէն : Տարիներ վերջ միայն իմացայ թէ շատ ծանր յանցանքներու համար դատաւարուեր ու թիարան զրկուեր է : Մեղք որ չէր ուզած օգտուիլ չիշին դասէն :



### Յ Ա Ն Կ

#### ՅԱՌԱՋԱԲԱՆ

#### Ա. Մ Ա Ս

#### Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Բ Դ Ա Ս Ե Բ

1. —	ԿԱՏԱՐԵԱԼ ՄՍԸԴԸ	
	***. — Յորեկի հասիկը . . . . .	17
	Թշխախնցիւն. — Մրջիւններ (Որն-բ.) . . . . .	20
	Վահրաւ. — Խաչասուր Պարսիզպանեան . . . . .	21
2. —	ԿԵԱՆՔԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ	
	Շ. Վակներ. — Կեանքի նպասակներ . . . . .	23
	Աշխատչան. — Ասուծոյ դասասանը (Որն-բ.) . . . . .	25
	Վահրաւ. — Նիկողոս Պալեան . . . . .	27
3. —	ԽԻՂՃԸ	
	Սրկեսայ. — Նաւավարը . . . . .	29
	Ա. Գ. Փանոսեան. — Խղնի խայք (Որն-բ.) . . . . .	31
	Կասթոն Բառի. — Կորսուած պայուսակը . . . . .	34
4. —	ԻՏԷԱԼԸ	
	***. — Անտոանալի դաս մը . . . . .	36
	Լ. Սեդրոսեան. — Լեռները (Որն-բ.) . . . . .	39
	Բրոք. Յ. Ճեմիկեան. — Շոնին . . . . .	40
5. —	ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԱՐԳԸ	
	Պանչառ. — Յակոբի հունձը . . . . .	42
	Աշխատչան. — Ժամանակը (Որն-բ.) . . . . .	44
	Ուիլերս Թեյր. — Կօշկակար Ֆրոյք . . . . .	45

6. — **ԸՆՏԱՆԻՔ**  
 Գ. Պուպի.— Բարի բնանիւք մը . . . . . 47  
 Կ. Ոսկեան.— Իրիկուն (Որն-բ.) . . . . . 49  
 Յ. Գազանձեան.— Յոպոպ բռնունք . . . . . 50

**Բ. Մ Ա Ս**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

1. — **ԱՍՏՈՒԱԾ**  
 Ֆեկըրոն.— Ասուծոյ ձեռքը . . . . . 53  
 Ա. Գ. Փանոսեան.— Ասուած (Որն-բ.) . . . . . 55  
 Քննասեր.— Ասուծոյ պաշտումը . . . . . 57

2. — **ԿՐՕՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՅԻ**  
 Մուշեղ վարդապետ.— Դազաղին համար . . . . . 58  
 Ա. Յարութիւնեան.— Մուր (Որն-բ.) . . . . . 60  
 Ռ. Յ. Պերպերեան.— Եկեղեցասիրութիւն . . . . . 61

3. — **ՕՐԷՆՔ**  
 \* \* \* .— Մարկոսին պատիժը . . . . . 62  
 Աշխատան.— Գողերը (Որն-բ.) . . . . . 64  
 \* \* \* .— Ընկուզեցիին ճիւղերը . . . . . 66

4. — **ԾՆԱՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ**  
 Մրտնի Տիւար.— Մայրս . . . . . 68  
 Ա. Փանոսեան.— Մայիսի ճինգին (Որն-բ.) . . . . . 70  
 Սիպի.— Կաղանդի նուէրը . . . . . 72

5. — **ԳԹԱՍՐՏՈՒԹԻՒՆ**  
 \* \* \* .— Հիւանդ մուծիքը . . . . . 75  
 Առնո.— Ծնունդի վարդը (Որն-բ.) . . . . . 77  
 Լ. Պարժուս.— Այգեգործները . . . . . 78

6. — **ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ**  
 \* \* \* .— Դեղձերը . . . . . 79  
 Ա. Փանոսեան.— Կոյր ծերունին (Որն-բ.) . . . . . 81  
 Քասիւ.— Տղոց տօները . . . . . 83

7. — **ԻՐԵՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**  
 Թուրկեկեզ.— Մուրացիկը . . . . . 85  
 Մ. Աճեմեան.— Աւագ Ուրբաթ (Որն-բ.) . . . . . 87  
 Վ. Փ.— Հացի կտորը . . . . . 88

8. — **ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ**  
 Տիկին Մ. Սյանեան.— Մանիշակի քաղաքը . . . . . 89  
 Եւտերի.— Երախտագէտ աղջիկը (Որն-բ.) . . . . . 91  
 Պեռանձե.— Ծերացած ձին . . . . . 93

9. — **ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ**  
 \* \* \* .— Քաջասիրտ եղբայրը . . . . . 95  
 Աշխատան.— ձննդուն կն բազէն (Որն-բ.) . . . . . 97  
 Լ. Հախի.— Անձեղիք Բառան . . . . . 99

10. — **ՉՈՀՈՂՈՒԹԻՒՆ**  
 Մուշարունի.— Թռչունին բոյնը . . . . . 101  
 \* \* \* .— Անուշիկ խնձորը (Որն-բ.) . . . . . 103  
 Ե. Մեկիլ.— Մուսաթը . . . . . 105

**Գ. Մ Ա Ս**

**ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՍԼ**

1. — **ԿԱՄՔ**  
 Թ. Պըրիթ.— Ինչպէ՞ս յիսուն լեզու սորվեցայ 107

2. — **ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ**  
 \* \* \* .— Խունչայրը . . . . . 110

Աղիաստան.— Համբերութիւն (Որն-բ.) . . . 112  
 \* \* \*.— Պեռնար Բաղիսի . . . . . 113

3. — ԱՇԽՍՏՈՒԹԻՒՆ  
 Մ. Առնօ.— Անձամօթին խրատք . . . . . 117  
 Մ. Ուղուրեան.— Դաւեթրուն մեջ (Որն-բ.) . 120  
 Վ. Յարութիւնեան.— Գիւղացիները . . . . 121

4. — ՅԱՐՍՏԵՒՈՒԹԻՒՆ  
 \* \* \*.— Երկու երկարագործները . . . . . 122

5. — ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԶԱՐԳՍՅՈՒՄ  
 \* \* \*.— Նաւակին քիերը . . . . . 124  
 Աղիաստան.— Նաւակներ (Որն-բ.) . . . . 126  
 \* \* \*.— Հարսութիւն եւ զարգացում . . . 128

6. — ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ  
 Կեակեր.— Ամինքաս . . . . . 130  
 Ա. Գ. Փանոսեան.— Շուշանի բոլոր (Որն-բ.) 132  
 Գ. Զօհրայ.— Կոստելէն ետքը . . . . . 132

7. — ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ  
 Տ. Ա.— Նուպար փառա . . . . . 134  
 Բ. Յ. Վայս.— Մանիշակը (Որն-բ.) . . . 136  
 \* \* \*.— Վանառականները . . . . . 136

8. — ԲԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ  
 \* \* \*.— Գեղջուկ Շաւարք . . . . . 139  
 Աղիաստան.— Հերմիներ (Որն-բ.) . . . . 141  
 Պիրուրեան.— Ծառն ու աղջիկը . . . . . 143

9. — ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ  
 \* \* \*.— Բժիշկին խրատները . . . . . 145  
 Աղիաստան.— Մաքրուած արքը (Որն-բ.) . . 149  
 \* \* \*.— Անխոհեմութեան հետեւանք . . . 150

10. — ԶԲՕՍԱՆՔ ԵՒ ՀԱՃՈՅՔ  
 \* \* \*.— Զբօսանք եւ հանգիստ . . . . . 152  
 Յ. Բուրիկյ.— Գեղածիծաղ մանկութիւն 153  
 Յրանտա Բոքե.— Սոխակին երգը . . . . . 155

Գ. Մ Ա Ս

Ի՞ՆՉ ՊԷՏՔ ՉԷ ԸԼԼԱԼ

1. — ԾՈՒԼՈՒԹԻՒՆ  
 Կեօթե.— Ս. Պետրոսի կենսաները . . . . 157  
 Աղիաստան.— Ծոլը (Որն-բ.) . . . . . 159  
 \* \* \*.— Չարագործ թովմաս . . . . . 161

2. — ԶԱՐՈՒԹԻՒՆ  
 Կ. ՏՄԱՆԱՆԳԻՍ.— Հացի սնուկը . . . . . 164  
 Վարդան Առակագիր.— Չարին պատիժը . . 167  
 Ծ.— Ածուխի կտորները . . . . . 167

3. — ՄՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ  
 \* \* \*.— ձգարսախօսն ու ստախօսը . . . . . 169  
 \* \* \*.— Ստախօս հովիւր (Որն-բ.) . . . . . 172  
 \* \* \*.— Յակոբի ոսկին . . . . . 173

4. — ՆԱԽԱՆՉ  
 Յ. Բասի.— Լաւ օրինակները . . . . . 175  
 Ա. Փանոսեան.— Օձն ու կայծուղիկը (Որն-բ.) 177  
 \* \* \*.— Երկու նախանձները . . . . . 178

5. — ԿԵՂԾԻՔ  
 Գ. Զօհրայ.— Կեղծ բարեբարը . . . . . 179  
 Աղիաստան.— Ագոտաին փետուրները (Որն-բ.) 181  
 Ա. Ա.— Հուլիին անօրները . . . . . 183



6. — **ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ**  
Լանդնե.— Երկու դրացիները . . . . . 184  
Վարդան առակագիր.— Եզ ու ձի (Ողն-բ.) . 187  
Մատի Բրիգիմսա.— Հարսին արցունքները 188
7. — **ՄՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ**  
Սիպիլ.— Կեղծ մարգրիտներ . . . . . 191  
Ս. Փանոսեան.— Մուկն ու խուկեր . . . 193  
Յ. Պ. Սեյ.— Երկու ժամացոյցները . . . . 194
8. — **ԾԱՂՐԱՆՔ**  
\* \* \*.— Չկնորսին վրեժը . . . . . 196  
Յ. Պարսյղ.— Պատիժը (Ողն-բ.) . . . . . 198  
\* \* \*.— Մարկոս եւ Արշալիր . . . . . 199
9. — **ՇՈՂՈՒԹՈՒԹՈՒԹԻՒՆ**  
Յրանգիւն.— Յաբանը . . . . . 202  
\* \* \*.— Կասու եւ սարեակ (Ողն-բ.) . . . 204  
\* \* \*.— Երկու սպասաւորներ . . . . . 205
10. — **ԳԻՇ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ**  
Թարզւ.— Գալլն ու աղուկար . . . . . 208  
Արիաստան.— Եկեանիկն ու ճննդուկները 210  
(Ողն-բ.)  
\* \* \*.— Գիւնիին շիւր . . . . . 212
-

2013 3290-3292

« Ազգային գրադարան



NL0060705

« Ազգային գրադարան



NL0060704

« Ազգային գրադարան



NL0060703

